

ՎԱՉԵ Ծ. ՎՐԴ. ԻԳՆԱՏՈՍՅԱՆ

ՄԵՐ Ս. ՊԱՏԱՐԱԳԸ

ԶՈՆ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ  
ՏԵՐ ՏԵՐ ԳԱՐԵԳԻՆ Ա  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ,

որ առաջին անգամ սովորեցրեց ինձ  
Սուրբ Պատարագի խորհրդի և քաղցրության  
մասին

Մեծի Տանն Կիլիկիո ղարեվանքում  
(Անթիլիաս-Լիբանան)

Որդիական սիրով մատչիմ ի համբոյր  
Զերդ Օձեալ Ս. Աջոյն  
Վաչե Ծայրագոյն Վարդապետ Իգնատիոսյան

## ԱՌԱՋԱԲԱՆ

Ընթերցողի սեղանին ենք դնում մեր երրորդ ուսումնասիրությունը՝ «Մեր Սուրբ Պատարագը» խորագրով, որով դարձյալ պիտի պատասխանենք մեզ հասցեագրված հարցերին. մեր մատուցած Սուրբ Պատարագը աստվածաշնչյա՞ն է, թե՞ հակասուրբգրային:

Ինչպես գիտենք Եկեղեցու ընդհանուր պատմությունից, ԺԶ դարից սկսած, Լյուծերի Եկեղեցու Բարեկարգության շարժմամբ, Սուրբ Պատարագի խորհուրդը նույնպես բուռն վիճաբանությունների նյութ է հանդիսացել և է մինչև այսօր մի շարք Եկեղեցիների կողմից:

Փորձել ենք հնարավորին չափ պարզ և հստակ մեկնաբանություն տալ Սուրբ Պատարագին և նորից մեր բոլոր փաստերը միայն Սուրբ Գրքի վրա հիմնելով՝ ապացուցել, որ Սուրբ Պատարագ մատուցելը աստվածաշնչյան է:

Այս ձևով պատրաստեցինք նախ այն պատճառով, որ մի շարք Եկեղեցիներ, ինչպես ասացինք, Աստվածաշնչից զատ այլ փաստեր են ընդունում, և միևնույն ժամանակ ցույց տալու համար, որ Սուրբ Պատարագ մատուցելը հատկորեն պատվիրված է մեզ Սուրբ Գրքով:

Ինչպես գիտենք, որպեսզի ուսումնասիրությունը գիտական արժեք ունենա, անհրաժեշտ է, որ ներկայացված բոլոր փաստերն անպայման Աստվածաշնչի վրա հիմնված լինեն:

Պետք է ասել, որ միայն այս մարզում շատ հետ ենք մնացել մյուս Եկեղեցիներից՝ մասնավորապես Կաթողիկե Եկեղեցուց, որն ամեն տարի, առանց չափազանցելու, միայն Սուրբ Պատարագի մասին մեկից ավել հատորներ է լույս ընծայում:

Սույն գիրքը բաժանել ենք չորս հիմնական մասերի.

Առաջին մասում խոսում ենք Պատարագի գաղափարի շուրջ՝ ազգերի և հրեա ցեղի մոտ: Մովսիսական Զատիկի տոնի, գառնակերությունից և այլ պատարագների մասին:

Երկրորդ մասում՝ Զատիկի տոնի և թվի շուրջ՝ ըստ Ավետարանների, և Քրիստոսի պատարագվելու մասին:

Երրորդ մասում՝ քրիստոնեության սկզբնական շրջանում Սուրբ Պատարագի շուրջ տիրող հասկացողության մասին և աստվածաշնչյան փաստերով ապացուցում ենք, որ այս խորհուրդը, սուրբգրային լինելով, շարունակվել և հասել է մինչև մեր օրերը և պիտի մատուցվի, անշուշտ, մինչև Քրիստոսի երկրորդ գալուստը:

Չորրորդ մասում բացատրում ենք Սուրբ Պատարագի արարողության խորհուրդը:

Հույս ունենք, որ մեր այս գիրքն էլ, իր նպատակին հասնելով, պիտի լուսաբանի հավատացյալ և բարեպաշտ ժողովրդին, ինչպես եղել է մեր նախորդ երկու գրքերի պարագայում: Սրա ապացույցն այն է, որ ամեն կողմից, բարձրաստիճան եկեղեցականներից մինչև ամենահասարակ հավատացյալը, շտապել էին իրենց գոհունակությունը, շնորհավորանքը և գնահատությունը հայտնել մեզ: Բացի այդ, նաև գրախոսականներ գրվեցին զանազան օրաթերթերում\*:

Այս առիթով հրապարակավ հայտնում ենք մեր անկեղծ և խորին շնորհակալությունները բոլոր նրանց ովքեր բանիվ և գործով օգտակար եղան մեր այս գրքի հրատարակմանն ու տարածմանը:

Անշուշտ, մեր ուրախությունը նաև ձեր ուրախությունն է, քանի որ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ուղղափառ վարդապետությունն է, որ կարդացվում և տարածվում է:

Մարտի, 3 օգոստոսի. 1979  
Վաչե Ծ. Վրդ. Իգնատիոսյան

\* Տե՛ս «Յառաջ» (Փարիզ), 22 փետր. 1979, թիվ 14322, «Ժամանակ» (Կ. Պոլիս), 13 մարտ 1979, թիվ 645.839, 15 մայիս 1979, թիվ 698.899 և այլն:

# ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

## ՊԱՏԱՐԱԳԻ ԳԱՂԱՓԱՐԸ

### 1. Ի՞ՆՉ Է ՊԱՏԱՐԱԳԸ

Բարեխոսությունը Սրբոց գրքում<sup>1</sup> արդեն տեսանք, թե ինչպես է բարեպաշտ հավատացյալը եկեղեցում, տոնախմբությունների ընթացքում հոգեպարար շարականների և աղոթքների միջից հոգևոր հարաբերության, հաղորդության մեջ մտնում երկնքի պատվական Սրբերի հետ և նրանց բարեխոսությունը հայցելով՝ մեղքերի թողություն և գործերի հաջողություն է խնդրում Աստուծոց: Իսկ Սուրբ և Անմահ Պատարագի մեջ հավատացյալը, տեսանելի և շոշափելի Քրիստոսի Մարմնի և Արյան հաղորդությանը, ուղղակի միանում է իր Արարիչ Աստծո հետ. «Նա, ով իմ Մարմինն է ուտում և իմ Արյունն է խմում, իմ մեջ է բնակվում, և ես՝ նրա մեջ» (Հովհաննես Զ 57):

Արդարև, սա սքանչելի և անբացատրելի խորհուրդ է, ինչպես ԴԳ դարի սկզբում Խաչատուր վարդապետ Տարոնեցին երգել է. «Խորհուրդ խորին, անհաս, անսկիզբ...»: Թարգմանություն. խորհուրդ խորին, մարդկային մտքով անհասանելի... Ինչ որ տեսնում ենք մարդկային հավատի աչքերով և պիտի ջանանք հասկանալի դարձնել միայն այդ գիրքով:

Սուրբ Պատարագի խորհուրդը հաստատվեց հենց մեր Տեր Հիսուս Քրիստոսի կողմից մատնության գիշերը: Սուրբ Պատարագը մատուցվում է նրա խաչելության և մահվան հիշատակի ու միևնույն ժամանակ մեզ՝ բարեպաշտ հավատացյալներիս, հոգևոր և աստվածային սնունդ տալու համար, ինչպես մեր Տերն է ասում. «Եթե մարդու Որդու Մարմինը չուտեք և նրա Արյունը չխմեք, ձեր անձերի մեջ կյանք չէք ունենա» (Հովհաննես Զ 54):

<sup>1</sup> Վաչե ծայրագույն վարդապետ Իգնատիոսյան, Բարեխոսություն Սրբոց, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1978, Երևան, Մոմ, 1993.

Նախ՝ պետք է հասկանանք, թե ինչ է Պատարագը: «Պատարագ» բառը զանազան իմաստներ ունի՝ զոհ, ընծա, նվեր և այլն: Իսկ այստեղ՝ մեզ ծանոթ իմաստով նշանակում է Քրիստոսի Մարմնի և Արյան խորհուրդը և նրա իրականացումը արարողության ընթացքում:

Պետք է ասել, որ զոհի, պատարագի ընծայումը, նվիրումը մարդկային պատմության սկզբից ի վեր գոյություն ունեցել է բոլոր ազգերի մեջ: Այդ զոհը կամ ընծան՝ գառնուկներ, նոխազներ, ինչպես նաև ուտեստեղեն, գուլյք, զարդեղեններ և այլն, մատուցում էին իրենց աստվածներին: Այս զոհագործությունը կարծում էին, թե պիտի սիրաշահեն իրենց աստվածների բարյացակամությունը և պիտի մեղմացնեն նրանց ահավոր բարկությունը: Ուրեմն՝ ավելի վախի զգացումով էին կատարում, քան՝ երախտագիտությունը:

### 2. ՊԱՏԱՐԱԳԸ ՀԻՆ ՈՒՆՏՈՒՄ

Զարմանալի է, բայց Ծննդոց գրքում մարդկային ընկերության պատմության թատերաբեմը բացվում է պատարագի դեպքով՝ Կայենի և Աբելի մատուցած պատարագով: Կայենը և Աբելը Ադամի զավակներն էին. Կայենը երկրագործ էր, իսկ Աբելը՝ ոչխարների հովիվ: Սրանք մի օր Աստծուն պատարագ մատուցել ուզեցին: Կայենը երկրի պտղից ընծա բերեց, իսկ Աբելը՝ իր ոչխարների առաջնեկներից և նրանց պարարտներից: Եվ Աստված Աբելի պատարագն ընդունեց, բայց Կայենին մերժեց: Այդ պատճառով էլ Կայենը, նախանձելով, սպանեց իր եղբորը՝ Աբելին (Ծննդոց Դ 1-10):

Այս պատմության մեջ պետք է նկատի առնենք հետևյալ կետերը.

Ա. Ինչպես ասացինք, մարդկային ընկերության պատմությունը սկսվում է պատարագով և պիտի շարունակվի զանազան պատարագներով: Իր ամբողջականացմանը պիտի հասնի Քրիստոսի Մարմնի մեկ անգամ պատարագվելով և դարձյալ պիտի շարունակվի Քրիստոսի Մարմնի և Արյան միջոցով

ամեն անգամ, երբ մատուցվում է Սուրբ Պատարագը, մինչև Քրիստոսի երկրորդ գալուստը:

Բ. Արդար Աբելի պատարագը պետք է լինի Քրիստոսի պատարագի խորհրդանիշը: Թեպետ Աբելը մեռավ, բայց դեռևս խոսում է Քրիստոսի Արյան նման՝ մեր մատուցած Պատարագներով: Նրանց արդար արյունը պիտի պահանջվի այս մարդկությունից (Մատթեոս ԻԳ 35, Եբրայեցիս ԺԱ 4):

Երկրորդը պիտի լիներ Նոյ նահապետի մատուցած պատարագը: Այսպես, երբ Նոյը ջրհեղեղի պատուհասից ազատվեց և Աստծո հրամանով տապանից դուրս ելավ իր ընտանիքով ու ամեն տեսակ կենդանիներով, այնտեղ՝ Արարատ լեռան վրա, սեղան շինեց Տիրոջ համար, բոլոր մաքուր անասուններից ու թռչուններից վերցրեց և սեղանի վրա ողջակեզներ՝ պատարագներ մատուցեց: Տերը անուշ հոտն առավ ու իր սրտում ասաց. «Այլևս սրանից հետո մարդու համար նորից երկիրը պիտի չանիծեմ» (Մանդեոց Ը 18-22):

Նոյյան պատարագի այս պատմության մեջ նկատի առնելիք կետն այն է, որ, երբ Աստված Նոյին և նրա ընտանիքին ազատեց ջրհեղեղի պատուհասից, վերջինս իր ընտանիքով երախտագիտական պատարագ մատուցեց: Որչա՛փ առավել մենք՝ քրիստոնյաներս, պետք է երախտագիտական Սուրբ Պատարագներ մատուցենք Քրիստոսին՝ Քրիստոսով:

Երրորդը պիտի լիներ Աբրահամի պատարագը: Աստված, Աբրահամին փորձելով, հրամայեց, որ մեկ հատիկ սիրելի որդուն՝ Իսահակին, իբրև զոհպատարագ մատուցի Իրեն: Աբրահամը ցույց տվեց իր հավատի մեծությունը և հնազանդությունն առ Աստված: Եվ այսպիսով, նա պիտի մնա որպես սխրալի օրինակ պատարագի պատմության մեջ աշխարհի սկզբից մինչև հավիտյան:

Սակայն Տիրոջ հրեշտակը արգելեց նրան՝ ասելով. «Աբրահամ, Աբրահամ», և նա ասաց. «Ահա այստեղ եմ», իսկ հրեշտակն ասաց. «Տղային ձեռք մի՛ տուր և նրան ոչինչ մի՛ արա. հիմա իմացա, որ վախենում ես Աստծուց, որովհետև քո մեկ հատիկ որդուն ինձանից չխնայեցիր»: Աբրահամը աչքերը

բարձրացրեց և տեսավ, որ իր հետևում, մացառուտների մեջ եղջյուրներից բռնված մի խոյ կա: Նա գնաց, վերցրեց խոյը և այն իր որդու փոխարեն իբրև պատարագ մատուցեց:

Ուրեմն այսպես, Աբրահամն այս պատարագի շնորհիվ իր դիրքը բարձրացրեց Աստծո առջև և միևնույն ժամանակ արժանի եղավ, որ իր երանքից դուրս եկած՝ Սուրբ Կույս Մարիամի միածին Որդին լինի Աստծո ճշմարիտ Գառը, որը իր վրա պիտի վերցնե աշխարհի մեղքը՝ ճշմարիտ և հավիտենական պատարագ լինելով (Հովհաննես Ա 29, Մատթեոս Ա 21, Եբրայեցիս Թ 12, 28 և Ժ 10):

Այդ է պատճառը, որ, երբ Աստված իր Միածին Որդուն պիտի աշխարհ ուղարկեր՝ մարդկությանը փրկելու, Աբրահամի սերունդն ընտրեց, և այդ ցեղից էլ եկավ Քրիստոսը՝ որպես աշխարհի փրկիչ, քանի որ, երբ Աստված Աբրահամից որպես զոհ պահանջեց նրա մեկ հատիկ և սիրելի որդուն, նա ամենայն հնազանդությամբ ու հավատով Իսահակին տվեց իբրև պատարագ: Եվ որովհետև Իսահակի արյունը չէր կարող վերցնել աշխարհի մեղքը, Նա մի խոյ ցույց տվեց, որ որպես պատարագ պիտի մատուցվեր մինչև Քրիստոսի աշխարհ գալը և պատարագվելը, որը, կարելի է ասել, դարձյալ Աբրահամի որդին պիտի լիներ. իբրև մարդ, անշուշտ: Նա ճշմարիտ Պատարագ պիտի լիներ և պիտի վերցնե աշխարհի մեղքը: Այդ պատճառով էլ Մատթեոսն իր Ավետարանի սկզբում գրում է. «Գիրք ծննդյան Հիսուս Քրիստոսի՝ Դավթի Որդու, Աբրահամի Որդու» (Մատթեոս Ա 1):

### 3. ՄՈՎՍԻՍԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՊԱՏԱՐԱԳԸ

Այսպես, մինչև մեծ և օրենսդիր Մովսես մարգարեի ժամանակը ընտանիքի գլուխն էր, որ կատարում էր քահանայական պաշտոնը՝ զոհեր և պատարագներ մատուցելով, քանի որ այս ուղղությունը պաշտամունք կատարելու համար հաստատված մասնավոր օրենք գոյություն չուներ, ամեն մարդ իր ուզած ձևով և իր փափագած տեղում էր զոհ մատուցում:

Առաջին անգամ Մովսեսն էր, որ զոհաբերության կարգ ու կանոն հաստատեց: Մովսեսի կողմից հաստատված օրենքների համաձայն՝ զոհաբերության տեսակները հետևյալներն են.

#### Ա. Ողջակեզը

Ողջակեզի կենդանին պետք է լիներ մեկ տարեկան արու, անարատ գառնուկ, այծ կամ հորթ, իսկ թռչուններից՝ տատրակ կամ աղավնու ձագ: Զոհի արյունը Ահարոնի որդիները սրսկում էին վկայության խորանի շուրջը: Հանում էին նրա մորթը, լվանում էին փորոտիքը և հետո ոտքերը կտոր-կտոր շարում էին խորանի կրակի վրա: Ամբողջ գիշեր, մինչև առավոտ, կրակի վրա պետք է մնար. քահանան հագնում էր իր քթանե պատմուճանը՝ այրված ողջակեզի մոխիրը սեղանի մոտ դնելու համար, այնուհետև փոխում էր հագուստը, մոխիրը բնակավայրից դուրս, մաքուր տեղ փոխադրում. կրակը միշտ վառված պետք է մնար: Եվ սա անուշահոտ պատարագ էր Տիրոջը (Ղևտացվոց Ա 1-9):

#### Բ. Բարոյական հանցանքի պատարագը

Բարոյական հանցանքի ներման համար մորթված մեկ տարեկան կենդանու ճարպոտ մասերն այրում էին, իսկ մնացած կտորները քահանաներին ուտելու բաժին էին մնում (Ղևտացվոց Զ 1-7):

#### Գ. Խաղաղության, շնորհակալության և այլ ուխտի պատարագներ

Խաղաղության, շնորհակալության և այլ ուխտի կամ կրոնական զգացմունքներին գոհացում տալու նպատակով էլ էին զոհեր մատուցում (Ղևտացվոց Է 1-21):

#### Դ. Մշտնջենավոր պատարագը

Մշտնջենավոր պատարագը ամեն օր մատուցվող մեկ տարեկան երկու գառներն են. մեկը՝ առավոտյան՝ արևածագին, մյուս

գառնուկը՝ երեկոյան՝ արևամուտին. սա անուշահոտ պատարագ էր Տիրոջը: Եվ այս մշտնջենական պատարագի շնորհիվ Աստված այսպես է խոստանում. «Ուր պատարագի մեջ պիտի հանդիպեմ՝ քեզ հետ խոսելու: Եվ այնտեղ Իսրայելի որդիներին պիտի հանդիպեմ, ու խորանը իմ փառքով սուրբ պիտի լինի: Եվ վկայության խորանը ու սեղանը պիտի սրբեմ. Ահարոնին ու նրա որդիներին էլ պիտի սրբեմ, որպեսզի ինձ քահանայություն անեն: Եվ Իսրայելի որդիների մեջ պիտի բնակվեմ ու նրանց Աստված պիտի լինեմ: Եվ պիտի գիտենան, թե նրանց Տեր Աստվածը ես եմ, որ նրանց մեջ բնակվելու համար Եգիպտոսի երկրից հանեցի նրանց: Ես եմ նրանց Տեր Աստվածը» (Ելից ԻԹ 38-46):

#### Ե. Զատիկ-Պասեք կամ Բաղարջակերաց տոնը

Բաղարջակերաց կամ Զատիկի տոնը Իսրայելի որդիների՝ Եգիպտոսից դուրս գալու հիշատակին էր նվիրված: Մովսեսն Աստծո հրամանով հաստատեց Բաղարջակերաց-Պասեքի կամ Զատիկի տոնը՝ իր ցեղին տարեցտարի և սերնդեսերունդ հիշեցնելու, թե ինչպես Աստված նրանց.

ա.- Եգիպտոսից հանեց,

բ.- Գերությունից ազատագրեց,

գ.- Մեծ դատաստանով փրկեց,

դ.- «Եվ ձեզ ինձ ժողովուրդ պիտի անեմ ու ձեզ Աստված պիտի լինեմ» (Ելից Զ 6-7):

Եվ, որովհետև Տերը զորավոր ձեռքով Իսրայելի ժողովրդին Եգիպտոսից դուրս հանեց Ապիպ-Նիսան (Ապրիլ) ամսվա մեջ, այդ պատճառով էլ այն ամիսների առաջինը պիտի լիներ, և այդ ամսվա մեջ պիտի կատարվեր Զատիկական պատարագը: Այդ ամսվա տասին ամեն մեկը գառնուկ պիտի վերցնեք ընտանիքի թվին համապատասխան: Գառնուկը պետք է լիներ մեկ տարեկան, անարատ և արու: Այն պետք է պահեին մինչև ամսվա տասնչորսերորդ օրը, ապա Իսրայելի ժողովի ամբողջ բազմությունը պետք է մորթեր այն երկու երեկոների մեջտեղում (14-15):

Ամսվա տասնչորսը Պատրաստության օր էր, մեր լեզվով խթումն էր լինում, և արևի մայրամուտին տասնհինգերորդ օրն էր սկսվում, որ է Ջատիկ:

Այս տոնը յոթ օր էր տևում, այսինքն՝ ամսվա 15-ից մինչև 25-ի երեկոյան. այս շրջանում բաղարջ (անթթխմոր և անալի հաց) պետք է ուտեին, իսկ խմորված հացը տնից վերցրած էին լինում ամսի 13-ին՝ տասնչորսերորդ օրը չսկսած, ինչպես Մովսեսը պատվիրում է. «Եվ յոթ օր ձեր տներից վերցրեք թթխմորը» (Ելից ԺԲ 15), «Եվ քո սահմանների մեջ յոթ օր բնավ թթխմորով հաց չերևա» (Բ Օրինաց ԺԶ 4):

Այդ յոթ օրերին ծառայական և կամ որևէ այլ գործ չպետք է անեին ու պետք է սուրբ պահեին դրանք: Առաջին օրը, այսինքն՝ 15-ին, սուրբ ժողով պիտի լիներ: Պիտի պատմեին իրենց որդիներին, թե այս տոնին էր, որ Աստված Իսրայելի ժողովրդին ազատագրեց Եգիպտոսի՝ գերության երկրից: «Եվ սա քեզ նշանի համար պիտի լինի ձեռքիդ վրա և քո աչքերի մեջտեղում՝ հիշատակի համար, որպեսզի Տիրոջ օրենքը քո բերանում լինի: Քանզի Տերը քեզ գորավոր ձեռքով հանեց Եգիպտոսից» (Ելից ԺԳ 8-10):

Այդ պատճառով էլ Օրենքների, Սաղմոսների և Մարգարե- ությունների բոլոր գրքերում հաճախ պիտի հանդիպենք հետևյալ խոսքերին. «Ես եմ քո Տեր Աստվածը, որ քեզ Եգիպտոսի երկրից հանեցի»: Որով Իսրայելի որդիները միշտ պիտի հիշեն իրենց Ազատարար և Փրկիչ Աստծուն:

Ջատիկան գառնուկի միսը թեթև կրակի վրա պետք է խո- րովեին, ամբողջ գիշեր պետք է ուտեին և նրանից բան չպետք է թողնեին. այն պետք է ուտեին բաղարջ հացով ու դառը խո- տերով՝ ի հիշատակ Եգիպտոսում ապրած դառն ու դժվար կյանքի: Ինչպես նաև՝ քարոսեթ, որ մի տեսակ անուշեղեն էր՝ շինված ընկուզից, նուշից, խնձորից, դարինճենիկով համեմ- ված, մեջը գինով եփված թզեր ու մրգեր դրված, աղյուսների ձևով կտրտած և կարմիր գույնի՝ ի հիշատակ հրեաների՝ Եգիպտոսում աղյուսներ շինելու տաժանակիր աշխատանքնե- րի: Խմելու համար էլ էր գինի անհրաժեշտ, որից ամենից աղ-

քատն անգամ գոնե չորս բաժակ պետք է խմեր Ջատիկան ընթրիքի ժամանակ՝ իբրև գնահատություն, շնորհակալու- թյուն և երախտագիտություն Աստծուն՝ հրեա ազգի համար կատարած քառապատիկ շնորհների համար՝

- ա. Եգիպտոսից գորավոր ձեռքով ու հրաշքով դուրս գալու,
- բ. Գերությունից ազատվելու,
- գ. Մեծ դատաստաններով փրկվելու,
- դ. Աստծո ժողովուրդ դառնալու:

Այսպես, երբ ամեն բան պատրաստ լիներ, սեղանի շուրջ էին բազմում: Ներկաների թիվը տասից պակաս չպետք է լի- ներ և ոչ էլ քսանն անցներ. այդ պատճառով էլ, եթե անդամ- ները սակավաթիվ էին, պարտավոր էին ազգականների հետ ուտել, որպեսզի փշրանք անգամ չավելանար նրանից (Ելից ԺԲ 10): Սեղան նստողներից յուրաքանչյուրը գոտին կապած, կոշիկները հագած, ցուպը ձեռքին, հավանաբար գլխարկն էլ գլխին դրած պետք է լիներ, մի խոսքով՝ կատարելապես ճամ- փորդի նման:

Նախ և առաջ ջուր և լվացարան էր բերվում, և բոլոր սե- ղանակիցները ձեռքերը լվանում էին առօրյա սովորության համեմատ (Հովհաննես Բ 6):

Հետո տանտերն աղոթում էր Աստծուն՝ այս տոնը պարգևելու համար, փառք տալով Նրան: Ահա այս էր գառ- նակերությունը կամ Բաղարջակերացը: Միայն այսքան բան է գրված Մովսեսի հնգամատյանում: Այս մեծ տոնի ծիսակատա- րություն մասին գաղափար տալու համար հրեաներն ունեին Պասքա-Հակկադա՝ Պասեքի ծիսարան, որ Հին Կտակարանի ժամանակներից է մնացել և Բ դարի վերջերին գրի է առնվել ռաբբի Հուդա Հակկադոյի և նրա աշակերտների կողմից: Այս- պես, այս բոլոր ավանդությունները հավաքվել են Տոսիփատ անվամբ գրքում: Եվ սա կարծես թե լրացնում է հնգամատյա- նի Բաղարջակերաց տոնի ծիսակատարությունը<sup>2</sup>:

<sup>2</sup> Տե՛ս Գաթրճևան-Տաշևան, Սրբազան Պատարագամատոյց Հայոց, Վենետիկ-Սուրբ Ղազար, 1897, էջ 11-73:

Առաջին բաժակը լցվում էր, տանտերն օրհնում էր այն՝ գոհու-  
թյուն տալով այգիների բերքերի համար, նախ՝ ինքն էր խմում և  
ասպա՝ հերթով սեղանակիցները: Նորից տանտերը միայն լվանում  
էր ձեռքերը և սեղանին մոտենալով՝ օրհնում էր այն. վերցնում էր  
ոչ դառը բանջարեղեններից, թաթախում էր քացախի մեջ և ու-  
տում էր այն. նույնն էին անում նաև սեղանակիցները: Այդ պա-  
հին Բ Օրինաց գրքից մի քանի հատվածներ էին կարդում: Օրինակ.  
«Ով Իսրայել, լսիր. միմիայն մեր Տեր Աստվածն է Տեր: Եվ քո Տեր  
Աստծուն սիրես ամբողջ սրտովդ, ամբողջ հոգովդ և ամբողջ գո-  
րությունովդ: Եվ այս խոսքերը, որոնք ես այսօր պատվիրեցի  
քեզ, թող քո սրտում լինեն, և դրանք կրկին ու կրկին անգամ  
կսովորեցնես քո որդիներին, թե տանդ մեջ նստած ժամանակ, թե  
ճանապարհ գնալիս, թե պառկելիս և վեր կենալիս դրանց մասին  
կխոսես, և դրանք որպես նշան ձեռքիդ կկապես և թող ճակատ-  
նոցի նման աչքերիդ մեջտեղում լինեն. նաև դրանք տանդ դրան-  
դիքներին ու դռներին կգրես» (Բ Օրինաց 2 4-9):

Ինչպես նաև. «Իմ հայրը, թափառական ասորի լինելով,  
Եգիպտոս իջավ և այնտեղ սակավաթիվ մարդկանցով պանդխ-  
տություն անելով՝ մեկ մեծ, գորավոր ու բազմաքանակ ազգ  
եղավ. և եգիպտացիք մեզ չարչարեցին, նեղեցին և մեզ վրա  
ծանր ծառայություններ դրեցին, և մենք մեր հայրերի Տեր Աստ-  
ծուն աղաղակեցինք, ու Տերը, մեր ձայնը լսելով, բարձր բազու-  
կով ու հրաշքներով Եգիպտոսից հանեց մեզ և այստեղ բերեց ու  
մեզ կաթ ու մեղր բխող այս երկիրը տվեց» (Բ Օրինաց Ի2 5-9):

Երկրորդ բաժակն էր լցվում. սեղանակիցների միջից կրտսե-  
րագույնը տանտիրոջը հարցնում էր, թե ինչ է նշանակում այս  
ամենը՝ անթիխմոր հացը, խորոված միսը, քացախի մեջ թա-  
թախված բանջարեղենը, ճամփորդի նման շտապելով ուտելը և  
այլն: Եվ տանտերը, բաժակը բարձրացրած, սրանց բոլորի բա-  
ցատրություններն էր տալիս և կարդում էր Զատկի ծիսարա-  
նը, որ սկսվում էր. «Մենք Փարավոնի ծառաներն էինք, բայց  
Հավիտենականը, մեր Աստվածը կորզեց մեզ, հանեց...»: Իսկ  
հետո քարոզում էր. «Այդ պատճառով պարտավոր ենք գոհա-  
նալ, բարձրացնել, հռչակել Նրան, որ մեր նախահայրերի և

մեզ՝ ամենքիս համար այս ամենը արեց: Նա մեզ բերեց ստր-  
կությունից ազատության, տառապանքներից՝ ուրախության,  
սպից՝ տարեկան տոնի, խավարից՝ մեծ լույսի և գերությունից՝  
փրկության: Դրա համար նոր երգ երգենք Նրան, այլելուիս»:

Այդ պահին բոլորը միասին երգում էին ՃԺԲ-ՃԺԳ Սաղ-  
մոսները, որոնք Հալլել էին կոչվում:

Տանտերը մի անգամ էլ էր լվանում ձեռքերը, երկու բա-  
ղարջ հաց էր վերցնում, դրանցից մեկը երկու մասի էր բաժա-  
նում և այս երկու կտորը բոլոր հացերի տակ էր դնում. մյուս  
հացն էլ երկու մասի բաժանելով, իրար մոտ բռնած դեպի վեր՝  
Աստծուն էր բարձրացնում, վրան օրհնություն էր ասում, հե-  
տո վերցնում էր դառը բանջարեղեններից, դրանք թաթախում  
էր քացախի մեջ, ուտում էր ու բաշխում մյուսներին:

Դրանից հետո սկսվում էր բուն ընթրիքը: Սեղանակիցնե-  
րից յուրաքանչյուրն իր ուզածն էր ուտում՝ միս, բաղարջ,  
բանջարեղեն կամ քարոսեթ: Բաղարջը և բանջարեղենը միշտ  
քացախի մեջ թաթախելով պետք է ուտեին:

Ընթրիքից հետո բոլորը լվանում էին ձեռքերը և լցվում էր՝

Երրորդ բաժակը, որի առթիվ տանտերը գոհաբանական  
աղոթք էր ասում Աստծուն՝ շնորհակալություն հայտնելով  
Նրան՝ շնորհած բարիքների համար, խնդրում էր Իսրայելի ժո-  
ղովրդին օրհնելու և Մեսիայի գալստյան համար, և բաժակն  
օրհնելուց հետո՝ դրանից էլ էին խմում: Ներկաները այժմ եր-  
գում էին Հալլելի երկրորդ մասը, Սաղմոս ՃԺԵ-ՃԺԸ, որին  
միանում էր մեծ Հալլել կոչված Սաղմոս ՃԺԹ-ն և լցվում էր՝

Չորրորդ բաժակը, որ առաջինների պես օրհնվում էր ու  
խմվում: Դրանից հետո որևէ բան խմելու պատվեր չկար:

Ընթրիքն ավարտվում էր, ու սեղանակիցները ցրվում էին:

Քրիստոսի մեկ անգամ մատուցած Պատարագն այս ամենն իր  
մեջ բովանդակում է, և մենք Քրիստոսի Պատարագով այս ամենը  
կատարած ենք լինում, որովհետև օրենքի պահանջները իրենց պես-  
պես զոհերով ստվերն էին Քրիստոսի Պատարագի, որն իբրև Աստ-  
ծո անարատ Գառ, զոհվելով և պատարագվելով՝ Սուրբ Հաղորդու-  
թյան խորհրդով բաշխվում է մեզ՝ որպես Տիրոջ Մարմին և Արյուն:

# ԵՐԿՐՈՐԳ ՄԱՍ

## ԲԱՎԱՐՁԱԿԵՐԱՅ - ԶԱՏԿԻ ՏՈՆՆ ԸՍՏ ՉՈՐՍ ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐԻ

### 1. Նախագիտելիք Ավետարանների մասին

Նախ՝ պետք է որոշ տեղեկություն և գաղափար տանք Ավետարանների ոճի ու գրություն մասին, ինչպես որոշ չափով արդեն արել ենք Բարեխոսություն Սրբոց գրքում<sup>3</sup>:

Ավետարանիչների նպատակն էր Հիսուսին ներկայացնել հանրությունը և ոչ թե գիտական մեթոդով պատմական գիրք գրել: Նրանց գրածը պատմություն լինելուց ավելի քարոզությունն է: Այդ է պատճառը, որ, եթե Ավետարանները քննական, պատմական ակնոցով կարդանք, շատ դժվարությունների կհանդիպենք՝ մտածելով, թե արդյոք որ մեկն է ավելի ճիշտ պատմել դեպքերի ընթացքը, քանի որ յուրաքանչյուր ավետարանիչ իրեն հատուկ, ուրույն նպատակով է գրել Ավետարանը, ուր Հիսուսի մասին պատմելով՝ իր քարոզությունն է անում և մեզ՝ ընթերցողներին, առաջնորդում, ուղղում է իր հետապնդած նպատակին: Մեր միտքն ավելի հստակ պարզաբանելու համար վերցնենք յուրաքանչյուր Ավետարանը, նախ Համատեսները՝ Մատթեոս, Մարկոս, Ղուկաս, և ապա՝ Հովհաննեսի Ավետարանը:

Մատթեոս ավետարանիչն իր Ավետարանն, անտարակույս, գրել է հրեա քրիստոնյաների համար՝ ցույց տալու, որ Հիսուսն է այն Քրիստոսը, որին դարերով հրեա ժողովուրդը սպասում էր:

Նա անընդհատ ապացույցներով փաստում է, թե Քրիստոսի քարոզած վարդապետությունը բնավ հակառակ չէ Հին Ուխտի վարդապետությանը, այլ, ընդհակառակը, նրա շարունակությունն ու ամբողջականացումն է: Ծիշտ այդ պատճառ-

նով է, որ Քրիստոսի կյանքի պատմությունը պատմելիս Մատթեոս ավետարանիչը ժամանակագրական հաջորդականությունը հաշվի չի առել, այլ նույն տեսակի նյութերն ի մի է խմբավորել՝ առանց մտահոգվելու, որ դրանք կարող էին տարբեր առիթներով ասված կամ գործված լինել, որոնք, սակայն, շարունակաբար միասին կարդացվելով՝ ընթերցողի վրա ավելի խոր տպավորություն են թողնում: Այսպես, Մատթեոսի կիրառած համադրական մեթոդի լավագույն նմուշներն են:

1. Լեռան քարոզը (Ե 1-է 29): Պարզ է, որ այս երկարաշունչ քարոզը մեր Տերը՝ Հիսուսը, չէր կարող մեկ շնչով ասել, ինչպես կարդում ենք Ղուկասի Ավետարանում: Սակայն Մատթեոսը, ի մի հավաքելով, Հիսուսի քարոզածը, զանազան առիթներով խոսված քարոզները լեռան քարոզի մեջ է պատմում մեզ:

2. Հրաչքների համադրությունը (Ը 1-թ 38): Անշուշտ, այդ հրաչքներն էլ էին տարբեր ժամանակներում կատարվել, ինչպես կարդում ենք Մարկոսի և Ղուկասի Ավետարաններում, Իսկ Մատթեոսի Ավետարանում, ի մի հավաքված, հաջորդաբար պատմված են:

3. Նույն ձևով՝ առաքյալներին տրված հանձնարարությունները (Ժ 1-42):

4. Առականների համադրությունը (ԺԳ 1-52):

5. Վախճանաբանական քարոզները, գեղեցիկ առականները (ԻԵ 1-ԻԶ 2) և այլն:

Մատթեոսն իր պատմածը վավերական դարձնելու համար միշտ երկու հոգու վկայությունն է դիմում, որովհետև հրեական օրենքով ամեն ինչ հաստատվում էր երկու հոգու վկայությամբ (Բ Օրինաց ԺԹ 15, Մատթեոս ԺԸ 16): Այսպես, օրի-

3. Վաչն ծայրագույն վարդապետ Իգնատիոսյան, Բարեխոսություն Սրբոց, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1978, Երևան, Մոմ, 1993., էջ 18-20



նակ՝ Մատթեոսը երկու դիվահարի բժշկությունն է հիշում (Մատթեոս Ը. 28-34), իսկ Մարկոսը և Ղուկասը միայն մեկ դիվահար են հիշում (Մարկոս Ե. 1-20, Ղուկաս Ը. 26-39):

Նույնն է նաև Երիքովի կույրերի բժշկության դեպքը. Մատթեոսը (Ի 29-34) երկու կույրի բժշկությունն է հիշատակում, իսկ Մարկոսը (Ժ 46-52) և Ղուկասը (ԺԸ 35-43) միայն մեկի բժշկության մասին են խոսում:

Հիսուսին դատապարտելիս, Կայիափա քահանայապետի առջև, Մատթեոսը երկու սուտ վկաների պարագան է հիշատակում (ԻԶ 61), իսկ Մարկոսն ասում է. «Ոմանք ելան և սուտ վկայությունն էին անում» (Մարկոս ԺԴ 56):

Նմանօրինակ համադրությունների հանդիպում ենք նաև Ավագ Շաբաթվա դեպքերի նկարագրության մեջ: Օրինակ՝ Ծաղկազարդի օրը. Հիսուսի հաղթական մուտքը Երուսաղեմ: Այս առիթով Մատթեոսը պատմում է նաև տաճարի մաքրագործման մասին՝ ընթերցողների վրա ավելի լավ և ազդու տպավորություն թողնելու նպատակով: Իսկ Մարկոսի Ավետարանից իմանում ենք, որ Երուսաղեմի հաղթական մուտքից հետո Հիսուսը «չորս կողմը՝ ամեն ինչ աչքի անցկացրեց. և քանի որ արդեն երեկո էր, Բեթանիա ելավ՝ տասներկուսի հետ միասին» (Մարկոս ԺԱ. 11): Իսկ տաճարի մաքրագործումը կատարեց հաջորդ՝ Ավագ Հինգշաբթի օրը (Մարկոս ԺԱ. 15-19):

Ահա մի այլ օրինակ ևս. Բեթանիայում Քրիստոսի օժվելը Ղազարոսի քրոջ՝ Մարիամի կողմից: Այս դեպքը Մատթեոսը հիշատակում է Զատիկի տոնից երկու օր առաջ. «Գիտեք, որ երկու օրից հետո Զատիկ է լինելու, և Մարդու Որդին մատնվելու է խաչին բարձրանալու» (Մատթեոս ԻԶ. 2): Նույն հաջորդականությամբ պատմում է նաև Մարկոսը (ԺԴ. 1): Իսկ Հովհաննեսի Ավետարանից սովորում ենք, որ այս օժման դեպքը պատահել է ոչ թե Զատիկի տոնից երկու, այլ վեց օր առաջ, այսինքն՝ Ծաղկազարդի Կիրակիի նախօրը օրը, Շաբաթ երեկոյան, ընթրիքի ժամանակ:

Այսպիսի շատ ուրիշ օրինակներ կան Մատթեոսի Ավետարանում, սակայն, ինչպես ասացինք, որոշ նպատակով և նույն

նյութի կապակցությամբ, ի մի հավաքված են գրվել:

Այդ պատճառով էլ ներկայիս ընդունված տեսակետն այն է, որ նախ գրվել է Մարկոսի Ավետարանը, իսկ մյուս երկուսը՝ Մատթեոսն ու Ղուկասը, այն իրենց աչքի առաջ են ունեցել և դրանից օգտվել են՝ իբրև ուղեցույց: Կարող ենք ասել, որ Մարկոսի Ավետարանը գրեթե ամբողջությամբ վերարտադրվել է մյուս երկուսի կողմից: Այս երեքը Համատես են կոչվում: «Համատես» բառի հունարենն է SYNOPSIS, որ նշանակում է միաժամանակ նայել մեկից ավելի համանման առարկաների և համեմատել դրանք: Այսպես, եթե այս երեք Ավետարանների պարունակությունը առանձին սյունակներով կողք կողքի դնենք և իրար հետ համեմատենք, բառ առ բառ նույնն է երեքի կամ դրանցից երկուսի մեջ: Օրինակ՝ Մատթեոս Ը 3, Մարկոս Ա 42, Ղուկաս Ե 13 համարներում ներկայացված բորոտի բժշկության պատմությունը գրեթե բառ առ բառ (հատկապես հունարեն բնագրում) նույնն է երեքի մեջ էլ: Մատթեոսը և Ղուկասը պատմության հաջորդականությունը ընդհանուր առմամբ Մարկոսի դրած ձևով պահպանում են իրենց Ավետարաններում: Եթե նույնիսկ Մատթեոսը իր ծրագրին հարմարեցնելու նպատակով փոխում է այդ հաջորդականությունը, ապա Ղուկասը պահպանում է այն: Փոխադարձաբար, եթե Ղուկասն է փոխում, Մատթեոսն է պահպանում:

Այս երեք Համատես Ավետարանները Քրիստոսի գործունեությունը մեզ ներկայացնում են միայն Գալիլեայի և Հրեաստանի սահմաններում և միայն մեկ Զատիկական տոն են հիշում, որի ընթացքում տեղի են ունենում Քրիստոսի՝ հաղթական մուտքը Երուսաղեմ, մատնությունը, խաչելությունը, թաղումը և վերջապես՝ հրաշափառ հարությունը:

Սակայն Հովհաննեսի Ավետարանում մենք հանդիպում ենք Քրիստոսի երեք տարվա առաքելության ընթացքում պատահած երեք Զատիկների հիշատակմանը, որոնց ժամանակ, անշուշտ, մեր Տերն էլ է ներկա եղել (Հովհաննեսի Բ 13-25, Ե 1, Զ 4), և վերջապես՝ չորրորդ Զատիկը, որի մասին Համատես-

ներն էլ են հիշատակել, որի ժամանակ, ինչպես արդեն գիտենք, Քրիստոսը ինքը պիտի լիներ բուն Զատիկական Պատարագը:

Հովհաննեսի Ավետարանը բոլորովին այլ աշխարհ է՝ այլ ոճ, այլ նկարագրություն, ճշգրիտ ժամանակագրություն, ուր դեպքերը դիտվում են աստվածաբանական տեսանկյունից: Այդ պատճառով էլ Հովհաննեսին անվանել են աստվածաբան ավետարանիչ:

Դրա համար էլ մենք պետք է հետևենք Հովհաննեսի գրած ժամանակագրության հաջորդականությանը, որն, անշուշտ, և՛ ճիշտ, և՛ տրամաբանական կլինի:

Հովհաննեսի Ավետարանը ժամանակագրությունը ճիշտ պահելու բացահայտ բժախնդրություն ունի: Այսպես. «Եվ այն օրը նրա մոտ մնացին, որովհետև ժամը տասին մոտ էր (մեր ժամով՝ ցերեկվա չորսը) (Հովհաննես Ա 39):

«Երրորդ օրը հարսանիք կար Գալիլեայի Կանա քաղաքում (Հովհաննես Բ 1): Հացերի հրաշքի դեպքի ժամանակ միայն Հովհաննեսն է, որ ճշտում է ժամանակը. «Եվ հրեաների Զատիկը մոտ էր» (Հովհաննես Զ 4): Ահա մեկ այլ ժամանակի ճշգրտություն. «Հայրը հարցրեց ծառաներին, թե ո՞ր ժամին հիվանդ տղան սկսեց ապաքինվել»: Նրան ասացին. «Երեկ ժամը յոթին տենդը թողեց նրան» (Հովհաննես Դ 52-53): «Իսկ երբ տոնը կես եղավ, Հիսուսը տաճար գնաց և սովորեցնում էր» (Հովհաննես Է 14): «Տոնի վերջին մեծ օրը Հիսուսը կանգնել էր...» (Հովհաննես Է 37): «Իսկ երբ լսեց, թե Ղազարոսը հիվանդ է, եղած տեղում երկու օր էլ մնաց» (Հովհաննես ԺԱ 6):

«Իսկ Հիսուսը Զատիկից վեց օր առաջ Բեթանիա եկավ» (Հովհաննես ԺԲ 1): Բեթանիայում էր, որ Ղազարոսի քույրը՝ Մարիամը, ընթրիքի ժամանակ «Հիսուսի ոտքերն օծեց և իր մազերով նրա ոտքերը սրբեց» (Հովհաննես ԺԲ 3):

Այս պատմությունը հանդիպեցինք նաև Մատթեոսի և Մարկոսի Ավետարաններում, սակայն նրանք պատմում են այնպես, կարծես դա պատահել էր Զատիկի տոնից երու օր առաջ (Մատթեոս ԻԶ 2, 7, Մարկոս ԺԴ 1, 3):

2. Վերջին Զատիկական տոնի թիվն ըստ Համատես Ավետարանների և ըստ Հովհաննեսի Ավետարանի

«Եվ Բաղարջակերաց առաջին օրը աշակերտները Հիսուսի մոտ եկան և ասացին նրան. «Որտե՞ղ ես ուզում, որ պատրաստենք Զատիկը՝ ուտելու համար»: «Եվ երբ երեկո եղավ, տասներկուսի հետ սեղան նստեց» (Մատթեոս ԻԶ 17, 20):

«Եվ Բաղարջակերաց առաջին օրը, երբ Զատիկն էին մորթում, աշակերտները ասացին նրան. «Որտե՞ղ ես ուզում, որ գնանք ու պատրաստենք, որպեսզի Զատիկն ուտես»: «Եվ երբ երեկո եղավ, տասներկուսի հետ միասին գնաց այնտեղ» (Մարկոս ԺԴ 12, 17):

«Եվ Բաղարջակերաց օրը եկավ, երբ պետք էր մորթել Զատիկը»: «Եվ գնացին աշակերտները, գտան, ինչպես իրենց ասել էր, ու Զատիկը պատրաստեցին»: «Եվ երբ ժամը մոտեցավ, սեղան նստեց, և տասներկու առաքյալներն էլ՝ Նրա հետ: Ու ասաց նրանց. «Փափագելով փափագեցի, որ այս ԶԱՏԻԿԸ ձեզ հետ ուտեմ՝ իմ չարչարվելուց առաջ» (Ղուկաս ԻԲ 7, 13-15):

Իսկ Հովհաննեսի Ավետարանում գրված է. «Զատիկի տոնից առաջ՝ Հիսուսը, իմանալով, որ իր ժամանակը մոտեցել է, որպեսզի այս աշխարհից Հոր մոտ գնա... Եվ ընթրիքի ժամանակ...» (Հովհաննես ԺԳ 1, 2):

Ուրեմն, ըստ Համատես Ավետարանների, Զատիկական ընթրիքը տեղի ունեցած պետք է լիներ Նիսան (Ապրիլ) ամսվա 14-ի երեկոյան, Հինգշաբթի օրը, և Ուրբաթ 15-ը Զատիկի առաջին օրն էր լինում: Իսկ ըստ Հովհաննեսի Ավետարանի, Նիսան 14-ը Ուրբաթ էր, իսկ Նիսան 15-ը՝ Շաբաթ օրը, Զատիկ էր: Հետևաբար, վերջին ընթրիքը տեղի ունեցած պետք է լիներ Հինգշաբթի երեկոյան, Նիսան 13-ին, երբ Նիսան 14-ն էր սկսվում, Ուրբաթ օրը<sup>4</sup>:

Պետք է ասել, որ Զատիկական ճիշտ թվի հարցը բուռն վի-

4. Հովհաննեսի Ավետարանի հիշատակությունը, սակայն, ավելի բանական և տրամաբանական է թվում, քան որ հրեաները երբեք Պասեքը Ուրբաթ օրը չեն տոնել:

ճաբանությունները հարց է մինչև այսօր: Ոմանք, հետևելով Համատես Ավետարաններին, պաշտպանում են այն տեսակետը, թե Քրիստոսի ընթրածը Բաղարջակերաց-Չատկական ընթրիքն էր, իսկ ուրիշներն էլ, Հովհաննեսի Ավետարանին հետևելով, ընդունում են, որ Ուրբաթ երեկոյան, Հիսուսի խաչվելուց և պատարագվելուց հետո միայն պիտի սկսվեր Բաղարջակերաց-Չատկական ընթրիքը: Ինչպես ասացինք, այս երկու վարկածները բուն կերպով երկուստեք պաշտպանվում են<sup>5</sup>:

Սակայն, ինչպես արդեն տեսանք, Համատես Ավետարաններից յուրաքանչյուրը որոշ նպատակով է գրվել, և այդ նպատակը հետապնդելու պատճառով ճշգրիտ ժամանակագրությունը անտեսվել է: Նրանց համար կարևորը Հիսուսի կատարած գործերն են, երկու օր առաջ, թե երկու օր հետո՝ նշանակություն չունի: Հովհաննեսի Ավետարանում, բարեբախտաբար, ժամանակագրությունը հարգված և ճշտված է, ինչպես օրինակի համար տեսանք Բեթանիայի ընթրիքի, Քրիստոսի ոտքերի օծման թվի դեպքում:

Երբ Համատեսները պատմում են այս օծման դեպքը, կարծես մեր միտքը պատրաստում են Տիրոջ թաղմանն ու օծմանը և այդ խորհրդին են մոտեցնում: Հոգ չէ, եթե դա ժամանակագրական հաջորդականությունը ավելի շուտ է եղել:

Կարող ենք ասել նաև, թե նույնն է պարագան, երբ Համատեսները պատմում են Չատկական տոնի մասին: Ինչպես տես-

սանք, առաջին Ավետարան գրողը Մարկոսն էր, որն իբրև հիմք և ուղեցույց էր ծառայել Մատթեոսին և Ղուկասին: Ուրեմն, երբ Մարկոսը հունա-հռոմեական քրիստոնյա հասարակության կրոնական մշակույթի համար գրում էր իր Ավետարանը, հրեական ծեսերը, անունները, սովորությունները բացատրելու կարիք էր զգում<sup>6</sup>. օրինակ՝ երբ առաջին անգամ հիշում է Չատկական տոնը, նաև բացատրում է, թե հրեաներն ինչ էին անում այդ տոնի ժամանակ. «Բաղարջակերաց առաջին օրը, երբ Չատիկն էին մորթում...»: Ուրեմն, սա մի տոն էր, որի ժամանակ պետք է գառնուկ մորթեին:

\* \* \*

Մեկ այլ նկատելի կետ էլ կա այստեղ: Ըստ Համատես Ավետարանների, Չատկական տոնի առթիվ Հիսուսն էլ է ուխտի գնում Երուսաղեմ: Եվ այս առիթով տաճարի մաքրագործումն է կատարում: Մատթեոսը և Ղուկասը, ավելի խոր ազդեցություն թողնելու համար, հաղթական մուտքի օրն իսկ պատմում են այս մաքրագործումը, իսկ Մարկոսը դա հիշում է հաջորդ օրվա մեջ:

Սակայն մենք Հովհաննեսի Ավետարանից տեղեկանում ենք, որ տաճարի մաքրագործումը Հիսուսը կատարել է դրանից երեք տարի առաջ, իր առաքելության սկզբնական շրջանում, երբ առաջին անգամ ուխտի էր գնում Երուսաղեմ՝ Չատկական տոնի առիթով:

Ուրեմն, ըստ Համատեսների և ըստ Հովհաննեսի, տաճարի մաքրագործումը պատմվում է մեզ Հիսուսի առաջին անգամ կատարած այցելության առիթով միայն: Եվ քանի որ Համատեսները միայն մեկ անգամ են հիշատակում Հիսուսի Երուսաղեմ գնալը, բնականաբար, այս առիթով պետք է հիշեին դա:

<sup>5</sup> Anne Jaubert <<La date de la Cene>> անունով 160 էջանոց ինքնատիպ մի աշխատություն է լույս ընծայել Ed Cabelda հրատարակչությունում, 1957 թվականին, որտեղ երկար և մանրամասնորեն բացատրում է և այս հարցի լուծումը գտած է համարում՝ համաձայնեցնելով Համատես Ավետարանների և Հովհաննեսի Ավետարանի նկարագրած վերջին ընթրիքի թվերի տարակարծություններն այսպես.

1. Ըստ նրա, այս վերջին ընթրիքը տեղի է ունեցել ոչ թե Հինգշաբթի երեկոյան, այլ՝ երեքշաբթի երեկոյան, երբ Չորեքշաբթին պիտի սկսվեր, որպեսզի միևնույն ժամանակ Հիսուսի ասածը հաստատվի՝ «Չատիկ տոնից առաջ...»:

2. Հիսուսի մատնությունը և ձերբակալությունը տեղի է ունեցել նոր սկսած Չորեքշաբթիվ գիշերը:

Հիսուսի մատնությունը քահանայապետի, Հերովդեսի և Պիղատոսի առջև երեք օր է տևում՝ Չորեքշաբթի, Հինգշաբթի և Ուրբաթ, մինչև կեսօր: Ինչպես ասացինք, մի ինքնատիպ ուսումնասիրություն է սա:

<sup>6</sup> «Որովհետև փարիսեցիները և բոլոր հրեաները մինչև լավ ձևերը չլվանան, հաց չեն ուտում, որպեսզի ձերերի ավանդությունը պահեն: Եվ եթե շուկայից եկած ժամանակ չլվացվեն, չեն ուտում. և ուրիշ շատ բաներ էլ կան, որոնք ընդունելու պահում են, այսինքն՝ գավաթների, փարջերի, պղնձե ամանների և անկողինների լվացումներ» (Մարկոս է 3-4):

«Տալիթա, կումի. որ նշանակում է՝ աղջիկ, քեզ ասում եմ՝ վեր կաց» (Մարկոս Ե 41) և այլն:

Նկատվելիք մեկ կետ ևս.

«Բաղարջակերաց առաջին օրը...» (Մարկոս ԺԴ 12), ասվել էր ուրեմն Ավագ Հինգշաբթվա՝ Նիսանի 14-ի մասին: Մենք գիտենք, որ Բաղարջակերաց առաջին օրը Նիսանի 15-ը պետք է լիներ: Մատթեոսը և Ղուկասը նույնությամբ հետևել են Մարկոսի պատմությանը:

Մի պահ մենք էլ Չատկական թիվն ընդունենք Համատեսների Ավետարանի հաջորդականությամբ, որը նշում է Նիսան 15-ի Ուրբաթը, որը Հովհաննեսը Պատրաստության (Թջսջվտբբբ) օր է անվանում, իսկ մեր լեզվով խթում է կոչվում: Համատեսներում էլ նույն ձևով Պատրաստության օր է ասվում (Մատթեոս ԻԷ 62, Մարկոս ԺԵ 42, Ղուկաս ԻԳ 54) (անշուշտ, հունական բնագրում): Եվ այսպես, մեր Տերը Հինգշաբթի, Նիսանի 14-ի վերջին ընթրիքը կատարելով, հաստատեց Սուրբ Հաղորդության խորհուրդը:

Սակայն հետագա տվյալները, ճիշտ հակառակը ցույց տալով, պիտի փաստեն, թե անկարելի է, որ Հինգշաբթին Նիսանի 14-ը լիներ հետևյալ պատճառներով.

Ա. Հինգշաբթի երեկոյան, մայրամուտից հետո, պիտի սկսվեր Ուրբաթը, որ է Չատիկ՝ ըստ հրեաների ավանդության, բոլոր հրեաները պիտի կատարեին Չատկական տոնը, որի ժամանակ պիտի ուտեին գառնուկը:

Ուրեմն՝ քահանայապետները, դպիրները, փարիսեցիները և ծերերը, որոնք եկել էին Գեթսեմանու պարտեզ՝ Հիսուսին ձերբակալելու, բոլորն էլ Չատկական սեղանից պետք է ելած լինեին: Ինչքան էլ ատելությամբ ու նախանձով լցված լինեին և եթե նույնիսկ նրան սպանելու որոշում կայացրած լինեին, այնուամենայնիվ, անհավանական է, որ նրանք կիսատ թողնեին Չատկական ընթրիքը. մի բան, որ հակառակ էր իրենց օրենքին: Իսկ Ուրբաթն, իհարկե, Նիսանի 14-ը պետք է լիներ, որը Հիսուսին ձերբակալելու միակ հարմարագույն առիթն էր, որովհետև տոնից հետո կուսակալը, որը միայն մեծ տոների առիթով էր Երուսաղեմ գալիս, վերադառնում էր

իր քաղաքը՝ Կեսարիա: Սրա մասին Մարկոսն ասում է. «Եվ վաղ առավոտյան քահանայապետները Հիսուսին կապեցին ու տարան մատնեցին Պիղատոսին» (Մարկոս ԺԵ 1): Որովհետև նույն երեկոյան Չատիկը պիտի սկսվեր, և հաջորդ օրն էլ մեծ օր էր: Ուրեմն պետք է շտապեին, որպեսզի ներկայացված միակ առիթը չկորցնեին:

Բ. «Եվ Հիսուսին Կայիափայի տնից կուսակալի պալատը տարան. արդեն առավոտ էր, և նրանք պալատ չմտան, որպեսզի չպղծվեն, այլ Չատիկն ուտեն» (Հովհաննես ԺԸ 28):

Ինչպես գիտենք, հիշյալ Ուրբաթ (Պատրաստության) օրը միայն Հովսեփ Արիմաթիացին պալատ մտավ՝ Պիղատոսի մոտ, և Հիսուսի մարմինը խնդրեց: Այս առիթով Մարկոս ավետարանիչը մեկ բառով միայն ցույց է տալիս ամբողջ պատկերի բովանդակությունը, երբ գրում է. «Հովսեփ Արիմաթիացին համարձակվեց մտնել Պիղատոսի մոտ և Հիսուսի մարմինը խնդրեց» (ԺԵ 43):

Պետք է ասել, որ Մարկոսը, իբրև տպավորապաշտ (Impressionniste) գրող, իր ոճն ունի՝ կարճ նախադասությամբ մի ամբողջ պատկեր է նկարագրում մեզ: Իսկ այստեղ համարձակվել բայն է գործածում՝ Արիմաթիացու՝ Պիղատոսի մոտ մտնելու առիթով, որպեսզի ցույց տա նրա հոգեվիճակը, եթե նա պալատ մտներ, անշուշտ, պիտի պղծվեր և երեկոյան չպիտի կարողանար Չատիկն ուտել. ուրեմն, իրապես, համարձակություն, հանդգնություն ու քաջություն էր անհրաժեշտ նրան պալատ՝ Պիղատոսի մոտ մտնելու համար: Իսկ եթե չմտներ և Հիսուսի մարմինը չխնդրեր, մեր Տերն էլ մյուս ավագանների հետ հասարակաց փոսը պիտի նետվեր: Վճռորոշ այս իրավիճակն էր, որ նրան հեթանոսների պալատը մտնելու համարձակություն տվեց. հոգ չէ, թե պիտի պղծվեր...

Մատթեոս ավետարանիչն էլ է տարբեր առիթներով և տարբեր ձևերով ապացուցում այս պղծվելու պարագան. երբ քահանայապետները և փարիսեցիները արդեն կերել էին Չատիկը, այլևս պղծվելու վախ չկար. նրանք արդեն կարող էին մտ-

նել պալատ՝ Պիղատոսի մոտ, հաջորդ՝ Շաբաթ (Զատիկի) օրը:

«Եվ հետևյալ օրը, որ Ուրբաթից (Պատրաստության օրից) հետո էր, քահանայապետները և փարիսեցիները հավաքվեցին Պիղատոսի մոտ» (Մատթեոս ԻԷ 62):

Ինչպես ասացինք, հունական բնագրում Ուրբաթի փոխարեն կա Paraskeve բառը, որը նշանակում է Պատրաստության օր: Եթե Ուրբաթ օրը Զատիկ լիներ, ինչպես ոմանք պնդում են, ուրեմն այդ դեպքում ինչո՞ւ նույն Համատես Ավետարանները Զատիկի կամ «Մեծ օրի» մասին չեն խոսում և ծանրանում են միայն Շաբաթ օրվա վրա, ինչպես Հովհաննեսն է ասում. «Այն Շաբաթը մեծ օր էր». ինչո՞ւ, որովհետև Բաղարջակերաց առաջին օրն էր (Հովհաննես ԺԹ 31 և Ելից ԺԲ 16): «Մեծ օր» էր նաև յոթերորդ կամ վերջին օրը (Հովհաննես է 37 և Ելից ԺԲ 16):

Գ. Հովհաննեսը ճշտում է նաև Պիղատոսի՝ դատապարտության վճռի արձակման ժամանակը, թե՛ «Զատիկի Ուրբաթ (Պատրաստության օր, իթում) օրն էր ու ժամը վեցին մոտ էր» (Հովհաննես ԺԹ 14), մեր ժամով կեսօրվա մոտ: Միևնույն ժամանակ մեզ հիշեցնում է, որ այդ պահին էին Զատիկական գառնուկներին տաճար տանում՝ մորթելու:

Դ. «Եվ Սիմոն Կյուրենացուն՝ Ալեքսանդրոսի և Ռուփոսի հորը, որը այդտեղով անցնում և արտից էր եկել, ստիպեցին, որպեսզի նրա խաչը վերցնի» (Մարկոս ԺԵ 21, Ղուկաս ԻԳ 26, Մատթեոս ԻԷ 32):

Եթե Ուրբաթ օրը հրեաների Բաղարջակերաց-Զատիկի տոնն էր, ուրեմն՝ «այն օրը բնավ գործ թող չգործվի» (Ելից ԺԲ 16, Ղևտացվոց ԻԳ 7, Թվոց ԻԸ 18 և այլն): Ինչպե՞ս կարող էին հրեաների «Ամենամեծ օրվա» մեջ քահանայապետներն ու ժողովրդի իշխանները Զատիկական սեղանը թողնել և Գեթսեմանի վազել: Մեկ ուրիշը՝ Սիմոն Կյուրենացին, գնացել էր իր արտում աշխատելու և կեսօրին՝ վերադարձին, խաչի ճանապարհին, հանդիպում է Հիսուսին ու վերցնում նրա խաչը:

Եթե Զատիկ լիներ, նման բաներ չէին կարող պատահել, քանի որ այդ օրն աշխատելը մեղք էր, ինչպես արդեն ասացինք:

Ե. «Իսկ հրեաները, որովհետև Ուրբաթը Պատրաստության օր էր, և որպեսզի մարմինները խաչի վրա չմնան մինչև Շաբաթ օրը, քանի որ Շաբաթը մեծ օր էր...», որ է Զատիկ (Հովհաննես ԺԹ 31):

Նրանք, ովքեր ընդունում են, թե Զատիկն Ուրբաթ էր, նաև առարկում են, թե՛ Հովհաննեսն այստեղ մեծ օր է ասել և ոչ թե մեծ տոն:

Ինչպես արդեն ասացինք, Բաղարջակերաց-Զատիկական տոնը յոթ օր էր տոնվում, և առաջին օրը «Մեծ օր» էր կոչվում (Հովհաննես է 37 և Ելից ԺԲ 16): Եվ քանի որ Զատիկական տոնի առաջին օրը Շաբաթ օրն էր, այդ Շաբաթը Մեծ օր էր կոչվում:

Երբ Համատես Ավետարանները խոսում են այդ Շաբաթի մասին, առանց, սակայն, «Մեծ օր» անվանելու, լռելյայն մեզ հասկացնում են դա և Ուրբաթն էլ Պատրաստության օր են անվանում:

Այսպես, «և երբ երեկո եղավ, քանի որ Պատրաստության (Ուրբաթ) օր էր, Շաբաթի նախորդ օրն էր, և Շաբաթամուտն էր սկսվում» (Մարկոս ԺԵ 42):

Զ. Երբ Հիսուսը՝ Աստծո Որդին, խաչի վրա հոգին ավանդեց, երեք Ավետարանների պատմածի համաձայն, պատուվեց տաճարի վարագույրը, որը կապույտից, ծիրանիից, կարմրից ու բեհեզից էր պատրաստված, որը ծածկում էր Սրբություն Սրբությանց կոչվածի ներքին մասը (Ելից ԻԶ, Բ Մնացորդաց Գ 8-14): Միայն մեծ քահանայապետը տարին մեկ անգամ այստեղ մտնելու արտոնություն ուներ՝ Զատիկական գառնուկը զոհաբերելուց հետո խնկարկելու համար (Ելից Լ.10, Ղևտացվոց ԺԶ 2, 34 և Եբրայեցիս Թ 7, 25): Եվ ահա, այն պահին, երբ Կայիափա քահանայապետն արդեն զոհել էր Զատիկական գառնուկը և խնկարկություն էր անում, Սրբություն Սրբու-

Թյանցի մեծ վարագույրը երկու մասի պատուվեց՝ վերևից ներքև (Մատթեոս ԻԵ 51, Մարկոս ԺԵ 38, Ղուկաս ԻԳ 45):

ա. Ինչպես արդեն ասացինք, վարագույրը պատուվում է, երբ Կայիափա քահանայապետը խնկարկուծյուն էր անում. սա այն քահանայապետն էր, որ իր հագուստները պատռել էր Հիսուսին հարցաքննելու ժամանակ, քանի որ Հիսուսն իրեն Աստծո Որդի էր անվանել (Մատթեոս ԻԶ 65, Մարկոս ԺԴ 63): Ուրեմն, հաստատվում էր, թե՛ «արդարև սա Աստծո Որդի էր»: Այսպես պիտի ասեր Հիսուսին պահպանող հարյուրապետը (Մատթեոս ԻԷ 54, Մարկոս ԺԵ 39):

բ. Չէ՞ որ Հիսուսի դատապարտության ժամանակ էլ երկու սուտ վկաներ հիշել էին, թե՛ «ես կարող եմ Աստծո տաճարը քանդել և երեք օրում շինել» (Մատթեոս ԻԶ 61, Մարկոս ԺԴ 58):

Այսպես, Հիսուսն իր մահվան համար նշան էր ցույց տալիս քահանայապետին և ապա՝ հրեաներին, որոնք իրենից նշան էին ուզել՝ ասելով. «Ի՞նչ նշան ցույց կտաս մեզ, որ այդ բաներն անելու իրավունք ունես»:

Հիսուսը պատասխանեց և ասաց նրանց. «Քանդեք այս տաճարը, և երեք օրում այն կկանգնեցնեմ» (Հովհաննես Բ 18-19):

Այսպես, Հիսուսի մահվամբ Հին Ուխտի վարագույրը պատուվում է, և դադարում է նրա խորհրդավոր ու ստվերային նշանակությունը, իսկ երեք օրից Նոր Ուխտի դռներն են բացվում:

Միայն թե այստեղ չչփոթենք. Հիսուսը տաճարը չքանդեց, այլ պատնեչ հանդիսացող վարագույրը պատուվեց, որպեսզի այսուհետև Նոր Ուխտի Սուրբ Պատարագները միայն Քրիստոսի Արյամբ մատուցվեն:

է. Եվ վերջապես յուզաբեր կանայք. «Վերադառնալով խնկեր ու յուզեր պատրաստեցին և Շաբաթ օրը հանգստացան օրենքի համաձայն» (Ղուկաս ԻԳ 56):

Ինչպես ասացինք, եթե Ուրբաթ օրը Չատկի տոնը լիներ, այդ պատրաստությունները չէին կարող տեսնել, քանի որ պետք է օրը սուրբ պահեին:

Հովհաննեսի Ավետարանում, վերջին ըիթրիքին, զնման մասին ակնարկություն կա, որը պաշտպանում է մեր վարկածը.

«...Որովհետև ոմանք կարծում էին, թե, քանի որ գանձանակը Հուդան էր պահպանում, Հիսուսը նրան ասում էր. «Գնիր, ինչ որ մեզ պետք է այս տոնի համար» (Հովհաննես ԺԳ 29):

Եթե Բաղարջակերաց-Չատկական տոնը սկսվեր Հինգշաբթի երեկոյան, անշուշտ, այսպես չէին կարող կարծել, քանի որ Մեծ օրը սկսած պիտի լիներ, որը ամեն հրեա պետք է սուրբ պահեր, և տան անդամներով սեղանի շուրջ նստած՝ պետք է գառնուկ ուտեին:

Կարծում եմ՝ այս հստակ և որոշակի ապացույցները բավական են՝ փաստելու, որ Ավագ Ուրբաթը չէր կարող հրեաների Բաղարջակերաց-Չատկական տոնը լինել, այսինքն՝ Նիսանի 15-ը, այլ 14-ը և Չատկի Պատրաստության օրը (Խթումը) պիտի լիներ, իսկ հաջորդ՝ Շաբաթ օրը հրեաների Չատկի Մեծ օրը պիտի լիներ, որը պատմության գերագույն և միևնույն ժամանակ Մովսիսական վերջին Չատիկը եղավ, որովհետև Քրիստոսը՝ Աստծո Գառը, զոհվելով և պատարագվելով, աշխարհի մեղքը քավեց, վերցրեց և մի նոր դարագլուխ բացեց՝ Նոր Չատիկներ պարգևելով համայն մարդկությունը: Շաբաթը Կիրակիի էր փոխվում Քրիստոսով, և Քրիստոսը մեր Չատիկն էր (Ա Կորնթացիս Ե 7):

\* \* \*

Ոմանք էլ այսպես են խորհում. եթե Հինգշաբթի երեկոյան Քրիստոսի կատարած ընթրիքը Բաղարջակերաց-Չատկական ընթրիք չլիներ, այդ դեպքում ինչ-որ բան պիտի պակասեր: Այդ պատճառով էլ ամեն ճիշտ թափում են՝ հաստատելու և

ապացուցելու, թե Քրիստոսի կատարած վերջին ընթրիքը Ջատկական գառնակերուծության ընթրիք էր:

Ինչպես տեսանք, Համատես Ավետարանները պատմում են, թե Հիսուս Քրիստոսը սուրբ և անմահ խորհուրդը հաստատեց վերջին ընթրիքին. «Եվ մինչ նրանք դեռ ուտում էին, Հիսուսը հաց վերցրեց, օրհնեց, կտրեց և տվեց նրանց ու ասաց. «Վերցրեք, կերեք, սա է իմ մարմինը. սա արեք ինձ հիշելու համար»: Եվ գավաթը վերցրեց, գոհացավ ու տվեց նրանց, և ամենքն էլ խմեցին դրանից, ու ասաց նրանց. «Սա է իմ Նոր Ուխտի արյունը, որ թափվում է շատերի համար» (Մատթեոս ԻԶ 26-28, Մարկոս ԺԴ 22-24, Ղուկաս ԻԲ 19-20):

Հովհաննեսի Ավետարանը այս ընթրիքի ընթացքի, Սուրբ Հաղորդուծության հաստատման մասին ոչ մի ակնարկություն չի անում, որովհետև ինքն արդեն երկար ճառ ունի Հաղորդուծության մասին Զ գլխում՝ 32-71 տներում, հացի բազմացման հրաշքից հետո: Հիսուսն այս ճառի մեջ բացատրում է իր Մարմնի և Արյան հաղորդուծության խորհուրդը և դրա անհրաժեշտությունը մեր հոգևոր կյանքում. «Ով որ այս հացից ուտի, հավիտյան պիտի ապրի» (Զ 52): «Եթե մարդու Որդու Մարմինը չուտեք և նրա Արյունը չխմեք, ձեր մեջ կյանք չեք ունենա (Զ 54): Եվ ապա ավելացնում է նաև, որ իր Մարմնից ու Արյունից ճաշակողին «հարուստուն առնել պիտի տա վերջին օրը» (Զ 55):

Ուրեմն, այս ճառի օգնությամբ Սուրբ Հաղորդուծության մասին կարող ենք եզրակացնել հետևյալը.

ա. Նախ և առաջ՝ Տիրոջ իսկական Մարմինն ու Արյունն է (Զ 55):

բ. Տիրոջ Մարմնի և Արյան շնորհիվ միայն կարող ենք իսկական հոգևոր կյանք ունենալ (Զ 37 և 54):

գ. Սուրբ Հաղորդուծության շնորհիվ ենք մենք հավիտենական կյանքի արժանի լինում (Զ 55):

դ. Սուրբ Հաղորդուծության շնորհիվ ենք մենք Տիրոջ մեջ բնակվում, իսկ Տերը՝ մեր մեջ (Զ 57):

ե. Սուրբ Հաղորդուծության շնորհիվ հարուստուն պիտի առնենք վերջին օրը (Զ 55):

զ. Հովհաննեսն իր Ընդհանրական թղթում լրացնում է՝ ասելով. «...Հիսուս Քրիստոսի Արյունը մեզ ամեն մեղքից սրբում է» (Ա Հովհաննես Ա 7 և Մատթեոս ԻԶ 28):

է. Վերջապես՝ Սուրբ Հաղորդուծությունը մեր տոնը և ուրախությունն է (Հովհաննես Զ 56):

Ինչպես տեսնում ենք, Հովհաննեսը Սուրբ Հաղորդուծության ոգին ու էությունն է բացատրում մեզ և խոսում է դրա անհրաժեշտության մասին: Այդ պատճառով էլ մինչև մատնություն գիշերը, Ջատկական տոնին չի սպասում այս խորհուրդը հաստատելու համար: Մի բան, որ արել են երեք Համատես Ավետարանները՝ հակառակ այն բանի, որ իրենք էլ են պատմել հացի բազմացման հրաշքը (Մարկոս Զ 35-44, Մատթեոս ԺԴ 15-21, Ղուկաս Թ 12-17 և Հովհաննես Զ 5-13):

Համատես Ավետարանները հացերի հրաշքի առիթով չեն խոսում Հաղորդուծության խորհրդի մասին, այլ սպասում են մինչև Ջատկական տոնի նախօրյակը:

Անշուշտ, նախ պետք է բացատրեին, թե ինչ է Ջատկական տոնը, որի ժամանակ գառնուկ պիտի մորթեին, որպեսզի միևնույն ժամանակ Քրիստոսի պատարագվելը հասկացվեր և իմաստավորվեր: Եվ այս առիթով պատմում են նաև, թե Քրիստոսը Հաղորդուծության խորհուրդը հաստատեց մեր մեղքերի թողութայան և իրեն հավիտյան հիշելու համար:

Իսկ Հովհաննեսն արդեն խոսել էր այս խորհրդի իմաստի մասին, եթե կուզեք՝ նրա պատարագվելն է պատմում մեզ: Այսպես, Ուրբաթ օրը, այսինքն՝ հրեաների Պատրաստություն օրը, երեկոյան, երբ գառնուկները պիտի մորթվեին Ջատկա-

կան տոնի համար, Հիսուսն էլ էր մորթվում, պատարագվում՝ իբրև «Աստծո Գառ, որ վերցնում էր աշխարհի մեղքը» (Հովհաննես Ա 29):

Իսկ Պողոս առաքյալը, երբ բացատրում է Սուրբ Հաղորդության խորհուրդը, պարզապես ասում է. «Տեր Հիսուսն իր մատնության գիշերը հաց վերցրեց» (Ա Կորնթացիս ԺԱ 23):

Ուրեմն, Հիսուսի պատարագվելն էր ամենից հիմնականն ու հականը: Հովհաննեսի Ավետարանի Սուրբ Հաղորդության մասին պատմածը շատ կարևոր և հական է մեզ համար, թեկուզև այն չի գետեղել, պատմել վերջին ընթրիքին, մատնության գիշերը:

Ասացինք, որ ամենից կարևորը Քրիստոսի պատարագվելն է, որովհետև Սաղմոսի մեջ էլ է գրված. «Ձոհ ու ընծա չուզեցիր դու, այլ մի մարմին պատրաստեցիր ինձ համար: Ողջակեզների մեղքի պատարագները չհավանեցիր: Այն ժամանակ ասացի. «Ահա գալիս եմ ես (ինչպես իմ մասին գրված է օրենքի գրքում)՝ Քո կամքը կատարելու, ո՛վ Աստված» (Եբրայեցիս Ժ 5-7, Սաղմոս Խ 6-8):

Կարծում եմ, այս ապացույցները բավական են ցույց տալու համար, որ Հովհաննեսի Ավետարանի ժամանակագրությունը ճշգրիտ ու վավերական է՝ թե՛ պատմականորեն և թե՛ աստվածաբանական իմաստով:

\* \* \*

Շատ հետաքրքիր կլինի, եթե Համատես Ավետարանների պատմած վերջին ընթրիքի նկարագրությունը համեմատենք Հովհաննեսի Ավետարանի Սուրբ Հաղորդության ճառի հետ: Կնշմարենք, որ շատ նմանության եզրեր գոյություն ունեն դրանց միջև՝ նույնատեսակ գաղափարների, նախադասությունների և նյութերի առումով, մինչև անգամ, զարմանալիորեն, նույն բառերի գործածությունը կհանդիպենք:

Ա. Ինչպես գիտենք, ըստ երեք Համատեսների, Սուրբ Հաղորդության խորհուրդը հաստատվել էր Զատիկական տոնի

նախօրյակին: Նույն ձևով էլ Հովհաննեսի Ավետարանում է Սուրբ Հաղորդության խորհրդի իմաստը բացատրված Զատիկ տոնին. «Եվ հրեաների Զատիկի տոնը մոտ էր» (Հովհաննես Զ 4):

Բ. «Եվ Հիսուսն ասաց նրանց. «Դուք ամենքդ էլ այս գիշեր իմ պատճառով պիտի գայթակղվեք» (Մատթեոս ԻԶ 31, Մարկոս ԺԴ 27):

«Հիսուսն ասաց նրանց. «Սա ձեզ գայթակղեցնում է» (Հովհաննես Զ 62):

Գ. «Պետրոսն ասաց նրան. «Թեև քեզ հետ մեռնելու էլ լինեմ, քեզ չպիտի ուրանամ» (Մատթեոս ԻԶ 35, Մարկոս ԺԴ 31):

«Սիմոն Պետրոսը պատասխան տվեց նրան. «Տեր, ու՞մ մոտ գնանք, դու հավիտենական կյանքի խոսքեր ունես» (Հովհաննես Զ 69):

Դ. Հուդայի մատնության մասին.

«Հիսուսն ասաց. Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ձեզանից մեկը պիտի մատնի ինձ» (Մատթեոս ԻԶ 21, Մարկոս ԺԴ 18, Ղուկաս ԻԲ 21):

«Ես ձեզ՝ տասներկուսիդ, չընտրեցի՞, բայց ձեզանից մեկը սատանա է»: Սա ասում էր Իսկարիոփտացի Սիմոնյան Հուդայի մասին, որովհետև նա էր, որ պիտի մատներ նրան» (Հովհաննես Զ 71-72):

Ե. Սուրբ Հաղորդության հաստատվելուց հետո, Գեթսեմանիում, ձերբակալության ժամանակ, «բոլոր աշակերտները թողեցին նրան ու փախան» (Մատթեոս ԻԶ 56, Մարկոս ԺԴ 50): Նույնն է նաև Սուրբ Հաղորդության ճառից հետո. «Նրա աշակերտներից շատերը հետ քաշվեցին և այլևս նրա հետ չէին շրջում» (Հովհաննես Զ 67):

Զ. Վերջին ընթրիքին խոսվում է նաև նշանի մասին. «Սա արեք ինձ հիշելու համար» (Ղուկաս ԻԲ 19):



Տերը պատվիրում է, որ միշտ կատարենք սրբազան Հաղորդուծության խորհուրդը՝ իբրև մեր մեջ Քրիստոսի հավերժական ներկայութեան նշան, որպեսզի դրանք ճաշակելով (Մարմինը և Արյունը)՝ փրկվենք և հավիտենական կյանքը ժառանգենք:

Նույն ձևով Հովհաննեսի Ավետարանում հրեաները հարցնում են Հիսուսին, թե՞ «Դու ի՞նչ նշան կանես, որ տեսնենք ու հավատանք քեզ»:

Հիսուսը, իբրև կենդանի ու հավիտենական նշան, տալիս է իր Մարմինն ու Արյունը: Դրանք ճաշակելով՝ կփրկվեն ու հավիտենական կյանքի կարժանանային (Հովհաննես Զ 30, 35, 55):

է. Վերջին ընթրիքին խոսվում է նաև Քրիստոսի թագավորութեան մասին: Քրիստոսը, իբրև երկնային թագավոր, կնքում է իր թագավորության ուխտը (Ղուկաս ԻԲ 29-30):

Նույն ձևով Հովհաննեսի Ավետարանում, հացերի հրաշքից հետո, ժողովուրդը խոսում է Քրիստոսի թագավորության հաստատման մասին.

«Հիսուսը, իմանալով, որ պիտի գան իրեն հափշտակեն, որպեսզի թագավոր դարձնեն...» (Հովհաննես Զ 15):

Վերջին ընթրիքից և հացերի հրաշքից հետո, սակայն. «...Հիսուսը միայնակ դեպի լեռը գնաց» (Հովհաննես Զ 15): «...Հիսուսը դեպի Զիթենյաց լեռը գնաց» (Ղուկաս ԻԲ 39):

Կան նաև երկրորդական նկատված խոսակցության նյութեր, որոնց համեմատությունը, կարծում ենք, ավելորդ չի լինի:

ա. Օրինակ՝ Սուրբ Հոգու մասին. «Հոգին է կենդանացնողը» (Հովհաննես Զ 64):

Վերջին ընթրիքի ժամանակ էլ է նույն ձևով խոսվում Հոգու մասին. «...Երբ ճշմարտության Հոգին գա, ամենայն ճշմարտությամբ կառաջնորդի ձեզ» (Հովհաննես ԺԶ 13):

բ. Առաքյալների դավանությունը (Պետրոս):

«Եվ մենք հավատացինք ու իմացանք, թե Դու ես Քրիստոսը՝ Աստծո Որդին» (Հովհաննես Զ 70):

Նույն գաղափարին դարձյալ կհանդիպենք վերջին ընթրի-

քին. «Դուք ինձ սիրեցիք ու հավատացիք, թե Աստծուց ելա» (Հովհաննես ԺԶ 27-30):

գ. Հոր մոտ, երկինք գնալու մասին. «Իսկ ի՞նչ կխորհեք, եթե տեսնեք մարդու Որդուն բարձրանալիս այնտեղ, ուր առաջ էր» (Հովհաննես Զ 63):

Նույն ձևով էլ վերջին ընթրիքին Հիսուսն ասաց. «Հորիցս ելա ու աշխարհ եկա, նորից թողնում եմ աշխարհը և գնում եմ Հոր մոտ» (Հովհաննես ԺԶ 28):

Ուրեմն, համեմատելով Հովհաննեսի Սուրբ Հաղորդութեան ճառը և վերջին ընթրիքի ճառը, տեսնում ենք, որ նույն մթնոլորտն (l'ambiance) է տիրում, նույն գաղափարներն են, և նույն Սուրբ Հաղորդութեան խորհուրդն է, որ հաստատվում է:

## ԵՐՐՈՐԳ ՄԱՍ

### ԳԼՈՒԽ Ա

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԸ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ  
ՍԿԶԲՆԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Ինչպես տեսանք, Սուրբ Հաղորդութեան խորհուրդը հաստատվեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի կողմից մատնության գիշերը՝ նրա մահվան հիշատակի և միևնույն ժամանակ իբրև հոգևոր սնունդ մեզ՝ հավատացյալներին համար: Երբ առաքյալները Հոգեգալստյան օրը Սուրբ Հոգով լցվեցին (Գործք Բ 4), սկսեցին քարոզել Հիսուս Քրիստոսի մասին և նրա պատվերները սովորեցնել նորադարձներին. անշուշտ, նախ՝ հրեաներին և ապա՝ հեթանոսներին: Նորադարձները պետք է նախ մկրտվեին, որպեսզի կարողանային մուտք գործել նոր՝ քրիստոնեական համայնք և ապա Սուրբ Հաղորդութեամբ միանային Հիսուս Քրիստոսի հետ. «Եվ նրանք հարատևում էին առաքյալների ուսուցման, հաղորդութեան, հացի բեկման և աղոթքների մեջ» (Գործք Բ 42):

«Եվ ամեն օր միասիրտ տաճար էին գնում և տներում հաց էին կտրում և ուրախությամբ կերակուր էին ուտում» (Գործք Բ 46):

Տրովադայում, մի Կիրակի օր, Պողոս առաքյալը Հաղորդության խորհուրդը կատարեց հավատացյալների ներկայությամբ, ինչպես կարգում ենք. «Եվ Մեկշաբթի (Կիրակի) օրը, երբ աշակերտները հավաքվել էին հաց կտրելու, Պողոսը քարոզում էր նրանց» (Գործք Ի 7):

Անշուշտ, պետք է նշել, որ առաքելական շրջանում նախնական ձևով էր Սուրբ Հաղորդությունը մատուցվում: Պատարագի խորհուրդը «հաց կտրել» բառերով էր բացատրվում: Այդ ձևով իրագործում էին Քրիստոսի վերջին պատգամը. «Սա արեք ինձ հիշելու համար» (Ղուկաս ԻԲ 19, Ա Կորնթացիս ԺԱ 24), և չարչարանքների ու անմահության խորհուրդը: Սկզբում սա հիշատակի սեղան էր, մյուս կողմից, սակայն, այն իր մեջ ուներ նաև հոգևոր մաս: Հիսուսն ասել էր, թե՛ «Սա է իմ Մարմինն ու Արյունը». սրանք պարզ նմանություններ էին, այլ՝ խորհուրդ, որ իր ծալքերը բացում էր խաչելության և հարության իմաստի մեջ:

Հին կրոնների մեջ նույնպես կար այս վերակենդանության գաղափարը: Օրինակ՝ Ատիսը փռուզիական հեթանոս չաստված էր, որ ամեն տարի վերակենդանանում էր գարնան հետ: Իսկ եգիպտական չաստված Օսիրիսի մարմինը քառասուն մասերի էր բաժանվում՝ իբրև Եգիպտոսի քառասուն նահանգների խորհրդանիշ, այնուհետև միավորվում էր՝ իբրև Եգիպտոսի ամբողջական միացման խորհրդանիշ:

Հաղորդությունը մեկ այլ բարձրագույն խորհուրդ էլ ուներ. այն սիրո և տառապանքի շնորհիվ մարդուն միացնում էր Աստծուն: Ճիշտ է, Հաղորդությունը մահվան հիշատակի ճաշ է, բայց նաև ուրախության տոն է, ինչպես հրեաների Զատիկը, որը հավերժացնում էր անցյալը և միևնույն ժամանակ, սակայն, իրականացնում էր ապագան՝ մինչև Քրիստոսի երկրորդ գալուստը: Ինչպես ասացինք, առաքելական շրջանում Պատարագը ամեն օր ամենապարզ, նախնական ձևով էր կատարվում (Գործք Բ 46):

Սակայն քրիստոնյաները հետզհետե, հրեական ծեսերից ազդվելով, սկսեցին իրենք իրենց համար Պատարագի արարողություններ կազմակերպել: Ըստ ավանդության, երբ առաքյալները հավաքվել էին պաշտամունք կատարելու Հոգեգալստյանը հաջորդող Երեքշաբթի օրը, Հակոբոս առաքյալը, որ Երուսաղեմի առաջին եպիսկոպոսն էր, նրանց ներկայացրեց իր Պատարագը: Երբ նրան հարցրին, թե որտեղից է ձեռք բերել, պատասխանեց. «Չէ՞ որ Տերը, կենդանի է, և ես սրավրա ո՛չ մի բան չեմ ավելացրել և ո՛չ էլ պակասեցրել, սա այն է, ինչ որ լսեցի Տիրոջից»: Այս ավանդությունը գրի է առնվել ԺԲ դարում, ասորի գիտնական-եպիսկոպոս տեր Դիոնեսիոս Պար Սալիպեի կողմից:

Մեր Տիրոջ եղբայր Հակոբոսի Պատարագի մեծ մասը վերցված է Քրիստոսի աղոթքներից, որոնք առաքյալներն անգիր գիտեին և հաճախ գործածում էին իրենց քարոզների մեջ. ուրեմն՝ սուրբ Հակոբոսի Պատարագը նախնի քրիստոնյաների Պատարագի իրական և անվիճելի օրինակն է՝ սահմանված Երուսաղեմի Եկեղեցու գործածության համար, որտեղից ճյուղավորվելով՝ անցավ Փոքր Ասիա և հունական Եկեղեցիներ:

Սուրբ Հակոբոսի Պատարագը մեր Եկեղեցու Պատարագի հիմքն ու նախատիպն է: Այս պատարագամատուցից զատ, Դ դարի սկզբում, սուրբ Գրիգոր Լուսավորիչը Կեսարիայից վերադառնալիս իր հետ, հավանաբար, մեկ այլ պատարագամատուցյց բերեց, որը ժամանակին մյուս Եկեղեցիներում էր գործածվում:

Անշուշտ, այս շրջանում, երբ հայերեն գրեր չունեինք, այդ Պատարագը գործածվում էր հունարեն լեզվով: Սակայն, երբ հայ գրերի գյուտը տեղի ունեցավ, շատ պատարագամատուցյցներ հայերեն թարգմանվեցին, օրինակ՝ սուրբ Բարսեղինը, սուրբ Աթանասինը, Հովհան Ոսկեբերանինը, սուրբ Գրիգոր Նազիանցունը, սուրբ Կյուրեղ Ալեքսանդրացունը, սուրբ Իգնատիոսինը և այլն: Ենթադրվում է, որ որոշ տեղերում դրանք գործածական են եղել: Իսկ Գյուլտ կաթողիկոս (461-478) և Հովհան Մանդակունի (478-490) հայրապետների ջանք

քերով հայկական Պատարագն ավելի ճոխացավ:

Մեր Պատարագամատուցը որոշ հավելումներ կրեց նաև ժ դարում՝ Խոսրով Անձևացու (Գրիգոր Նարեկացու հայրը) կողմից: Հետագայում հավելվեցին նաև սուրբ Գրիգոր Նարեկացու (950-1010) երկու աղոթքները (ԼԳ և ԼԵ): Իսկ «Որ օրհնում ես նրանց, ովքեր օրհնում են քեզ, Տեր...» գոհաբանական աղոթքը գրել է Հովհան Ոսկեբերանը (347-407): ԺԳ դարում Հովհաննես վարդապետ Ոսպնակերն էլ որոշ փոփոխություն արեց: Այսպես, մինչև տպագրության գյուտը Սուրբ Պատարագի կանոնները զանազան ձևերով են գործածվել, իսկ դրանից հետո տպագրված մեկ ձևը պարտադիր դարձավ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու համար: Մեր Եկեղեցին երբեք չի ունեցել և այժմ էլ չունի կրճատված կամ հավելված, օրինակ՝ կաթողիկոսական կամ պարզ քահանայական, մեծ, հանդիսավոր կամ պարզ, թիվ կամ մասնավոր և այլ նման առանձին-առանձին պատարագամատուցյուններ: Մեր Պատարագը միշտ ձայնավոր է եղել, թիվ Պատարագի գրությունը երբեք մեր մեջ մուտք չի գործել:

Մեր այսօրվա Սուրբ Պատարագի արարողությունը, իր հիմնական ձևով, օտար պատարագամատուցի թարգմանություն է, որը, սակայն, դարերի ընթացքում կրած լեզվի կատարելագործությունը, ծիսական ուրույն կերպով և մանավանդ գուտ հայկական երաժշտությունը վերածվել է ազգային գլուխգործոցի: Օրինակ բերելու համար բավական է ունկնդրել Խաչատուր վարդապետ Տարոնեցու (1208 -ին) հորինած «Խորհուրդ խորին...» շարականը, որը երգվում է Սուրբ Պատարագի սկզբում, ուրիշ ոչ մի պատարագամատուցի մեջ չկա. մեր Սուրբ Պատարագի խորհուրդը, որ չափազանց հոգեպարար է և առինքնող<sup>7</sup>:

Մեր երջանկահիշատակ հայրապետները իրենց հոգու ազամանդը բյուրեղացրել են՝ մեզ իբրև ժառանգություն թողնելով

<sup>7</sup> Մեծ երաժշտագետ Վերդին (G.VERDI, 1813-1901) այսպես է արտահայտվում Կոմիտաս վարդապետի Սուրբ Պատարագի երաժշտության մասին. «Երբ ունկնդրում եմ քո Պատարագը, հոգիս հանգչում է»:

հոգևոր և մշակութային անփոխարինելի մի գանձ: Եվ այսպես, մեր Սուրբ Պատարագը միայն կրոնական գանձ չէ, այլ նաև մշակութային անփոխարինելի արժեք է: Այդ պատճառով էլ բոլոր հավատացյալները իրենց միտքն ու խորհուրդը պետք է կենտրոնացնեն աստվածային խորհրդի վրա և պետք է անսայթաք հետևեն նրա հոգեբուխ աղոթքներին ու երգերին:

## ԳԼՈՒԽ Բ

1. Ի՞նչ են ասում Սուրբ Պատարագի խորհուրդը չընդունողները

Ինչպես մանրամասն տեսանք, Սուրբ Պատարագի խորհուրդը հաստատվել է Հիսուս Քրիստոսի կողմից, իսկ առաքյալները առաջին իսկ օրից գործադրեցին Տիրոջ պատվերը: Այսպես, նախ՝ ամեն օր կատարում էին Սուրբ Պատարագի խորհուրդը՝ անշուշտ, իր պարզ ձևով, ապա՝ դարերի ընթացքում մի շարք Եկեղեցիներ այն սկսեցին կատարել Շաբաթ և Կիրակի օրերին ու տերունական և այլ կարևոր տոներին, ինչպես այժմ Հայաստանյայց Եկեղեցում:

Իսկ Կաթողիկե Եկեղեցին ամենօրյա թիվ Պատարագի ձև է շարունակում մինչև այսօր:

Քրիստոսի կողմից հաստատված և առաքյալների կողմից սերնդեսերունդ շարունակված Պատարագի խորհուրդը մի շարք Եկեղեցիներ չեն ընդունում և նույնիսկ հակասուրբզրային են համարում:

Ինչպես գիտենք, ժԶ դարում Լյուծերի Բարեկարգության շարժամբ սկսվեց և ապա բուռն հակաճառությունների պատճառ եղավ նաև Սուրբ Պատարագի խորհուրդը:

Եվ այսպես, այդ նոր շարժման հետևողները մերժում են գոյափոխության վարդապետությունը և հավատում են (Սուրբ Գրերի վկայությունների վրա հենվելով), թե օրհնելուց հետո էլ հացը և գինին անփոփոխ են մնում: Հաղորդության պահին նրանք միայն և միայն Տիրոջ ներկայությունն են տեսնում և ուրիշ ոչինչ: Փրկչի մարմնավոր բացակայությունը չի տրտ-

մեցնում նրանց, քանի որ Սուրբ Հոգու մխիթարությունն ունեն իրենց սրտերում: Եվ վերջապես նրանք Հաղորդությունը կատարում են պարզապես Հիսուսի հիշատակի համար, ինչպես մեր Տերն էր ասել. «Սա արեք ինձ հիշելու համար» (Ղուկաս ԻԲ 19, Ա Կորնթացիս ԺԱ 24, 25):

Այսպիսով, Հաղորդության խորհրդի մեջ միայն պարզ նշան ու հիշատակ են ուզում տեսնել...

Եթե մենք էլ այս ձևով խոստովանենք ու հավատանք, ինչքան անշուք կդառնա Սուրբ Հաղորդության խորհուրդը և ինչքան բան կկորցնի իր վսեմությունից:

Ծննդոց գրքում կարդում ենք, որ ջրհեղեղի պատուհասից հետո Աստված Նոյ նահապետին ուխտի նշան տվեց՝ ծիածանը, որը մարդկային պատմության մեջ առաջին ուխտի նշանը պիտի լիներ: Ինչպես կարդում ենք. «Եվ Աստված ասաց. «Իմ և ձեր միջև... Հավիտենական դարերի համար արած ուխտիս իբրև նշան իմ աղեղը(ծիածանը) ամպի մեջ պիտի դնեմ: Այն պիտի լինի իմ ու երկրի միջև եղած ուխտի նշանը» (Ծննդոց Թ 12-13):

Աստված Նոյին և նրա սերնդին ուխտի նշան է տալիս հավիտենապես. երբ մարդիկ երկնքում ամպ տեսնեին, այլևս ջրհեղեղի մտավախություն չպիտի ունենային, և Աստված, ծիածանը տեսնելով, պիտի հիշեր իր կատարած ուխտը: Ինչպես տեսնում ենք, երբ Աստված առաջին անգամ ուխտ է անում Նոյի, այսինքն՝ մարդկության հետ, ուխտի նշան է տալիս: Սակայն Սուրբ Հաղորդությունը, որ վերջին և հավիտենական ուխտը պիտի լիներ, չափազանց հեռու է այսպիսի ուխտի նշան լինելուց:

Ինչպես հիշում ենք, Հիսուսը մատնության գիշերը վերցրեց հացն ու ասաց. «Վերցրեք, կերեք, սա է Մարմինն իմ»: Եվ գավաթը վերցնելով՝ գոհություն հայտնեց, տվեց նրանց ու ասաց. «Ամենքդ էլ խմեցեք սրանից, որովհետև սա է իմ Նոր Ուխտի Արյունը, որ թափվում է շատերի մեղքերի թողության համար. սա արեք ինձ հիշելու համար» (Մատթեոս ԻԶ 26-28, Մարկոս ԺԴ 22-24, Ղուկաս ԻԲ 19-20, Ա Կորնթացիս ԺԱ 23-26):

Այդ ասվածը և տրվածը պարզ ուխտի նշաններ չէին, այլ ուղղակիորեն մեր Տիրոջ Մարմինն ու Արյունն է բաշխվում մեզ: Եթե պարզ նշանի համար եղած լինեին, այդ դեպքում ոչ ոք չպիտի վախենար դրանք անարժանաբար ուտելուց և խմելուց: Եվ քանի որ Սուրբ Պատարագի ընթացքում հացն ու գինին փոխարկվումով մեր Տիրոջ Մարմինն ու Արյունն էին դառնում, այդ հացից անարժանաբար ճաշակողները իրենց անձի դատապարտությունը կերած ու խմած պիտի լինեին (Ա Կորնթացիս ԺԱ 29):

Քարսեղ հայրապետը (330-379) Սուրբ Հաղորդության մասին ճառ ունի, որը կարդացվում է Ավագ Հինգշաբթի օրը, Սուրբ Պատարագի ընթացքում: Արժե, որ դրանից մի հատված կարդանք, որպեսզի ավելի լավ թափանցենք Սուրբ Հաղորդության խորհրդի մեջ:

«...Եվ արդ, դուք, եղբայրներ, շատ զգուշությամբ ու երկյուղով ձեր սրտերում դրեք տեսնվածները միայն պարզ հաց ու գինի չնկատել, այլ՝ մեծ խորհուրդ, որը ծածկված է մարմնավոր աչքերի տեսողությունից, որ միայն հոգու աչքերով է տեսնվում, որը սրբությամբ են խնդրում, որով կերակրվում է հոգին և ցնծությամբ ուրախանում է աստվածայինը, որովհետև Աստված կարող է դրանք հում մսի և արյան վերածել, ինչպես մի անգամ պատահել է սրբերից մեկին: Քանի որ մեր զգայարանները չեն կարող տանել հում միսն ու արյունը, այդ պատճառով էլ Աստված հացով ու գինով փոխարինեց (տապալորեց). այլ ևս իբրև հաց չնայենք և իբրև գինի չնկատենք, քանզի դա Քրիստոսի ճշմարիտ Մարմինն ու Արյունն է. ոչ ոք թող պարզ սովորությունամբ, դուրյն արհամարհանքով չմոտենա, որովհետև կիզող և այրող կրակ է և սպառիչ՝ մեղավորներին, ուստի նախ պետք է ապաշխարությունամբ սրբվել մեղքերից, որպեսզի մեղքերի բազմությունամբ չկիզվենք կրակի մեջ, քանի որ սպառվում են այն չար ոգիները, ովքեր սկզբում չեն զատվել մեղքից, այլ շղթայված են մնում նրանց մեջ»<sup>8</sup>:

Աստված Իսրայելի ժողովրդին Եգիպտոսից՝ գերության

<sup>8</sup> «Ավագ շաբաթ», (գիրք) Նոր Զուգա (Պարսկաստան), 1895, էջ 371:

երկրից ազատագրեց և մի նշան տվեց. «Եվ սա քեզ նշանի համար պիտի լինի ձեռքիդ վրա և քո աչքերի մեջտեղում՝ հիշատակի համար...» (Ելից ԺԳ 9,16): Սա ուխտի նշան էր:

Մի ուրիշ առիթով Աստված Իսրայելի հետ ուխտ կնքեց հետևյալ ձևով. «Եվ Մովսեսը վերցրեց զոհերի արյունը ու ժողովրդի վրա սրսկեց և ասաց. «Ահա այս բոլոր խոսքերի համեմատ, Տիրոջ՝ ձեզ հետ կնքած ուխտի արյունը»: Ինչպես տեսնում ենք, երբ Աստված ուխտ էր կնքում, նշան էր տալիս, որ է նոխազների արյունը, որովհետև «առանց արյուն թափելու թողութուն չի լինում» (Եբրայեցիս Թ 22):

Իսկ Նոր Ուխտի ժամանակ, երբ մեր Տերը հաստատում էր այն, այլ նշանի անհրաժեշտություն չկար այլևս, քանի որ Իր անձով պիտի լիներ այդ Նոր Ուխտը (Արյուն և Մարմին՝ Հացն ու գինին):

Հայր Աստված երկու անգամ վկայեց Իր Որդու մասին, նախ՝ մկրտության ժամանակ. «Սա է իմ սիրելի Որդին, որին հավանեցի» (Մատթեոս Գ 17, Մարկոս Ա 11, Ղուկաս Գ 22), և ապա այլակերպության (Թաբոր) լեռան վրա. «Սա է իմ սիրելի Որդին, որին հավանեցի, նրան լսեք» (Մատթեոս ԺԷ 5, Մարկոս Թ 6, Ղուկաս Թ 35):

Ինչպես տեսանք, մկրտության խորհրդի պահին Հայրը հայտնվում է Որդուն՝ ասելով. «Սա է իմ սիրելի Որդին»: Այդ պատճառով էլ մկրտությունն անվանել են Աստվածհայտնություն, որովհետև Աստծո Որդին հայտնվում է մարդկությունը մկրտության խորհրդի միջից:

Երկրորդ՝ այլակերպության խորհրդի միջից. Թաբոր լեռան վրա հայրական ձայնը դարձյալ ասում է. «Սա է իմ սիրելի Որդին, որին հավանեցի, նրան լսեք»:

Երրորդ անգամ, վերջին ընթրիքի խորհրդավոր պահին, Քրիստոսն ինքն է ասում. «Սա է Նոր Ուխտի իմ Մարմինն ու Արյունը. սա արեք ինձ հիշելու համար»:

Ուրեմն՝ աստվածային էությունը, մարմնանալով Սուրբ Կույս Մարիամից, հայտնվում է մարդկությունը:

Մարդացած Աստվածը Սուրբ Հաղորդությունը բաշխվում է մարդկությունը:

Սիրելի Որդին աշխարհ էր եկել Իր ժողովրդին իրենց մեղքերից փրկելու համար (Մատթեոս Ա 21), ինչպես ասաց նաև Հովհաննես Մկրտիչը. «Ահա Աստծո Գառը, որ վերցնում է աշխարհի մեղքը» (Հովհաննես Ա 29):

Նույն ձևով է նաև Քրիստոսի Մարմինը և Արյունը, «...որ թափվում է շատերի մեղքերի թողության համար» (Մատթեոս ԻԶ 28,29):

Հայրական ձայնն ասում է. «Նրան լսեք»:

Քրիստոսն ասում է. «Սա արեք ինձ հիշելու համար»:

## 2. «Սա արեք ինձ հիշելու համար»

(Ղուկաս ԻԲ 19, Ա Կորնթացիս ԺԱ 24):

«Սա արեք ինձ հիշելու համար»: Այս համարը գայթակղության քար է եղել մի շարք եկեղեցիների համար, որոնք այս խոսքի, խորհրդի մեջ միայն հիշատակ են տեսնում և ուրիշ ոչինչ: Կարծես թե Հիսուսն այն հաստատել էր, որպեսզի մարդիկ հիշեն իրեն: Այդ դեպքում որքա՛ն փոքր ու անիմաստ կդառնա Հաղորդության խորհուրդը, որքա՛ն կպակասի նրա խորհուրդն ու իմաստը: Հիսուսը պարզապես իրեն հիշելու համար այսպիսի բան հաստատելու կարիք չուներ: Դրա համար բավարար էին նրա վարդապետությունը, քարոզները, հրաչքները և նորահայտ, վեհ ու աստվածային գաղափարները, որոնցով լիացնում և զբաղվում էր իր ունկնդիրներին, և բոլորը զարմանում էին նրա վարդապետության վրա (Մատթեոս Է 28, Մարկոս Ա 22):

Ճիշտ է, մեր Տերը, Ավագ Շաբաթվա մեջ, հիշատակ պահելու համար որոշ բաներ պատվիրել էր:

Բեթանիա գյուղում, ընթրիքի պահին, Ղազարոսի քույրը՝

Մարիամը, իր անհուն սիրո երախտագիտութիւնը հայտնելու համար, թանկագին յուղ վերցնելով, Հիսուսի ոտքերը սրբեց: Աշակերտներից մեկը՝ Հուդան, դժգոհութիւն հայտնեց այդ ավելորդ վատնումի համար՝ պատճառաբանելով, թե կարող էին մեծ գումարով վաճառել և գումարը աղքատներին տալ: Սակայն մեր Տերը գովեց Մարիամի երախտագիտական արարքը և հենց նույն պահին իր աշակերտներին պատվիրեց՝ ասելով. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, թե ամբողջ աշխարհում, որտեղ որ Ավետարանը քարոզվի, սրա արածն էլ պիտի պատմվի՝ իրեն հիշատակ լինելու համար» (Մատթեոս ԻԶ 13, Մարկոս ԺԴ 9):

Նույն ձևով Տերը գովեց նաև աղքատ այրու զոհողութիւնը, որն իր ամբողջ ապրուստը հանդիսացող երկու լուման գցեց տաճարի գանձանակը, և դա Քրիստոսի Ավետարանի մեջ իր համար հավիտենական հիշատակ եղավ (Մարկոս ԺԲ 41-44, Ղուկաս ԻԱ 1-4):

Ահավասիկ, այս երկու արարքներից մեկը երախտագիտական սիրո արարքի, մյուսը ճիշտ զոհողութիւն ոգու համար հիշատակութիւն արժանի եղան:

Ուրեմն Սուրբ Հաղորդութիւն խորհուրդն էլ նույն ձևով պիտի հասկանանք՝ նրան հիշելու կամ նրան հիշատակ լինելու համար: Սա նշանակում է՝ պարզ հիշատակի ձևով ընկալել փրկագործութիւն մեծ խորհուրդը, որ մեր մեղքերի թողութիւն համար կատարվեց: Բառերը պակասում են մեր զգացումները բացահայտելու համար. ինչպե՛ս կարելի է Քրիստոսի հաստատած Սուրբ Հաղորդութիւն խորհուրդը այդ աստիճանի իջեցնել և արժեզրկել՝ ասելով, թե սա անում են պարզապես Տեր Հիսուսի հիշատակի համար: Այսպես մի շարք եկեղեցիներ «բարեկարգութիւն» անվան տակ ուրանում են մեծ փրկագործութիւն «Խորհուրդ խորին»-ը:

Մենք՝ Հայաստանյայց Եկեղեցու զավակներս, հացի և գինու մեջ հավատով տեսնում և զգում ենք մեր Փրկիչ Աստծուն՝ ոչ միայն նրա հոգևոր ներկայութիւնը, այլ նաև՝ տեսանելի և զգալի ներկայութիւնը: Դրանք Հիսուսի մահ-

վան և մեծ սիրո զոհողութիւն կենդանի վկաներն են մեզ համար: Սրանից ավելի մեծ սեր ոչ ոք չի ունեցել (Հովհաննես ԺԵ 13): Միևնույն ժամանակ այն մեզ պիտի հուշի, որ Աստծո Որդին մարմնացավ, մեզ նման մարդ եղավ, որպեսզի մեր մեղքերը քավի՝ Հաղորդութիւն մը, անշուշտ, որ մեզ ներկայացնում է հացի և գինու ձևով:

**«Եթե չուտեք Մարդու Որդու Մարմինը և չխմեք Նրա Արյունը, ձեր մեջ կյանք չեք ունենա»** (Հովհաննես Զ 54):

Այսպիսով, երբ հավատում ենք, թե Սուրբ Հաղորդութիւն մեջ մեր Փրկիչ Քրիստոսը Մարմնով և Արյամբ ներկա է, արդարանում ենք, իսկ երբ ճաշակում ենք այն, փրկվում ենք. «Որովհետև մեկը սրտով հավատում է արդարանալու համար ու բերանով խոստովանում է փրկվելու համար» (Հռոմեացիս Ժ 10):

Նրանք, ովքեր Սուրբ Հաղորդութիւնը չեն հավատում և չեն հաղորդվում, փարիսեցիներին ու օրինականներին են նմանվում, որոնք, սրբակյացներ լինելով, իրենց մեջ Աստծո Խորհուրդն անարգեցին, որովհետև Հովհաննեսի մկրտութիւնը չմկրտվեցին (Ղուկաս Է 20): Նույն ոգին է երևում և շարունակվում:

Սուրբ Հաղորդութիւնը, նախ, մեր հարատև սնունդն է, ավելացնում է աստվածային շնորհը և դեղ է մեր ամենօրյա մեղքերին: Նա, ով ասում է՝ «մեղք չունեմ», արդեն խաբուս է ինքն իրեն, և նրա մեջ ճշմարտութիւն չկա, այսպես է ասում Հովհաննես առաքյալն իր Ընդհանրական թղթում (Ա Հովհաննես Ա 8):

Իսկ «եթե խոստովանենք մեր մեղքերը, հավատարիմ ու արդար է նա՝ մեր մեղքերին թողութիւն տալու և մեզ ամեն անիրավութիւնից սրբելու համար» (Ա Հովհաննես Ա 9): Անշուշտ, մեր մեղքերի համար թողութիւն կարող ենք ստանալ միայն Սուրբ Հաղորդութիւն շնորհիվ (Ա Հովհաննես Ա 7, Մատթեոս ԻԶ 28):

Ինչպես Հովհան Մանդակունի հայրապետն է ասում. «Նրանք, ովքեր հավատում և երկյուղածութիւն մտեսնում Քրիստոսին, լուսավորվում են Սուրբ Հոգով և օրեօր

առաքինի գործերով վեր են բարձրանում, որովհետև Տերը մեր մեջ բնակվում է Սուրբ Հաղորդությամբ» (Հովհաննես Զ 5-7):

**3. Սուրբ Պատարագը. «Մեղքի համար Պատարագ պետք է» (Եբրայեցիս Ժ 18)**

Սուրբ Պատարագը առաջնային տեղ է գրավում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու սուրբ խորհուրդների մեջ:

Սուրբ Պատարագը, խաչի գոհը ներկայացնելու և Սուրբ Խորանի վրա շարունակելու համար, իր անձը նվիրաբերած Հիսուս Քրիստոսի Մարմնի և Արյան գոհաբերությունն է: Այսպիսով, Սուրբ Հաղորդությունը ոչ միայն խորհուրդ է, այլ նաև՝ քավչարար ողջակեզ, որը մատուցվում է Աստծուն՝ ողջերի և մեռածների համար: Իբրև ողջակեզ՝ այն Գողգոթայի ողջակեզի շարունակությունն ու գործադրումն է, որտեղ մեր Փրկիչը, իբրև Քահանա, իր Մարմինը և Արյունը գոհ է մատուցում Աստծուն՝ գինու և հացի ձևերի ներքո:

Սուրբ Պատարագը մատուցվում է ոչ միայն ի քավություն և ի թողություն ողջերի և մեռածների մեղքերի, այլ նաև՝ ի հիշատակ Քրիստոսի խաչի մահվան: Սուրբ Պատարագը ներկայացնում է Գողգոթայի Պատարագը, սակայն այն ոչ միայն մեր Տիրոջ մահը ներկայացնող, այլ նաև իրական պատարագ է, որի մեջ մատուցողն ու մատուցվողը, ընդունողն ու տվողը ինքը Տերն է՝ նույնիսկ քահանայի ձևով մատուցվելիս:

Այնպես որ խորություն և էություն մեջ Գողգոթայի Պատարագը և մեր Եկեղեցու՝ Սուրբ Սեղանի վրա մատուցված Պատարագները նույնն են:

Իսկ մի շարք Եկեղեցիներ Պատարագը կատարված են համարում և իրենց տեսակետներն առաջ քաշելու համար հետևյալ համարներն են մատնանշում:

**«Բայց Քրիստոսը, մեկ գոհ մատուցելով մեղքի համար, մշտնջենապես նստեց Աստծո աջ կողմում» (Եբրայեցիս Ժ 12, 14):**

**«Քրիստոսը մեկ անգամ իբրև պատարագ մատուցվեց շա-**

**տերի մեղքերը վերցնելու համար» (Եբրայեցիս Թ 28, Ժ 10):**

**«Մեղքի համար Պատարագ պետք է» (Եբրայեցիս Ժ 18):**

Ուրեմն, այսպիսով, մի շարք Եկեղեցիներ վերոհիշյալ տներով Սուրբ Պատարագը կատարված են համարում և իրենց պաշտամունքից խորություն ու ձևով վերացնում այն:

Նախ պետք է ասենք, որ այդ Եկեղեցիները մեզ վրա այն տպավորությունն են թողնում, կարծես թե Հիսուսը հրեական Մովսիսական օրենքին պետական հարված է (Goup d'Etat) հասցրել, և ինչը որ Մովսիսական օրենքի մեջ է, պետք է քանդել ու չընդունել: Բայց, ընդհակառակը, Քրիստոսի վարդապետությունը, այսինքն՝ քրիստոնեությունը, Մովսիսականության շարունակությունը, ամբողջականացումն է, ինչպես և մեր Տերը հաստատեց՝ ասելով, որ ինքը եկել էր օրենքը և մարգարեությունները կատարելու և լրացնելու և ոչ թե ջնջելու կամ քանդելու (Մատթեոս Ե 17): Այս կետը մանրամասնորեն բացատրել ենք արդեն մեր նախորդ գրքում<sup>9</sup>:

Ինչ որ կատարում էին Հին Ուխտում, ստվերն էր, մի տեսակ նախապատրաստականը Նոր Ուխտի: Ինչպես օրինակ՝ աղջնակի՝ տիկնիկի հետ խաղալու և գուրգուրանքի մեջ ապագայի մայրությունն է երևում, նույն ձևով էլ, երբ հրեաները Հին Ուխտի արարողություններն էին կատարում, ապագայի քրիստոնեությունն էր, որ արտացոլվում էր դրանց մեջ:

Հենց այդ պատճառով էլ Պողոս առաքյալն կորնթացիներին հղված իր ուղերձում նույն ձևով բացատրում է՝ ասելով. «Զեմ ուզում, որ անգետ լինեք, եղբայրներ, որ մեր հայրերը բուլորն էլ ամպի տակ էին, ու բուլորն էլ ծովից անցան, և բուլորն էլ Մովսեսով մկրտվեցին ամպի ու ծովի մեջ, ու բուլորն էլ նույն հոգևոր կերակուրները կերան, և բուլորն էլ նույն հոգևոր ըմպելիքները խմեցին, որովհետև խմում էին այն հոգևոր վեմից, որը զնում էր նրանց հետ, ու այդ վեմը Քրիստոսն էր» (Ա Կորնթացիս Ժ 1-4):

<sup>9</sup> Վաչե ծայրագույն վարդապետ Իգնատիոսյան, Բարեխոսություն Սրբոց, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1978, Երևան, Մոմ, 1993.

Քրիստոսը նույնպես, երբ հրեա ժողովրդին պիտի խոսեր Սուրբ Հաղորդության մասին, անապատում կերած մանանայի օրինակով էր այն բացատրում, որովհետև մանանան ապագայի Սուրբ Հաղորդության խորհրդանիշն էր:

Քրիստոսի օրոք աշակերտները բաներ էին անում, որոնց նշանակությունը չէին հասկանում: Այդ մասին Հովհաննեսը գրում է. «Եվ Նրա աշակերտներ սկզբում այս բաները չհասկացան, բայց երբ Հիսուսը փառավորվեց, այն ժամանակ հիշեցին, թե դրանք Նրա մասին էին գրվել, և թե իրենք էլ այդ էին արել Նրան» (Հովհաննես ԺԲ 16):

Մենք նույնպես, եթե լավ հասկանանք Քրիստոսի վարդապետության հոգին, Հիսուսի աշակերտների նման շատ լավ կհասկանանք նաև, թե ինչու էին հրեաներն այն կատարել հիշյալ ձևով, իսկ մենք այժմ պետք է կատարենք մեկ այլ ձևով: Տարբերությունը ձևի մեջ է, որովհետև հոգին նույնն է, ինչպես առաքյալն է ասում. «Պաշտոնները զանազան են, բայց նույն Տերն է տալիս» (Ա Կորնթացիս ԺԲ 5):

Նույն Տեր Հիսուս Քրիստոսն է Հին Ուխտի և Նոր Ուխտի Բարձրագույն Հեղինակը. «Ամեն ինչ Քրիստոսով ստեղծվեց» (Կողոսացիս Ա 16): Մեկ ուրիշ տեղ. «Ամեն ինչ Նրանով եղավ, առանց Նրա ոչինչ չեղավ, ինչ որ եղել է» (Հովհաննես Ա 3):

Այժմ գանք վերոհիշյալ տների ուղիղ մեկնությունը. «Քրիստոսը մեկ անգամ իբրև պատարագ մատուցվեց՝ շատերի մեղքերը վերցնելու համար» (Եբրայեցիս Թ 28, Ժ 10):

«...Այլևս մեղքի համար պատարագ պետք չէ» (Եբր. Ժ 18):

Ըստ մի շարք Եկեղեցիների, Պատարագը կատարված և ավարտված բան է քրիստոնյաների համար: Ծիշտ է: Սակայն հասկանանք, թե առաքյալը ո՞ր պատարագի մասին է խոսում: Խոսքը Հին Ուխտի՝ գառնուկով պատարագի մասին է: Սա հստակ և որոշակի պետք է լինի մեզ համար. չի խոսվում Քրիստոսի և առաքյալների կողմից կիրարկված և հաջորդաբար մինչև մեզ հասած Սուրբ Պատարագի մասին:

Առաքյալը դրա մասին գրել է, որովհետև դեռևս Հին Ուխտի

գառնուկով պատարագները շարունակվում էին նրա օրոք, և Քրիստոսի խաչի վրա պատարագվելը ի դերև էր ելնում, որն այսուհետև բուն և հավիտենական Պատարագ պետք է լիներ հավատացյալների համար: Եվ քանի որ «Քրիստոսը մեկ անգամ պատարագվեց և մշտնջենավորապես կատարյալ դարձրեց սրբվածներին», հավիտենական փրկություն եղավ, շատերի մեղքերը վերցրեց. այդ պատճառով էլ այլևս Մովսիսական ծեսով մեղքի համար գառնուկով պատարագի անհրաժեշտություն չկա: Ինչպես տեսանք, Հին Ուխտի յուրաքանչյուր պատարագի մեջ առանձին-առանձին գառնուկներ էին մորթվում, և մյուս, հաջորդ պատարագի համար անօգուտ էր դրանց արյունը: Դրա համար էլ առաքյալը գրում է, որ Քրիստոսը մեկ անգամ զոհվեց և հավիտենական փրկություն եղավ, այլևս ուրիշ զոհի անհրաժեշտություն չկա. Նրանով ստացանք մեր փրկությունը:

Մեր մատուցած Սուրբ Պատարագն էլ միշտ այս մեկ անգամ զոհված հավիտենական Գառնուկն է, ինչպես որ Տերն էլ էր հաստատել:

Հրեաները մեծ բծախնդրությամբ էին կատարում սովերական պատարագները՝ ամեն առավոտ և երեկո: Սա մեզ համար օրինակ է, որպեսզի մենք էլ նույն բծախնդրությամբ մատուցենք Քրիստոսի Պատարագը (Ելից ԻԹ 38-39, Թվոց ԻԸ 3-4, Եզեկիել ԽԶ 13-15 և այլն):

Այս առիթով հիշենք նաև առաքյալի հետևյալ պատգամը. «Զգուշացեք, չլինի թե մերժեք Նրան, ով խոսում է ձեզ հետ, որովհետև, եթե նրանք երկրի վրա Աստծո պատգամները խոսողին մերժելով՝ չազատվեցին, որչափ ավելի մենք չպիտի ազատվենք, եթե երկնքից խոսողից երես թեքենք» (Եբրայեցիս ԺԲ 25): Հին պատարագը, որ պիտի խափանվեր, փառքով էր, ինչքան ավելի փառքով կլինի այն, որ հավիտենական է (Բ Կորնթացիս Գ 11):

Մի ուրիշ տեղ Եսայի մարգարեն ահա թե ինչ է ասում Հին Ուխտի Պատարագի մասին.

«...Ո՛վ Իսրայել, քո ողջակեզների ոչխարները չբերեցիր ինձ Եվ քո զոհերով չփառավորեցիր ինձ, ...և քո զոհերի ճար-



պով չկշտացրեցիր ինձ» (Եսայի ԽԳ 23-24):

Անշուշտ, այժմ Տերը մեզանից՝ քրիստոնյաներիցս, պիտի պահանջի, որ փառավորենք Տիրոջը և Սուրբ Խորհրդի օրհնության երգերով կշտացնենք նրան:

Ինչպես տեսանք, առաքելական սկզբնական շրջանից իսկ պատարագ էին մատուցում՝ հաց կտրելու անվան տակ (Գործք Բ 42, 46, Ի 7):

Իսկ Եբրայեցիս ուղերձում հեղինակը պատվիրում է՝ ասելով. «Ուստի Քրիստոսի ձեռքով միշտ Աստծուն օրհնության Պատարագ մատուցենք» (Եբրայեցիս ԺԳ 15): Պատարագ, որ այլևս գառնուկի զոհաբերությամբ չպիտի լիներ, այլ մեր շրթունքներով, որոնք նրա անունն են դավանում, թե՛ «Դու ես Աստծո հավիտենական Գառը, որ աշխարհի մեղքը վերցրեցիր»:

Նույն ձևով Պետրոս առաքյալն էլ է ասում. «Հիսուս Քրիստոսի ձեռքով Աստծուն հաճելի հոգևոր Պատարագներ մատուցենք» (Ա Պետրոս Բ 5): Երբ Իսրայելի ժողովուրդն ազատագրվեց Եգիպտոսից՝ գերության երկրից, Մովսեսն Աստծո հրամանով Զատիկական պատարագներ սահմանեց, որպեսզի միշտ երախտագիտությամբ հիշեն իրենց Փրկիչ Աստծուն: Եվ մարգարեները սա միշտ պիտի հիշեցնեին Իսրայելի ժողովուրդին. «Ո՛վ Իսրայել, մ՛ի մոռացիր քո Տեր Աստծուն, որ քեզ Եգիպտոսից՝ գերության երկրից ազատեց, փրկեց»: «Ես եմ քո Տեր Աստվածը, որ քեզ հանեցի Եգիպտոսի՝ ստրկության երկրից» (Ելից ԺԶ 6, Թվոց ԻԳ 22, Սաղմոս ՀԸ, Եսայի ԽԸ 20, Երեմիա Բ 6 և այլն):

Որչա՛փ առավել մենք պետք է հիշենք մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսին, որ զոհվելով՝ պատարագվեց և իր թանկագին արյունը թափելով՝ փրկեց մեզ<sup>10</sup>: Որքա՛ն առավել մենք՝ հավատացյալներս, երախտագիտությամբ պետք է հիշենք և

<sup>10</sup> Քրիստոսի անհուն սերն ու զոհողությունը նկարագրելու համար միջին դարում հայ մանրանկարիչները խաչելության պատկերի վրա նկարում էին նաև բույնի մեջ ծվարած հավալուսն (ԹբհկչՋ), որն իր ձագերին կերակրում է իր պատուված կողից՝ հետևյալ գրությունով. «Իբրև օրինակ Քրիստոսի. հավալուսնը պատուեց իր կողը և ձագերին կերակրեց: Քրիստոսն իր կողը պատուեց և Արյունավ գնեց մեզ»:

կատարենք միակ փրկագործության Սուրբ Պատարագը, որպեսզի «իբրև զավակներ՝ Մարմնին և Արյանը հաղորդ լինենք, Ինքն էլ նույն ձևով մեզ բաժնեկից լինի» (Եբրայեցիս Բ 14):

## ՉՈՐՐՈՐԳ ՄԱՍ

### ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ԽՈՐՀՈՒՐԳԸ

Այժմ անդրադառնանք սուրբ և անմահ Պատարագի արարողությանը, որն իր մեջ արտահայտում է.

- ա. Վերջին ընթրիքի հիշատակ,
- բ. Հիսուս Քրիստոսի փրկարար զոհագործում,
- գ. Հավատացյալի հոգևոր միացում Քրիստոսի հետ:

Առաջինն, ինչպես արդեն իմացանք, մեր Տերն ինքը պատվիրեց. «Սա արեք ինձ հիշելու համար»:

- Երկրորդը բուն խորհուրդն է:
- Երրորդը նպատակն է՝ միանալ Աստծուն (Հովհաննես Զ 55):
- Սուրբ Պատարագի արարողությունն առաքյալների օրոք շատ պարզ էր, այնուհետև, հաջորդաբար շարունակվելով Եկեղեցու մեջ, Սուրբ Պատարագի խորհուրդը կատարելու համար կանոններ և սովորություններ հաստատվեցին հետևյալ պայմաններով.

- ա. Զեռնադրված (օծված) պաշտոնյա.
- բ. Հաց և գինի.
- գ. Աղոթք:
- ա. Խորհրդակատար պատարագիչը ձեռնադրությունը և օծ-

մամբ քահանայական աստիճան ունեցող եկեղեցական պիտի լինի:

բ. Այս սրբազան խորհրդի համար պետք է գործածվի մաքուր և զուտ ցորենի ալյուրից պատրաստված թարմ բաղարջ (անթթխմոր հաց) և անապական գինի՝ առանց ջուր խառնելու:

գ. Պատարագիչը պետք է հավատով և երկյուղածությամբ օրհնություն ու սրբագործության քահանայական աղոթքներ ասի:

Պատարագիչ քահանայից բացի կան նաև դպիրներ և սարկավազներ:

Դպիրները ներկայացնում են ժողովրդին և ինչ որ ասում են, ավելի ճիշտ՝ երգում են, կատարում են ժողովրդի կողմից՝ լինեն դրանք որպես պատասխան, որպես գոհունակություն կամ խնդրանք:

Իսկ պատարագիչ քահանայի և ժողովրդի (դպիրների) միջև միջնորդը սարկավազն է:

Սարկավազը քահանայի օգնականն է՝ սպասարկողի դերում:

Նա նաև Աստծո սպասավորն ու պաշտոնյան է՝ Նրա Սուրբ Սեղանի, Նրա Խոսքի (Ավետարանի ընթերցմամբ), այնպես, ինչպես սուրբ Ստեփանոսը եղավ նախասարկավազ: Բայց սարկավազի ամենից կարևոր պաշտոնը միջնորդ լինելն է: Նա իր հանգամանքով ուշադիր հետևում է արարողություններին, և երբ կարևոր պահ է մոտենում, անմիջապես դառնալով ժողովրդին, նրան ուշադրություն է հրավիրում, հրահանգներ ու խորհուրդներ է տալիս, երբեմն էլ ժողովրդի կողմից պատարագիչ քահանային ուղղված խոսքեր է ասում:

Սուրբ Պատարագի արարողությունը բաժանվում է հինգ մասի, և այդ մասերից ոչ մեկը չենք կարող զեղչել, որովհետև, նախ, դրանք իրար հետ կապված են և յուրահատուկ

սկիզբ, ընթացք ու ավարտ ունեցող ամբողջություն են կազմում: Ապա՝ յուրաքանչյուր մաս չափազանց կարևոր և կենսական դեր ունի Սուրբ Պատարագի ըմբռնման մեջ, և բոլորն էլ լրացնում են իրար՝ մեկ ամբողջություն, միություն կազմելով:

- Ա. Պատրաստություն (Զգեստավորում)
- Բ. Պաշտամունքի սկիզբ (Մուտք)
- Գ. Երեխաների (չմկրտվածների) Պատարագ (Կատարում)
- Դ. Հավատացյալների Պատարագ (Ավարտ)
- Ե. Սրբագործություն (Փակում):

## ԳԼՈՒԽ Ա

### ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Պատարագի արարողության սկզբում պատարագիչ քահանան պետք է խորհրդաբար զգեստավորվի: Նա մեկ կամ երկու սարկավազի հետ առանձնանում է ձախակողմյան ավանդատանը, որտեղ Պատարագի զգեստներն են պահված. այնտեղ նախ սարկավազներից յուրաքանչյուրն իրենց աստիճանի համեմատ զգեստավորվում են, հետո փոխեփոխ բոլորն ասում են Սաղմոս ՃԼԲ. «Հիշիր, Տեր, Դավթին և նրա ամբողջ հեզությունը...»: Այնուհետև քահանան առանձին ասում է հետևյալ աղոթքը. «Մեր Տեր Հիսուս Քրիստոս, Դու, որ լույսը հազել ես իբրև զգեստ...» (Սաղմոս ՃԴ 2) և այլն: Այդ պահին սարկավազները մոտենում են և հագցնում նրան: Զգեստի յուրաքանչյուր մասի համար հատուկ օրհնության և մասնավոր աղոթքներ կան: Պատարագի զգեստների օրինակները վերցված են Ահարոնի քահանայական զգեստների օրինակներից (Ելից ԻԸ 4-40, ԻԹ 5-6, Ղևտացվոց Ը, ԺԶ 4):

Այս զգեստավորմամբ քահանան ծածկում է իր մեղավոր անձը և Պատարագ է մտնում իբրև Քրիստոսի սպասավոր՝ Քրիստոսի փոխարեն: Ուրեմն, զգեստավորումը խորհրդանշան

չունւմ է քահանայի մերկացումն իր մեղավոր զգեստից. «...Որը պղծութեան զգեստ է... և արդարութեան լույսով զարդարվել, որպեսզի արժանի լինի Տիրոջից բխած զգեստավորման լույսը հագնելու»:

Ներսես Լամբրոնացին (1153-1198) իբրև կանոն ավանդում է հետևյալը. «Նրանք, ովքեր Սուրբ Պատարագ պիտի կատարեն, պետք է պատշաճ զգեստներ հագնեն և զարդարեն Աստծո տաճարը, այնպես, ինչպես անհրաժեշտ է»: Պատարագիչը զգեստավորվելուց հետո ասում է. «Թող իմ անձը Աստծով ցնծա, քանզի փրկութեան զգեստ և ուրախութեան պատմուճան հագցրեց, փեսայի պես գլխիս պսակ դրեց և հարսի պես ինձ զարդարելով և մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհներով զարդարեց»: (Եսայի ԿԱ 10)

## ԳԼՈՒԽ Բ

### ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՍԿԻԶԲԸ

Զգեստավորվելուց հետո պատարագիչը, առաջնորդվելով, խնկարկութեամբ ու թափորով դուրս է գալիս ավանդատնից և կանգնում է բեմի առջև. այդ պահին դպիրներն ու ժողովուրդը, ոտքի կանգնելով, երգում են «Խորհուրդ խորին, անհաս, անսկիզբն...» շարականը՝ հորինված ինչպես փարգապետ Տարոնեցու կողմից<sup>11</sup>: Բեմի առջև տեղի է ունենում ձեռքերի լվացում: Պատարագիչն ու սարկավագը դարձյալ փոխեփոխ Սաղմոս ԻԶ են ասում. «Սրբութեամբ իմ ձեռքերը պիտի լվանամ ու քո սեղանի շուրջը պիտի լինեմ, ո՛վ Տեր...», որի իմաստը սրտի և հոգու սրբությունն ու մաքրությունն է խորհրդանշում: Այս լվացման արարողությունը Մովսիսական օրենքից է գալիս, ինչպես Տերը պատվիրել էր. «Ահարոնը և նրա որդի-

<sup>11</sup> Այս շարականը գրել և երգել է ինչպես փարգապետ Տարոնացին՝ Հովհաննես Զ մեծաբար կաթողիկոսի արտոնությունով, սպասարար Զաքարի բանակում, շարժական սեղանի վրա մատուցած հանդիսավոր Սուրբ Պատարագի առիթով՝ 1208-ին: (Տես Փառեն եպիսկոպոս. «Հասկ» ամսագիր, Անթիլիաս-Լիբանան, 1950, թիվ 2, էջ 40):

ները ձեռքերն ու ոտքերը պիտի լվանան խորան մտնելուց առաջ՝ պաշտոն կատարելու համար» (Ելից Լ 19-20):

Մաքրվելուց հետո պատարագիչ քահանան խնդրում է Սուրբ Աստվածածնի և բոլոր սրբերի բարեխոսությունը՝ ասելով.

«Եվ վասն Սրբուհույ Աստուածածնին բարեխոսութեանն, Տէր, ընկա՛լ զաղաչանս մեր և կեցո զմեզ» (Սրբուհի Աստվածածնի բարեխոսութեամբ, Տե՛ր, լսիր մեր աղաչանքները և ապրեցրու մեզ):

Սարկավագը քարոզ է կարդում. «Սուրբ Աստվածածին և բոլոր սրբեր, բարեխոսեցեք երկնային Հորը...»:

Պատարագիչն աղոթում է. «Ընդունիր, Տե՛ր, մեր աղաչանքները՝ բարեխոսութեամբ Սուրբ Աստվածածնի՝ քո Միածին Որդու անարատ ծնողի և բոլոր սրբերի աղաչանքով և այսօրվա շնորհիվ: Լսիր մեզ, Տե՛ր ու ողորմիր. ներիր, քավիր ու մեր մեղքերին թողութեան տուր: Արժանի արա մեզ գոհութեամբ փառավորելու Քեզ՝ Որդուդ և Սուրբ Հոգուդ հետ...»: Զեռքերը լվացած պատարագիչը ամեն բանից առաջ խնդրում է Սուրբ Աստվածածնի և բոլոր սրբերի բարեխոսությունը:

Պատարագիչը Սուրբ Աստվածամոր բարեխոսությունն է հայցում, որպեսզի բոլորս էլ լցվենք նրա հավատով: Քանի որ Աստվածամայրն իր այդ հավատի շնորհիվ կարողացավ ճշմարտապես և մարմնապես ունենալ Աստծո Որդուն, որն իր մեջ բնակվեց. մենք՝ հավատացյալներս, որ պատարագի մեջ պիտի մտնենք, խնդրում ենք Աստվածամոր հավատը, որպեսզի մենք էլ կարողանանք ճշմարտապես Քրիստոսին մեր մեջ ընդունել (Հովհաննես Զ 57):

Հավատացյալները միշտ ապավինում են Աստվածամոր հավատին և նրանից ներշնչվելով՝ նրա որդիներն են դառնում: Եթե Աստվածամայրը նման հաստատուն հավատ չունենար ամենակալ Աստծո հանդեպ, Միածին Որդին՝ Հիսուս Փրկիչը, չէր կարող, մարմին հագնելով, աշխարհ գալ իբրև մարդ, որովհետև Աստված միայն հավատի մարդկանց մեջ կարող է

բնակվել և գործել, ինչպես կարդում ենք. «Եվ այնտեղ՝ Նազարեթում, շատ հրաշք չէր կարող անել նրանց անհավատության պատճառով» (Մատթեոս ԺԳ 58, Մարկոս 2 5-6): Աստվածամոր մասին առանձին ուսումնասիրությունն ունենք, ովքեր փափագում են կարող են կարդալ<sup>12</sup>:

Երկրորդ. Սուրբ Պատարագի ընթացքում Աստվածամոր բարեխոսությունը հայցելով՝ ձայնակցում ենք սուրբ Գրիգոր Նարեկացուն՝ աղոթելով. «Ահա կաթիլ մի կաթին քումդ կուսուլթեան յանձն իմ անձրևեալ՝ կենաց ինձ գօրէ, Մայրդ բարձրելոյն Տեառն Յիսուսի...» (Բան 2, Գ մաս): Թարգմանություն. «Ահա կուսական կաթիդ մեկ կաթիլը իմ անձի մեջ անձրևելով՝ կյանք է տալիս ինձ, ով բարձրյալ Տեր Հիսուսի Մայր»:

Այսպիսով, Սուրբ Պատարագի ժամանակ քրիստոսի Մարմնի և Արյան ճաշակամբ հաղորդվում ենք նաև Աստվածամոր հետ՝ իբրև մեր բոլորի Մայրը<sup>13</sup>:

Այնուհետև պատարագիչը ժողովրդի առջև իր մեղքերն է խոստովանում. «Խոստովանում եմ Աստծո, Սուրբ Աստվածածնի և բոլոր սրբերի առաջ ու ձեր ներկայությամբ, ով հայրեր ու եղբայրներ, իմ գործած բոլոր մեղքերը, որովհետև մեղանչեցի խորհրդով, խոսքով ու գործով և այն բոլոր մեղքերով, որոնք մարդիկ գործում են, որոնց համար մեղա՛, մեղա՛ եմ ասում և աղաչում եմ ձեզ, բոլորդ ինձ համար Աստծուց թողություն խնդրեցեք»: Պատարագիչը ստանալով այդ խնդրած թողությունը, օրհնում է ժողովրդին՝ նրանց համար էլ ինքն է հայցում հանցանքների թողություն:

Սուրբ Սեղանին մոտենալուց առաջ թողություն խնդրելը Ավետարանից է գալիս, ինչպես մեր Տերը պատվիրել էր. «Եթե քո ընծան Սեղանի վրա բերես և այնտեղ հիշես, թե քո եղբայրը քո դեմ բան ունի, քո ընծան թող Սեղանի առաջ և գնա սկզբում հաշտվիր եղբորդ հետ ու հետո արի, որ քո ընծան մատուցես» (Մատթեոս Ե 23-24), որպեսզի ընդունելի լինի:

Քրիստոսի այս խոսքով փաստվում է նաև մեր մատուցած անմահ Սուրբ Պատարագի վավերականությունը: Եթե այսուհետև պիտի դադարեր որպես Պատարագ մատուցվելուց, մեր Տերն ինչու՞ այս օրինակը բերեց: Ահա մի այլ փաստացի օրինակ ևս Սուրբ Պատարագը չընդունողների համար:

Այդ պահին դպիրներն ու ժողովուրդը խնդրում են պատարագչից. «Յիշեսցիր և զմեզ առաջի անմահ Գառինն Աստուծոյ» (Հիշիր և մեզ Աստծո անմահ Գառան առջև), որին պատարագիչը պատասխանում է. «Յիշեալ լիջիք առաջի անմահ Գառինն Աստուծոյ» (Հիշված կլինեք Աստծո անմահ Գառան առջև):

Եվ այսպես, սրբված սրտով և խղճով, Սաղմոս ԽԳ ասելով, պատարագիչը սարկավագի հետ բարձրանում է Աստծո ներկայության Սուրբ Հարկը, որտեղ և գտնվում են փառաբանություն տեղը, հրեշտակների բնակարանը և մեղքերի քավարանը, տիեզերքի Արարչի հետ դեմ առ դեմ գտնվելու և այնտեղ Պատարագի սրբազան խորհուրդը կատարելու համար:

Պատարագիչը Աստծո առջև կանգնելու և բերան առ բերան Ամենակարողի հետ խոսելու, իր մեղքերի և ներկա ժողովրդի համար թողություն և քավություն խնդրելու համարձակություն է ունենում, ինչպես ժամանակին Հին Ուխտում Մովսես մարգարեն. «Եվ Տերը խոսում էր Մովսեսի հետ դեմ առ դեմ, ինչպես մարդը խոսում է իր բարեկամի հետ» (Ելից ԼԳ 11), և Եղիա մարգարեն (Գ Թագավորաց ԺԹ 9-18):

Այս աղոթքի վերջանալուց հետո մեծ վարագույրը փակվում է, և դպիրները սկսում են ծանր եղանակով մեղեդիներ կամ տաղեր երգել:

<sup>12</sup> Աստվածամայրը, Դ տպ. Երևան, 1990 և Ե տպ Երևան, 1993

<sup>13</sup> Աստվածամայրը, Դ տպ. Երևան, 1990, էջ 30

ՀԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՄ ՍՊԱՍԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Մինչ վարագույրը փակ է և մեղեդիներ են երգվում հավատացյալ ժողովրդի ուշադրությունը լռելյայն Աստծո վրա կենտրոնացնելու համար, քահանան արտասովոր աչքերով կարդում է սուրբ Գրիգոր Նարեկացու երկու գլուխ աղոթքները (Բան ԼԳ, հատ. Ե-Զ): Իսկ եթե պատարագիչը եպիսկոպոս է, Սուրբ Սեղանի առջև ծնրադրած՝ հանդիսավոր կերպով կարդում է վերոհիշյալ աղոթքները, որից հետո է վարագույրը փակվում:

Պատարագիչը, այս աղոթքը կարդալուց հետո, սպասն է պատրաստում. սարկավազը երեք նշխար է բերում՝ ի նշան Սուրբ Երրորդության, իսկ պատարագիչը, նրանցից մեկը վերցնելով և աղոթելով, դնում է մաղզմայի վրա, որը մետաղյա ափսե է, այնուհետև գինին լցնելով սկիհի մեջ՝ աղոթում է: Ապա մաղզման դնում է սկիհի վրա և այն սքողում զարդանախշ ծածկոցով: Երեք անգամ խաչակնքում է սկիհը՝ ասելով. «Հոգին Սուրբ եկեսցէ ի քեզ և զորութիւն բարձրելոյն հովանի լիցի ի վերա քոյ» (Սուրբ Հոգին կգա քեզ վրա և Բարձրյալի զորությունը հովանի կլինի քեզ) (Ղուկաս Ա 35): Ինչպես գիտենք, այս խոսքն ասել էր Գաբրիել հրեշտակապետը՝ Սուրբ Կույս Մարիամին ավետելիս: Սրանով փաստվում է, որ հացն ու գինին իսկապես Տիրոջ Մարմինն ու Արյունն են դառնալու, որովհետև Աստծո համար անկարելի ոչինչ չկա (Ղուկաս Ա 37), ինչպես հրեշտակն ասել էր կույսին և ասում է նաև մեզ՝ հավատացյալներին: Ուրեմն, այլաբանորեն կարող ենք ասել, որ այս խորհուրդը կատարելով Ավետման խորհրդի մեջ ենք ապրում:

ԹԱՓՈՐ

Պատարագիչ քահանան՝ բուրվառը ձեռքին, խնկարկելով ցած է իջնում բեմից և ժողովրդի մեջ շրջում է մեծաշուք,

հանդիսավոր թափորով, որին ընկերանում են զուգզուգ շարված դպիրների ու սարկավազների շարքերը, որոնք թափորին վեհուկություն են տալիս: Պատարագիչը, խնկարկելով, վերստին բեմ է բարձրանում: Այս խնկարկությունը խորհրդանշում է Հիսուսի երկնքից իջնելը, աշխարհի վրա շրջելն ու կրկին երկնք բարձրանալը:

Ինչպես Քրիստոսը երկնքից երկիր իջավ, այդպես էլ քահանան խորանից իջնում է ժողովրդին օրհնելու. ճիշտ այդ պատճառով բարեպաշտ հավատացյալները Պատարագի շուրջառն քղանցքին են դիպչում և համբուրում բժշկության համար, ինչպես գրված է Ավետարանում. «Եվ աղաչում էին Նրան, որ թեկուզ միայն նրա հագուստի քղանցքին դիպչեն, նրանք, որ դիպան, բժշկվեցին» (Մատթեոս ԺԴ 36, Մարկոս Զ 56, Գործք Ե 15, ԺԹ 12 և այլն): Այսպես, քահանան խորան է բարձրանում ժողովրդին հոգեպես կազդուրելուց հետո:

Խնկարկությունն այստեղ խորհրդանշում է շնորհների բաշխումը հավատացյալներին: Բայց ընդհանրապես խունկը աղոթքի հաճուկության նշան է: Ինչպես խունկը անուշահոտ բույր ունի և հաճելի է մարդկանց, այնպես էլ աղոթքը՝ սրտից բխող աղոթքը հաճելի է Աստծուն: Ուրեմն պետք է սրտանց աղոթել, որպեսզի Աստված մեզ արժանի անի Սուրբ Պատարագին մասնակցելու և միևնույն ժամանակ կատարի մեր բարի խնդրանքները:

# ԳԼՈՒԽ Գ

## Առաջին մաս

### ԵՐԵՆԱՆԵՐԻ ՊԱՏԱՐԱԳ

Պատարագիչն արդեն բեմ է բարձրացել և Սուրբ Սեղանի առջև է: Սարկավազի «Օրհնյա Տեր»-ին պատարագիչը պատասխանում է.

**«Օրհնեալ Թագավորությունն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յավիտեանս յավիտենից, ամէն»:**

Այս պահին սկիզբ է առնում Սուրբ Պատարագի առաջին մասը, որը կոչվում է Երեխաների Պատարագ, որը սկսվում է Աստծո թագավորության հռչակմամբ:

\* \* \*

Ամեն հավատացյալ իրեն Աստծո թագավորության անդամ պիտի զգա, ինչպես մեր Տերն էլ էր իր առաքելության սկզբում հայտարարել, թե՛ «Երկնքի թագավորությունը մոտեցել է» (Մատթեոս Դ 17, Մարկոս Ա 15): Իր առաքյալներին էլ էր նա պատվիրել, որ իրենց քարոզների մեջ հայտարարեն, թե երկնքի թագավորությունը մոտեցել է (Մատթեոս Ժ 7, Ղուկաս Ժ 9): Տերունական աղոթքի մեջ նույնպես միշտ խնդրում ենք երկնային Հորից, որ Իր թագավորությունը հաստատի (Մատթեոս Զ 10, Ղուկաս ԺԱ 2):

Ի՞նչ է Աստծո թագավորությունը. անշուշտ, հարց է առաջանում:

Աղամական մեղքով մարդկությունը կորցրել էր Աստծո երկնային թագավորությունը և դարեր շարունակ ցանկացել այն վերահաստատել: Աստված, Իսրայելի ժողովրդին Եգիպտոսից՝ գերուլթյան երկրից ազատագրելուց հետո, Մովսեսի

ձեռքով Աստծո թագավորության նախատիպարը հաստատել էր նրանց մեջ, որի թագավորն Աստված էր, իսկ նրա ներկայացուցիչները երկրի վրա Աստծուց ընտրված մարդիկ էին: Այսպես, այդ ընտրյալների շարքն սկսվեց Մովսեսից, ապա շարունակեցին Հեսուուն, դատավորները և տեեց մինչև Սամուել մարգարեն: Սակայն Սամուելի որդիների դատավարության շրջանում հրեա ժողովուրդը մյուս ազգերի նման թագավոր ունենալ ուզեց, որով վերջ պիտի գտներ կրոնական դրությամբ հաստատված թագավորությունը: Դրանով միևնույն ժամանակ մերժվում էր Աստծո թագավորությունը (Ա Թագավորաց Ը 7): «Տերն ասաց Սամուելին. «Նրանք քեզ չեն մերժում, այլ ինձ են մերժում, որպեսզի նրանց վրա չթագավորեմ»:

Այս կրոնական թագավորության շնորհիվ էր Աստծուց ընտրված Մովսես մարգարեն հրեա ժողովրդին հրաշքներով ազատագրել Եգիպտոսից՝ գերուլթյան երկրից: Քառասուն տարի անապատում նրանց կերակրել էր մանանայով ու լորամարգիներով, հրաշքով ժայռից ջուր էր բխեցրել, որպեսզի խմեն և միշտ հավատան Աստծուն: Մի խոսքով՝ Իսրայելի ժողովուրդը Աստծո թագավորության սուրբ ազգն էր (Ելից ԺԹ 6): Իբրև Աստծո թագավորության ժողովուրդ՝ նրանք գրավեցին Ավետյաց երկիրը, որտեղ և հաստատվեցին: Սակայն, երբ հրեա ժողովուրդն աշխարհիկ թագավոր ունենար, շատ ծանր պարտականությունների տակ պիտի ընկներ՝ թագավորը ժողովրդի հողերը պիտի գրավեր, տուրքեր պիտի դներ, ժողովրդի կտրիճ երիտասարդներին իր բանակին պիտի զինվորագրեր, գեղեցիկ կանանց արքունի գործերին պիտի լծեր, ժողովրդի գանձերն իր պալատում պիտի հավաքեր և վերջապես՝ ամբողջ ժողովուրդը թագավորին ծառա պիտի լիներ:

Այս ամենը Աստծո մարդը՝ Սամուել մարգարեն, բացատրել ու զգուշացրել էր նրանց: Բայց նրա հորդորներն ապարդյուն էին, քանի որ ժողովուրդը, մարգարեին լսել չցանկանալով, ասաց. «Ոչ, անպայման թող մեկը թագավորի մեր վրա» (Ա Թագավորաց Ը 19):

Այսպես, աշխարհիկ իմաստով թագավորությունը հաս-

տատվեց հանձին Սավուղի և ապա փոխանցվեց Դավիթ թագավորին, որի հարստութունը (Dynastie) տևեց մինչև Բաբելոնի գերութունը (586 Ն.Ք.): Դրանից հետո միշտ երազվեց նոր թագավոր կամ Մեսիա, որ մարգարեների և սաղմոսերգուհի ներշնչման և կանխատեսութան նյութը պիտի դառնար (Եսայի, Երեմիա, Եզեկիել, Դանիել, Օվսե, Միքիա, Զաքարիա, Մաղաքիա և այլն):

Վերջապես այդ խոստացված թագավորութունն իրականացավ հանձին Հիսուս Քրիստոսի:

Ուրեմն՝ Քրիստոսն այդ կրոնական թագավորութունը հաստատել էր «երկնքի թագավորութուն» անվան տակ: Սակայն Քրիստոսի թագավորութունը աշխարհիկ թագավորութան հակապատկերն է, ինչպես հաճախ Քրիստոսը հիշեցրել էր իր հետևորդներին՝ ասելով. «Ազգերի թագավորները, որոնք տիրում են ժողովրդին, բարերար են կոչվում: Բայց դուք այդպես չպիտի լինեք, այլ նա, ով մեծ է ձեր մեջ, փոքրի պես թող լինի, և առաջնորդը՝ սպասավորի պես» (Ղուկաս ԻԲ 25-26): Մեկ այլ առիթով ասել էր. «Եթե մեկն ուզում է առաջինը լինել, բոլորից հետինը և բոլորի սպասավորը պիտի լինի» (Մարկոս Թ 34, Մատթեոս Ի 26):

Եվ սույն թագավորութան ժառանգորդները այս աշխարհում չարչարանքների բաժակից պիտի խմեն, որպեսզի արժանի լինեն դրան:

«Կարո՞ղ եք խմել այն գավաթը, որը ես եմ խմելու» (Մարկոս Ժ 38): Մեր Տերն այսպես էր պատասխանել Զեբեդյան եղբայրներին, երբ նրանք փափագել էին երկնային թագավորութան աջ և ձախ կողմերում նստել:

Այդ թագավորութան որդիները հալածանք պիտի կրեն այս աշխարհում (Մատթեոս ԺԶ 24, Հովհաննես ԺԶ 2-3, Բ Տիմոթեոս Գ 12 և այլն):

Վերջապես, երեք տարի այդ թագավորութան մասին խոսելուց և քարոզելուց հետո, Քրիստոսը հաստատեց այն վերջին ընթրիքին, իր պատարագվելուց առաջ՝ ասելով. «Ես ձեզ թագավորութուն եմ կտակում, ինչպես իմ հայրն ինձ թա-

գավորութուն կտակեց. որպեսզի դուք իմ սեղանից ուտեք ու խմեք իմ թագավորութան մեջ և զահերի վրա նստեք՝ Իսրայելի տասներկու ցեղերին դատելու» (Ղուկաս ԻԲ 29-30):

Դավիթի թագավորութան օծումը նույնպես տեղի էր ունեցել ողջակեզի զոհի սեղանի առջև՝ Սամուել մարգարեի ձեռքով (Ա թագավորաց ԺԶ 1-13):

Եվ այսպես, այս կտակված թագավորութունը հաստատելու համար, իբրև թագավոր՝ Հիսուսն իր անձը որպես փրկագին պիտի տար այս աշխարհի իշխանին, որը մեղքերով զրավել էր մարդկությանը (Հովհաննես ԺԴ 30):

Քրիստոսի թագավոր հռչակվելը

Հիսուսը ծնվել էր թագավոր լինելու և երկնքի թագավորութունը հիմնելու համար, ինչպես Ավետմանը Գաբրիել հրեշտակատը ասել էր Սուրբ Կույսին. «Տեր Աստվածը նրան պիտի տա իր հոր՝ Դավիթի աթոռը. և Հակոբի տան վրա հավիտյան պիտի թագավորի, և նրա թագավորութունը վերջ չպետք է ունենա» (Ղուկաս Ա 32-33): Իսկ Մատթեոս ավետարանիչը մոգերի բերանով Հիսուսի ծննդյան ժամանակ է հայտնում Քրիստոսի թագավոր լինելը. «Որտե՞ղ է նա, որ ծնվեց իբրև հրեաների թագավոր» (Մատթեոս Բ 2):

Նա երեք տարի շարունակ քարոզեց այդ թագավորութան մասին և անգամ Ուխտ կնքեց վերջին ընթրիքին: Վերջապես պետք է հռչակվեր և հայտարարվեր իբրև թագավոր: Դա եղավ Պիղատոս կուսակալի առջև:

Պիղատոսը, հրեաների ամբաստանության հիման վրա, հարցրեց Հիսուսին.

«Դո՞ւ ես հրեաների թագավորը»:

«Իմ թագավորութունն այստեղից չէ. եթե իմ թագավորութունն այս աշխարհից լիներ, իմ սպասավորները կմարտնչեին, որպեսզի ես հրեաների ձեռքը չմատնվեմ, բայց, արդ, իմ թագավորութունն այստեղից չէ...»:

Բայց ես դրա համար եմ ծնվել և դրա համար եմ աշխարհ

եկել, որպեսզի ճշմարտության համար վկայեմ» (Հովհաննես ԺԸ 33-37):

Ինչպես տեսնում եք, մոտեցել էր պահը, երբ մեր Տերն ինքն իրեն Թագավոր պիտի հռչակեր, որպեսզի իր քարոզած երկնքի թագավորությունը հիմներ այդ ձևով:

Ուրեմն՝ իբրև թագավոր հռչակվելուց հետո Հիսուսը պետք է նաև թագադրվեր: Այսպես, նախ, իբրև թագավոր, թագի փոխարեն նրան փշե պսակ տվեցին (Մատթեոս Ի է 29, Մարկոս ԺԵ 17, Հովհաննես ԺԹ 2, 5): Ծիրանի զգեստ ունեցավ: Գավազանի փոխարեն եղեգ տրվեց նրան: Փառաբանության «կեցցե»-ի փոխարեն՝ «խաչը հանիր, խաչը հանիր նրան»: Զիով և թափորով գնալու փոխարեն խաչի ճանապարհ ունեցավ: Ժողովրդին ի տես՝ խաչը բարձրացավ: Իբրև հրովարտակ ունեցավ հետևյալը՝ Հիսուս Նազովրեցի՝ հրեաների թագավոր (Հովհաննես ԺԹ 19):

Քրիստոսն իբրև թագավոր պետք է մեռներ՝ փաստելու համար, որ իր համար մահը ոչինչ է: Սրա ապացույցը նրա հրաշափառ հարությունն է, որով հավիտյան պիտի թագավորեր. «Նրա թագավորությունը վերջ չպիտի ունենա» (Ղուկաս Ա 32): Այդ պատճառով էլ Քրիստոսը հաճախակի նախաձայնում էր իր խաչելության մահը, սակայն անմիջապես շեշտելով, թե երրորդ օրը հարություն պիտի առնի (Մատթեոս ԺԶ 21, Ժ է 22, Ի 17, Մարկոս Ը 31, Թ 10, Ժ 33, Ղուկաս Թ 22, ԺԸ 31, ԻԴ 6-7, Հովհաննես Գ 14, Ը 28, ԺԲ 24-25, 32 և այլն), որ նշանակում է, թե նա իրապես պետք է մեռներ, բայց ոչ մարդկանց հասկացած իմաստով՝ իր կյանքին վախճան տալու համար, ընդհակառակը՝ երրորդ օրը հարություն առնելու համար, որպեսզի իր հիմնած թագավորությունը անվախճան լիներ:

Իբրև անմահ թագավոր՝ պետք է մեռներ նաև այն բանի համար, որ այդ թագավորությունը արդյունաբեր լիներ, ինչպես ցորենի հատիկն է մեռնելուց՝ սերմանվելուց հետո միայն շատ պտղաբեր լինում (Հովհաննես ԺԲ 24):

Այսպես, հավիտենական թագավորության ժառանգորդնե-

րի համար նույնպես մահը ոչինչ է: Անշուշտ այս գաղափարից է ներշնչված եղիշե պատմիչի պատմական դարձած հետևյալ խոսքը.

«Զգիտակցված մահը մահ է, գիտակցված մահը՝ անմահություն»:

Ահա սա է Քրիստոսի հիմնական թագավորությունը, որն աշխարհիկ հասկացողությանը վերջացել էր խաչի վրա, իսկ աստվածաբանական հասկացողությանը՝ հարության արշալույսով էր պսակվել և իր ճառագայթները թափանցել հավիտենականությունից ներս: Աշխարհիկ իմաստով սա պարզապես հիմարություն է, բայց մեզ համար Աստծո զորությունն է (Ա Կորնթացիս Ա 18) և գերազանցում է աշխարհի բոլոր գիտություններին (Եփեսացիս Գ 19):

Ահավասիկ, Սուրբ Պատարագի արարողությանը արքայավայել կերպով Քրիստոսի հիմնած թագավորության դրաման (Drame) ենք կատարում և այդ թագավորության Ուխտն ենք կնքում Քրիստոսով:

\* \* \*

Սարկավագը շատ անգամ կրկնում է՝ «Օրհնյա, Տեր»: Ի՞նչ իմաստ ունի սա:

Արդեն ասացինք, որ պատարագիչ քահանան Քրիստոսի խորհրդանիշն ունի, իսկ սարկավագը իբրև քահանայի և ժողովրդի միջև միջնորդ, «Օրհնյա, Տեր» ձայնելով, պատարագիչ քահանային ուղղում է ասել՝ Տեր, դու, որ այս պահին Քրիստոսի ներկայությունն ես խորհրդանշում, օրհնիր մեզ և մեր աղոթքները ներկայացրու Աստծո առաջ:

Սարկավագի խնդրանքին իբրև պատասխան՝ պատարագիչն աղոթում է՝ բազուկները տարածած. «Տէր Աստուած մեր, որոյ կարողութիւնդ անքնին է և փառքդ անհասանելի...»: Այս աղոթքի մեջ նա խնդրում է Աստծուց, որ իր առատ մարդասիրության համեմատ նայի այս ժողովրդին և այս սուրբ տաճարին՝ խնդրելով Նրա առատ ողորմությունը և սրբությունը



իր աղոթակիցների վրա:

Այս աղոթքից հետո գալիս է մտավոր պատրաստությունը՝ օրվա ճաշու Գրքի և ավետարանական հատվածի ընթերցմամբ: Նախ՝ հավուր պատշաճի սաղմոս և շարական են երգում, քահանան ծածուկ, այսինքն՝ ցածրաձայն, շարունակում է աղոթել՝ խնդրելով Աստծո օրհնությունը, ողորմությունը և զորությունը հավատացյալ և հուսացյալ հոգիների համար:

Երբ դպիրներն արդեն իրենց շարականը վերջացնում են, քահանան Սուրբ Ավետարանը վերցնում և սարկավագին է տալիս, որն այն վերցնելով և պուսխում է ասելով՝ ժողովրդի ուշադրությունն է հրավիրում: Պուսխում է հունարեն բառ է, որ նշանակում է լսեք, ուշադրություն դարձրեք: Այնուհետև Սեղանի հետևից դառնալով՝ վերաբերումն է կատարում և ճաշու Գիրքը համբուրել է տալիս ընթերցողին: Այս վերաբերումի ընթացքում ժողովուրդն ու դպիրները երեք անգամ երգում են երեքսրբյան երգը. «Սուրբ Աստված, սուրբ և հզոր, սուրբ և անմահ, որ հարություն առար (կամ խաչվեցիր՝ ըստ տոնի) մեզ համար, ողորմիր մեզ»:

Այս երգն ուղղված է Որդի Աստծուն, որն ուզում է ասել՝ սուրբ, հզոր և անմահ Աստված ես դու ու մարդկության Փրկիչը և այդ իսկ պատճառով մարդացել ես ու ինքդ քեզ խոնարհեցրել, այն էլ՝ մինչև խաչի մահ և այլն (Փիլիպեցիս Բ 8), միշտ մեզ փրկելու համար, այսքան սիրույդ համար ողորմիր մեզ: Պատարագիչն այդ ընթացքում ծածուկ աղոթում է ժողովրդի կողմից և ժողովրդի համար. «...Ո՛վ Տեր, ընդունիր այս երեքսրբյան օրհնությունը մեղավորներիս բերանից ու պահիր մեզ քո քաղցրությունում, ներիր մեզ, մեր կամա և ակամա գործած հանցանքները:

Սրբիր մեր հոգիները, մտքերն ու մարմինները և շնորհիր, որ մեր կյանքի բոլոր օրերի մեջ սրբությունում քեզ պաշտենք:

Բարեխոսությունում Սրբուհի Աստվածածնի և բոլոր սրբերի, որոնք հավիտենականությունից քեզ բարեհաճ եղան»:

Դրանից հետո սարկավագը ժողովրդին հրավիրում է աշխարհի խաղաղության, ուղղափառ եպիսկոպոսների, մեր հայ-

րապետի (անունը) կյանքի և հոգու փրկություն, վարդապետների, քահանաների և հանգուցյալ հոգիների համար աղոթելու: Յուրաքանչյուրին ժողովուրդը պատասխանում է՝ «Տե՛ր, ողորմիր»:

Պատարագիչը, բարձր ձայնով աղոթելով, ասում է. «Որովհետև ողորմած ու մարդասեր Աստված ես, քեզ վայելում է փառք, իշխանություն և պատիվ... ամեն»:

Հնագույն ժամանակներում պատարագիչը Սեղանին երկրպագություն էր անում և գալիս ու բազմում էր աթոռին. այս սովորությունն այժմ վերապահված է միայն եպիսկոպոսներին:

Այդ ժամանակ սկսվում էր ճաշոց Գրքի ընթերցումը. դասի մեջ ուրիշ եկեղեցական չլինելու դեպքում դպիրներից մեկը գալիս է դասի մեջտեղը և գրակալի վրա դրված ճաշոց Գրքից հատվածներ է կարդում այդ օրվա հատուկ մարգարեներից և Պողոս առաքյալի ուղերձներից: Այդ պահին ժողովուրդը նստած լսում է:

Կատարված ընթերցումներով ժողովուրդը բարի խորհուրդներ և խրատներ է լսում, բացի այդ, հիշվում են Քրիստոսով կատարված մարգարեությունները և զանազան վկայություններ., որովհետև, ինչ որ Հին Ուխտում մարգարեները կանխագուշակեցին, առաքյալները ճշմարտապես տեսան ու լսեցին և, հետևաբար, Հիսուսի կյանքի ու խոսքի կենդանի վկաները հանդիսացան:

Այս ընթերցումների ավարտից հետո սարկավագը բարձր ձայնով հրահանգում է՝ օրթի. սա նույնպես հունարեն բառ է՝ ոտքի ելեք, ուղիղ կանգնեք նշանակությամբ: Պատարագիչը ժողովրդին խաչակնքում է «խաղաղություն ամենեցուն»-ով, իսկ դպիրները պատասխանում են. «Եւ ընդ Հոգւոյդ քում», այսինքն՝ այդ խաղաղությունը թող նաև քո հոգու հետ լինի: Այնուհետև ավագ սարկավագը Սուրբ Ավետարանից կարդում է օրվա հատվածը, որն ավարտելուց հետո բոլորը միասին երգում են. «Փառք Քեզ, Տէր Աստուած մեր», որի մեջ ժողովուրդն արտահայտում է իր երախտագիտությունն ու գոհու-

նակությունը Աստծո հանդեպ, քանի որ արժանի եղավ Հիսուս Քրիստոսի հավիտենական կյանքի խոսքերը լսելու, որովհետև, ինչպես մեր Տերն էլ էր ասել, «չատ մարգարեներ, արդարներ և թագավորներ փափագեցին ձեր տեսածները տեսնել, բայց չտեսան, և ձեր լսածները լսել, բայց չլսեցին» (Մատթեոս ԺԳ 17, Ղուկաս Ժ 24): Ուրեմն երանություն է Սուրբ Պատարագ տեսնելը, որի մեջ Քրիստոսն ինքը ներկա է, և Ավետարանի Խոսքը լսելը, որի միջոցով հայտնվում է Աստծո անհուն սերը մարդկության հանդեպ, որն իր Միածին Որդուն աշխարհ ուղարկեց մեզ համար, որպեսզի Իր խաղաղությունն ունենանք այս աշխարհում: Սուրբ Ավետարանի միջոցով լսում ենք մեր Տիրոջ կենդանի խոսքը, Նրա վարդապետությունն ու տնօրինությունները:

Սարկավազը, Սուրբ Ավետարանը ձեռքին, շրջվում է դեպի խորանը, պատարագչի կողքին ու բարձր ձայնով արտասանում Հավատո հանգանակը: Այս մտավոր լուսավորությունն իր լրումին է հասնում հավատի խոստովանությամբ, որ ուղղափառ դավանությունն ու ճշմարիտ վարդապետությունը դրոշմում է հավատացյալի մտքի և սրտի մեջ՝ ամբողջ Եկեղեցուն նույն հավատով միացնելով և մեկ մարմին կազմելով:

Հավատո հանգանակը կոչվում է նաև Նիկիական հանգանակ, որովհետև խմբագրված է Նիկիայում (Լկչբ) տեղի ունեցած առաջին տիեզերական ժողովի ընթացքում՝ 325-ին, 318 հայրապետների կողմից: Այդ ժողովին մասնակցել է նաև Հայաստանյայց Եկեղեցին՝ պատգամավոր ուղարկելով սուրբ Գրիգոր Լուսավորչի որդուն՝ Արիստակես կաթողիկոսին, երբ սուրբ Գրիգոր հայրապետը դեռ ապրում էր խոր ծերության մեջ և չէր կարողացել անձամբ ներկա գտնվել: Սակայն որդուն՝ Արիստակեսին, ուղարկում է մասնավոր հանձնարարական թղթերով ու հրահանգներով: Արիստակեսը մասնակցում է այդ ժողովին, որի 318 հայրապետներից մեկն էր: Նրա ստորագրությունը երևում է ժողովին մասնակցած հայրապետների ցանկում:

Ուրիշ Եկեղեցիներ հետագայում այս հանգանակը փոփո-

խությունների են ենթարկել, կրճատել են կամ վրան բառեր ավելացրել: Հայաստանյայց Եկեղեցին, ավանդապահ լինելով, նույնությամբ պահպանել է այն՝ միայն վերջում ավելացնելով սուրբ Գրիգոր Լուսավորչի «Իսկ մեք փառաւորեսցուք» հատվածը:

Հավատամքի մեջ Եկեղեցին հայտարարում է քրիստոնեական հիմնական դավանանքը՝ Հայր Աստծո, Աստծո Որդու՝ Հիսուս Քրիստոսի և Սուրբ Հոգու, այսինքն՝ Սուրբ Երրորդության մասին:

Հավատամքին հաջորդում է հերետիկոսներին նզովելն ու Աստծուն փառաբանելը: Նիկիական ժողովն արդեն իսկ գումարվել էր Արիոսի մոլորությունը դատապարտելու համար, որովհետև նա չէր դավանում, թե Հիսուս Քրիստոսը Աստծու Որդին է, Հորը համազոյակից, իշխանակից ու հավիտենական է, այլ նրան դիտում էր իբրև արարած, ինչ որ այսօր անում են Եհովայի վկաները՝ մոլորեցնելով հազարավոր միամիտ բարեպաշտների: Ուրեմն Եհովայի վկաների ասածը բոլորովին էլ նորություն չէ, այլ՝ անունը փոխած, նոր արիոսականություն, որ դատապարտելի և նզովելի է: Առաքյալը պատվիրում է. «Եթե մեկը ձեզ մոտ գա և այս վարդապետությունը չքարոզի, նրան ձեր տներում մի՛ ընդունեք և նրան բարև մի՛ ասեք: Քանզի ով որ նրան բարևում է, նրա չար գործերին է հաղորդ լինում» (Բ Հովհաննես 10-11):

Այսպես, Նիկիական հանգանակն արտասանելով՝ ժողովուրդը խոստովանում է ճշմարիտ հավատի դավանանքը և արժանի լինում աստվածային խորհրդին մոտենալու, Սուրբ Պատարագի մատուցմանը ներկա գտնվելու:

Հավատամքից հետո սարկավազը նորից խաղաղության քարոզ է կարդում (Խաղաղանք), որով ժողովրդին պատվիրում է, թե այժմ ինչ է անհրաժեշտ խնդրել Աստծուց: Այդ ժամանակ պատարագիչն էլ է ծածուկ աղոթում և ժողովրդի համար խնդրում այն, ինչ որ սարկավազը հանձնարարում է խնդրել ժողովրդին:

Այս աղոթքից հետո սարկավազը հանում է պատարագչի

սաղավարտը (Թագ) և իր ոտքերի հողաթափերը: Եթե պատարագիչը եպիսկոպոս է, հանում է նաև եմիփորոնը, արտախուրակները և շքանշանները (յանջախաչը, պանակեն), փոխում է շուրջառը և Քրիստոսի Սուրբ Սեղանին ու Սուրբ Խորհրդին ներկայանում իբրև խոնարհ սպասավոր:

Մինչ այդ պատարագիչը փառավորված էր գլխին դրած թագով ու այլ զարդերով և խորհրդանշում էր Քրիստոսի անձը՝ Թագավորին:

Բայց հիմա, քանի որ պատրաստվում էր Հիսուսի Մարմինն ու Արյունը Սեղանի վրա ընդունել, հրաժարվում է իր այդ դիրքից և նախապատրաստվում, իբրև խոնարհ սպասավոր, Աստծո Որդու Պատարագի ահավոր խորհուրդը կատարելու:

Սրանից հետո քահանան նույնպես մի սպասարկու է և սարկավագի օգնությունը պատշաճ արարողություններ և խորհուրդներ է կատարում: Սարկավագը սրանից հետո էլ ժողովրդին քարոզում և աղոթել ու խնդրել է սովորեցնում, իսկ քահանան ժողովրդի համար աղոթում է և Աստծո առջև ներկայացնում նրա խնդրանքները: Սուրբ Պատարագի առաջին մասն ավարտվում է այստեղ:

## ԳԼՈՒԽ Գ

### Երկրորդ մաս

ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻ ՊԱՏԱՐԱԳ

Պատարագի ընծաների և հավատացյալների պատրաստություն այս ընթացքը մեզ բերում է Պատարագի բուն խորհրդի կատարմանը, այսինքն՝ Հավատացյալների Պատարագին: Դարձյալ սարկավագն է հրամայական շեշտով ազդարարում. «Մի՛ ոք յերախայից, մի՛ ոք ի թերահալատից, և մի՛ ոք յապաշխարողաց և յանմաքրից մերձեսցի յաստուածային խորհուրդս»: Թարգմանություն. երեխաներից (չմկրտվածներից), թերահավատներից, ապաշխարողներից ու անմաքուրներից ոչ

մեկը թող չմոտենա աստվածային խորհրդին:

Ուրեմն՝ սարկավագը պատվիրում է, որ երեխաները, այսինքն՝ նրանք, ովքեր դեռևս չեն մկրտված, թերահավատները կամ ապաշխարություն մեջ գտնվողներն ու անմաքուրները, այսինքն՝ հոգեպես իրենք իրենց պիղծ և մեղավոր զգացողները, չմոտենան խորհրդին: Նրանք ստիպված էին դուրս գալ և գավիթում կանգնած աղոթել: Այդ պահին Եկեղեցու դռներն էլ էին փակվում, և դրսի անմաքուրների ու մեղավորների հետ ամեն հարաբերություն դադարում էր, որպեսզի ներսինները միախորհուրդ և միահավատ, մեկ սիրտ և մեկ հոգի, իբրև հավատի միավոր, կարողանային արժանանալ աստվածային խորհրդի տեսությունն ու Սուրբ Հաղորդությունը: Այսօր այլևս այս արգելքը չկա, և դուրս գալու սովորությունը վերացել է, դժբախտաբար կամ բարեբախտաբար: Սարկավագի խոսքերն այսօր պարզապես ազդարարում են և մեր ուշադրությունն են հրավիրում, քանի որ մոտենում է աստվածային մեծ պահը:

Այս դուրս գալու սովորությունը դարձյալ Հին Ուխտից է գալիս. ինչպես Մովսեսն էր պատվիրել, որ անմաքուր մարդիկ բանակից դուրս գային. «Որպեսզի չպղծեն իրենց բանակը, որոնց մեջտեղում ես եմ բնակվում» (Թվոց Ե 3):

Այդ պատճառով էլ միշտ ասել ենք, որ Նոր Ուխտի սովորությունները լավ հասկանալու համար պետք է լավ սերտած լինենք Հին Ուխտը, որովհետև Հին Ուխտը Նոր Ուխտի հիմքն է (La base):

ՎԵՐԱԲԵՐՈՒՄ

Այժմ սկսվում է Պատարագի երկրորդ մասը, որ բուն Սուրբ Խորհուրդն է:

Դպիրները խորհրդավոր ձայնով եղանակում են. «Մարմին տէրունական և Արիւն փրկչական կայ առաջի...»: Այս խոսքերով դպիրներն արդեն ասում են մեզ, թե ինչ խորհուրդ է պատրաստվելու, թե ինչ զոհ է մատուցվելու: Տերունական

Մարմինն ու Փրկչի Արյունն է, որ ահա հայտնվում է մեր առջև. երկնքի հրեշտակներն անդադար երգում են և ասում. «Դու սուրբ, դու սուրբ և զորությունների տեր ես»:

Այս պահին սարկավազն ուղղվում է դեպի խորհրդանոցը, որպեսզի դուրս հանի պատարագչի կողմից նախապես ծածկաբար պատրաստված Սուրբ Սկիհը:

Սուրբ Սկիհը վերաբերողը միայն քահանան է լինում կամ ավագ սարկավագը, որ սկզբում խնկարկում է Սուրբ Սեղանին՝ լուելյայն ասելով. «Ողորմիր ինձ, Աստված...» (Սաղմոս ԾԱ), և համբուրելով Սուրբ Սեղանն ու պատարագչի աջը՝ դառնում է դեպի խորհրդանոցը (սրբատունը) և խնկարկում է Սկիհը, մինչև որ ավարտի սույն Սաղմոսը: Բուրվառը տալիս է մեկ այլ սարկավագի և ինքն էլ, համբուրելով Սուրբ Խորհուրդը, վերցնում ու վեր է բարձրացնում այն՝ երեսը դեպի հյուսիս, լուելյայն ասելով. «Յարևու ե՛հար զխորան իւր, և Ինքն որպէս փեսայ. զի ելանէ յառազաստէ իւրմէ. ցնծայ Նա որպէս հսկայ յընթանալ զճանապարհս Իւր» (Սաղմոս ԺԹ 5): Թարգմանություն. «Արևի համար նա կանգնեցրեց իր վրանը, իսկ ինքը առազաստից ելնող փեսայի նման է, ու սա ուրախանում է հսկայի նման, որ իր ճանապարհը վազելով է գնում»:

Եվ դեպի արևելք դառնալով՝ ասում է. «Ճանապարհ բացեք նրա համար, ով երկինքների երկնքում, արևելյան կողմում է նստում» (Սաղմոս ԿԸ 33):

Եվ կենդանություն տվող Երրորդությունը երեքսրբյան օրհնություն են մատուցում:

Եվ կրկին դեպի հյուսիս դառնալով՝ ասում է ցածրաձայն, եթե պատարագիչը քահանա կամ արքեպիսկոպոս է, իսկ եթե պատարագիչը վարդապետ կամ եպիսկոպոս է, բարձր ձայնով:

Այս միջոցին քահանան, բազկատարած, երկար աղոթք է արտասանում՝ ծածուկ խնդրելով Աստծուց, որ իր միտքն ու հոգին սրբի ամեն տեսակ պղծություններից և իրեն արժանի անի Աստծո ծառան լինելու և Սուրբ Խորհրդի ընծաները (Հիսուսի Մարմինը և Արյունը) Նրան մատուցելու, այսինքն՝

Աստծուն: Սրբասացության կեսին, երբ քահանան իր աղոթքն արդեն վերջացրած է լինում, դառնում է սարկավագին, որն իրեն է մոտենում՝ քողարկված սկիհը բարձր բռնած: Քահանան, Սեղանը և Սկիհը խնկարկելուց հետո, սարկավագի հետ փոխեփոխ երկու անգամ ասում է հետևյալ Սաղմոսը: Նախ՝ սարկավագն ասում է. «Ալելուիա, ալելուիա, համբարձէք, իշխանք, զդրունս ձեր ի վեր, համբարձցին դրունք յաւիտեանից, և մտցէ Թագաւոր փառաց»: Թարգմանություն. «Ո՛վ իշխաններ, ձեր դռները վեր բարձրացրեք, և հավիտենական դռները թող վեր բարձրանան, ու փառքերի թագավորը պիտի ներս մտնի» (Սաղմոս ԻԴ 7):

Պատարագիչը խնկարկելով հարցնում է. «Ո՛վ է Սա, Թագաւոր փառաց, Տէր հզօր զօրութեանց, Տէր կարող ի պատերազմի»: Թարգմանություն. «Ո՛վ է այս փառքերի Թագավորը, զօրությունների հզօր Տերը, պատերազմում զորեղ Տերը» (Սաղմոս ԻԴ 8):

Այսպես կրկնվում է երկու անգամ, իսկ երրորդ անգամ սարկավագը պատասխանում է. «Սա ինքն է փառքերի Թագավորը»: Պատարագիչը վերցնում է ձեռքից ու ասում. «Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն, որ եկիր և գալոց ես. օրհնութիւն ի բարձունս» (Օրհնյալ է Տիրոջ անունով եկողը, որ եկավ և գալու է. օրհնություն բարձունքներում): Եվ պատարագիչը, ահով ու դողով երկրպագելով, սարկավագի ձեռքից Սկիհը վերցնելով, դառնում է ժողովրդին և խաչակնքում ծնկաչոք հավատացյալներին, իսկ հետո այն դնում է Սուրբ Սեղանի վրա. նախ՝ խնկարկում է և ապա՝ ձեռքերը նորից լվանում ժողովրդի առաջ՝ Սաղմոսից համար ասելով. «Լուացից սրբութեամբ զձեռս իմ և շուրջ եղէց զսեղանով քով, Տէր» (Սրբությամբ պիտի լվանամ իմ ձեռքերը և քո սեղանի շուրջը պիտի լինեմ, Տե՛ր): Այսպես, ներքին և արտաքին մեղքերից սրբվելով և ծայրաստիճան մաքրությունը պետք է մոտենալ Սուրբ Խորհրդին:

Այս մտքով սարկավագն արդեն նախապատրաստում է ժողովրդին:

«Եվ առավել հավատով ու սրբությամբ, երկյուղով աղոթքի կանգնենք Աստծո Սուրբ Սեղանի առջև: Ո՛չ խղճի խայթով, ո՛չ գայթակղությամբ, ո՛չ նենգությամբ և ո՛չ խորամանկությամբ, ո՛չ պատրանքով ու խաբեությամբ, ո՛չ երկմտությամբ և ո՛չ թերահավատությամբ, այլ բարի վարքով, պարզ մտքով, միամիտ սրտով և կատարյալ հավատով, սիրով և ամեն տեսակի բարեգործություններով լցված աղոթքի կանգնենք Աստծո Սուրբ Սեղանի առջև, որպեսզի ընդունենք նրա ողորմության շնորհը մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսի Հայտնության և մյուս անգամ գալստյան օրը: Թող Նա ողորմի և ապրեցնի մեզ»:

Ներսես Շնորհալի հայրապետը պատարագիչ քահանաներին պատվեր է տալիս. «Մաքուր հոգով, սուրբ սրտով, անարատ հավատով, մեծ հույսով, պարզ մտքով, ահուգողով սպասավորեցեք աստվածային խորհրդին: Ինչպես որ ջուրն է անցնում խողովակից, դուք էլ այդպես չանցնեք ձեր արած աղոթքների խորհրդավոր խոսքերի միջից՝ լինի Սաղմոս, լինի ընթերցում, լինի պաշտոնեղություն, լինի Սուրբ Պատարագի քահանայական աղոթք և այլն, այլ՝ լավ հասկանալով և, եթե կարելի է, արցունքով ու երկյուղածությամբ, իբրև թե դուք ձեր մտքից ու սրտից նոր էիք բխեցնում դրանք»:

Այս պահին սկսվում է բուն Պատարագը, այսինքն՝ Հիսուսի Մարմինը և Արյունը որպես զոհ մատուցելու մեծ Խորհուրդը:

Քահանան, իր ձեռնամած ձեռքերը Սկիհի վրա դրած, աղոթում է և օրհնում նշխարն ու գինին:

Զոհի վրա ձեռք դնելը Հին ուխտից է գալիս, ինչպես Մովսեսն էր պատվիրել, որ, երբ պատարագի ողջակեզ բերեին խորանի դռան առջև, քահանան ձեռքը նրա գլխին պիտի դներ, որպեսզի այն իրեն քավություն լիներ (Ղևտացվոց Ա 4, Ը 14, Ելից ԻԹ 10):

Հետո Սկիհի ծածկոցը կես չափով բացում է, բարձրաձայն կարճ աղոթք ասում. «Շնորհօք և մարդասիրութեամբ...», խաղաղություն է տալիս ժողովրդին և ձեռնամած՝ մի քիչ աջ թեքվում՝ հայացքը հառած Սկիհին:

Սուրբ Սեղանին դրված Սուրբ Սկիհի պարունակությունը Քրիստոսն ինքն է, որ թագավորում է ամբողջ Եկեղեցու հավատացյալների սրտերում: Պատարագիչն այդ պահին փոքրին է թեքված ու ձեռնամած կանգնում է՝ աչքերը Սկիհին հառած, իսկ սարկավազը, համբուրելով Սեղանը ու պատարագչի աջը, բարձր ձայնով ասում է. «Ողջույն տու՛ք միմեանց ի համբոյր սրբութեան. և որք ոչ էք կարողք հաղորդիլ աստուածային խորհրդոյս, առ դրունս ելէք և աղօթեցէք»: Այսինքն՝ սուրբ համբույրով ողջույն տվեք իրար (Հոռմեացիս ԺԶ 16, Ա Կորնթացիս ԺԶ 20), բայց նրանք, ովքեր չեն կարող հաղորդվել (մասնակցել) աստվածային խորհրդին, դռների մոտ գնացեք և այնտեղ աղոթեցեք:

Սարկավազը, աջակողմյան աստիճանից իջնելով, ողջույն է տալիս քահանաներից կամ դպիրներից ավագագույնին, որոնք բեմի առջև՝ փոքր ատյանում, կիսաշրջան կանգնած են լինում այդ պահին. նա էլ իր հերթին քահանաների և դպիրների դասին է հաղորդում ողջույնը և ապա ժողովրդին փոխանցելով՝ բոլորին հրավիրում է իրար ողջունելու: Սարկավազը բեմ է բարձրանում, և պատարագիչն օրհնում է ժողովրդին, ապա Սեղանին դառնալով՝ ծածկում է կիսաբաց Սկիհը:

Ողջույն տվողը խոնարհվելով ասում է. «Ողջոյն ձեզ, Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»: Ողջույն վերցնողը նորից խոնարհվելով պատասխանում է. «Օրհնեալ է յայտնութիւնն Քրիստոսի»:

Քրիստոնությունը առաջին դարում Եկեղեցում հավատացյալներն իրար ողջունում էին համբուրելով: Այդ սովորությունը վաղուց դադարել է, այժմ միայն գլուխ խոնարհեցնելով են ողջույն տալիս: Այդ միջոցին Եկեղեցում ներկա գտնվողները Քրիստոսով քույրեր ու եղբայրներ են դառնում: Ինչ սեռի և վիճակի էլ որ պատկանեն, ինչ դիրք ու աստիճան էլ որ ունենան, հավատի միությունը եղբայրներ են: Այնտեղ այլևս հա-

կառակուլթյուն և թշնամուլթյուն չի կարող գոյություն ունենալ, որովհետև Տեր Հիսուս Քրիստոսը բազմել է ժողովրդի սրտերի գահին և Սուրբ Սեղանին:

Այս ողջույնի իմաստն ու ոգին Հովհաննես առաքյալն այսպես է բացատրում իր Ընդհանրական թղթում. «Ոչ ոք երբեք Աստծուն չի տեսել. եթե միմյանց սիրում ենք, ուրեմն Աստված մեր մեջ է բնակվում, և Նրա սերն է մեր մեջ բնակվում, ու նրա սերը մեր մեջ կատարյալ է: Սրանով գիտենք, թե մենք Նրա մեջ ենք բնակվում, ու Նա՝ մեր մեջ, որ Իր Հոգուց տվեց մեզ...:

Աստված Սեր է: Նա, ով սիրո (եղբայրսիրության) մեջ է բնակվում, Աստված էլ նրա մեջ է բնակվում: Եթե մեկն ասում է, թե՛ ես Աստծուն սիրում եմ, ու իր եղբորն ատում է, ստախոս է, որովհետև նա, ով եղբորը չի սիրում, որին տեսնում է, Աստծուն, որին չի տեսնում, ինչպե՞ս կարող է սիրել: Նա, ով սիրում է Աստծուն, եղբորն էլ է սիրում» (Ա Հովհաննես Դ 12- 21):

Դպիրները հաղթական և ոգևորող երգերով այս գմայլելի խոսքերն են ասում. «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ...»: Ուրեմն՝ երբ Քրիստոսը մարդկանց հոգիների մեջ հայտնվեց, խաղաղության ձայն լսվեց և սուրբ ողջույնի, այսինքն՝ մարդկանց եղբայրության հրաման տրվեց, որով ամբողջ Եկեղեցին, ամբողջ ժողովուրդը մեկ սիրտ և մեկ հոգի եղավ, համբույրը միության կապ դարձավ, թշնամությունը հեռացավ և բոլորի վրա սեր տարածվեց: Այս ուրախության ու ցնծության պատճառն այն է, որ Աստված բնակվում է մարդկանց մեջ: Հին Ուխտում միայն որոշ մարգարեներ և առանձնաշնորհյալ մարդիկ էին սրան արժանանում, որովհետև այն ժամանակ Աստծո Հոգին չէր կարող մարդու մեջ երկար մնալ, ինչպես կարգում ենք. «Իմ Հոգին միշտ մարդու վրա չպիտի մնա, որովհետև նա մարմին է» (Մանգոց 2 3): Որովհետև Քրիստոսից առաջ մարդը միայն կենդանի շունչ ուներ իր մեջ, իսկ Քրիստոսով կենդանարար հոգի ունեցավ (Ա Կորնթացիս ԺԵ 45, Բ 14): Անշուշտ, այս կենդանարար հոգին ստանում ենք Մկրտության խորհրդով. «Մարմնից ծնվածը մարմին է (այդ պատճառով, որքան էլ անձը բարի, պարկեշտ ու աստվածա-

վախ լինի, Աստծո Հոգին չի կարող մնալ նրա մեջ, եթե մկրտված չէ Երրորդության Անունով), ու Հոգուց ծնվածը հոգի է» (Հովհաննես Գ 6): Ընդ իստ այդ պատճառով էլ վերը հիշեցինք, որ սարկավազը պատվիրում է, որպեսզի չմկրտվածները դուրս գան:

Սարկավազը կրկին հիշեցնում է ժողովրդին, որ Սուրբ Խորհրդի պահը մոտեցել է, և, հետևաբար, ինքն էլ հուզված եղանակով ասում է.

«Ահիլ կացցուք, երկիւղիւ կացցուք, բարևոք կացցուք և նայեցարուք զգուշութեամբ», այսինքն՝ ահով ու երկյուղով մնանք ու նայենք Սուրբ Խորհրդին:

Դպիրները ժողովրդի կողմից պատասխանում են.

«Առ քեզ, Աստուած», այսինքն՝ ո՛վ Աստված, մեր հոգիները դեպի քեզ են ուղղվում:

Սարկավազը հայտարարում է. «Պատարագ Քրիստոս մատչի անարատ Գառն Աստուծոյ»: Որ է՝ Աստծո անարատ Գառն՝ Քրիստոսը, մատուցվում է որպես զոհ:

Պատարագչի աղոթքից («Շնորհք, սէր և...») հետո սարկավազը վերջին անգամ ազդարարում է. «Զըրունս, զըրունս»: Այսինքն՝ դռները ծածկեք, դռները ծածկեք ամենայն իմաստությամբ ու զգուշությամբ. այսպես է հրամայում, որպեսզի չլինի թե դուրս եկածները՝ չմկրտվածները, անմաքուրները և թերահավատները, տեսնեն Սուրբ Խորհուրդը: Իսկ ներսում մնացողներին թելադրում է, որ աստվածային վախով իրենց մտքերը դեպի վեր բարձրացնեն, այսինքն՝ պատվիրում է, որ իրենց հոգու և մտքի դռները լավ փակեն ու պահպանեն, որպեսզի այս ահավոր Խորհրդի միջոցին այդ դռնից ներս չմտնի որևէ անմաքուր զգացում կամ մտածում:

Ինչպես Ներսես Շնորհալի հայրապետն (1102-1173) է աղոթում իր «Հավատով խոստովանում եմ»-ի Թ՝ տան մեջ. «Ամենախնամ Տեր, քո սուրբ երկյուղը պահապան դիր իմ աչքերին, որ այլևս ցանկությամբ չնայեմ, և իմ ականջներին, որ չախորժեմ չար խոսքեր լսելուց, և իմ բերանին, որ սուտ խոսքեր չխոսեմ, և իմ սրտին, որ չարություն չխորհեմ, և իմ ձեռ-

քերին, որ անիրավությունն չգործեմ, և իմ ոտքերին, որ անօրենսության ճանապարհներով չքայլեմ, այլ ուղղիր սրանց շարժումը, որպեսզի միշտ քո պատվիրանների համաձայն լինեն ամեն բանում...»:

Դպիրները պատասխանում են.

«Ունիմք առ քեզ, Տէր ամենակալ», այսինքն՝ մեր ամբողջ միտքն ու հոգին քեզ հետ են, ով ամենակալ Աստված:

Սարկավազն ասում է. «Ու ամբողջ սրտով Տիրոջից շնորհակալ եղեք»:

Դպիրները (այսինքն՝ ժողովուրդը) պատասխանում են. «Արժան և իրաւ», այսինքն՝ իրապես շատ արժանի և իրավացի է Տիրոջից շնորհակալ լինելը:

Ծածուկ աղոթքից հետո քահանան բազկատարած ասում է. «Եւ ընդ սերովբէսն և ընդ քերովբէսն...»: Թարգմանություն. «Եվ սերովբեների ու քերովբեների հետ միաձայն սրբասացությամբ երգեր հորինել ու նրանց հետ համարձակորեն բարձրաձայն երգել ու ասել»:

Իսկ ժողովուրդն ու դպիրները ոգևորությամբ ձայնակցում են այս փառաբանության երգին՝ ասելով. «Սուրբ, սուրբ, սուրբ, զորությունների Տեր: Երկինքն ու երկիրը լի են քո փառքով: Օրհնություն երկնքի բարձունքում: Օրհնյալ լինես դու, որ եկար ու պիտի գաս Տիրոջ անունով, օվսանա երկնքի բարձունքում»:

ԿԱՆՈՆ - ՀԱՍՏԱՏՈՒՄ

Հասել ենք Սուրբ Պատարագի ամենախորհրդավոր պահին, և անհրաժեշտ է, որ Եկեղեցում լուսություն տիրի, իսկ սրտերում՝ երկյուղածություն:

Դպիրները, ձայնակցելով երկնքի հրեշտակներին, երգում են. «Սուրբ, սուրբ, սուրբ (Եսայի 2 1-6), որի ընթացքում քահանան իր ծածուկ, երկար աղոթքի մեջ հիշում և փառաբանում է Աստծուն, որ երբեք չի անտեսել մարդուն՝ երբեմն մարգարեներով, երբեմն օրենքներ հաստատելով, երբեմն քա-

հանայություն հաստատելով, ուրիշ զոհի փոխարեն երինջներ, գառնուկներ զոհաբերելով:

Իսկ երբ ժամանակն իր լրումին հասավ (Գաղատացիս Դ 4), Աստված իր Որդուն տվեց մեզ՝ որպես պարտք, պարտապան, զոհ, օծյալ, Աստծո Գառ, երկնային հաց, քահանայապետ և Պատարագ:

Քանզի Հիսուս Քրիստոսն է բաշխողը և բաշխվողը մեր մեջ «անծախապես», այսինքն՝ առանց սպառվելու, հատնելու:

Հիսուսը կատարյալ մարդ եղավ առանց ցնորքի և աստվածային բնության հետ անշփոթ միավորությամբ, մարմին առավ Սուրբ Կույս Աստվածածին Մարիամից: Եվ աշխարհը փրկելու համար հոժար կամքով եկավ և ինքն իրեն պատարագեց մեր փրկության առիթը հանդիսացող խաչի վրա:

Այս աղոթքից հետո քահանան, Սեղանին երկրպագելով, բացում է Սկիհը և ընծայաբերվող հացը ձեռքն առնելով ու վեր բարձրացնելով՝ խորհրդավոր ձայնով ասում է. «Առէք, կերէք, այս է Մարմին իմ, որ վասն ձեր և բազմաց բաշխի՝ ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց»: Հետո կրկին Սկիհը բարձրացնելով ասում է. «Արբէք ի սմանն ամենեքեան. այս է Արիւն իմ Նորոյ Ռիստի, որ յաղագս ձեր և բազմաց հեղանի՝ ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց»:

Սրանով տեղի է ունենում Սուրբ Պատարագի հիշատակությունը (Կանոնը), այսինքն՝ Հիսուսի Մարմինն ու Արյունը խորհրդանշող հացն ու գինին Աստծո առջև որպես զոհ են մատուցում ժողովրդին ի տես:

Դպիրներն ասում են՝ «ամեն», որը նշանակում է՝ լուելյայն խոստովանում և հավատում ենք, ապա երգում են «Հայր երկնավոր, որ գՈրդիդ քո...»:

Սրանով դպիրները ժողովրդի կողմից խնդրում են. «Ով երկնավոր Հայր, որ քո Որդուն մեզ համար մահվան մատնեցիր, որ մեր պարտքերն ու մեղքերն իր վրա վերցրեց: Նրա թափած Արյունով աղաչում ենք՝ ողորմիր քո բանական հոտին՝ ժողովրդին»:

Քահանան ծածուկ աղոթքից հետո բարձր ձայնով աղոթում

է Աստծուն. «Եւ զքոյս ի քոյոց Քեզ մատուցանեմք՝ ըստ ամենայնի և յաղագս ամենեցուն»։ Այսինքն՝ մեր այս ընծաները (հացն ու գինին), որ աստվածային բարութեամբ շնորհել ես մեզ, քեզ ենք մատուցում։ Այս պահը, երբ քահանան բարձրացնում է Սկիհը, խորհրդանշում է Հիսուսի խաչին բարձրանալը։ Մեր հոգու աչքերով Հիսուսին տեսնում ենք Սուրբ Սեղանի վրա այնպես, ինչպես էր Գողգոթայի խաչի վրա՝ նույն սիրով և նույն զոհաբերութեամբ։

ՓՈՒՍԱՐԿՈՒՄ-ՍՐԲԱԳՈՐԾՈՒՄ

«Որդի Աստուծոյ, որ պատարագեալ Հօր ի հաշտութիւն...» երգեցողութեան ժամանակ քահանան մասնավոր աղոթքով խնդրում է Աստուծոց, որ իր Հոգու ներգործութեամբ առաջադրված հացն ու գինին փոխակերպի Քրիստոսի Մարմնի և Արյան։ Հետևյալ աղոթքն է ասում.

«Ով Հայր ամենակալ, այս հացն օրհնելով՝ խնդրում ենք, որ մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսի Մարմնի փոխարկես» (Երեք անգամ կրկնվում է)։

«Այս բաժակն օրհնելով՝ խնդրում ենք, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Արյան փոխարկես ստուգապես» (Երեք անգամ կրկնվում է)։

«Նույն ձևով այս հացն ու գինին օրհնելով՝ խնդրում ենք, որ մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Մարմնի և Արյան վերածես՝ փոխարկելով քո Սուրբ Հոգով» (Երեք անգամ կրկնվում է)։

Սրբազործված հացի ու գինու այս հրաշալի փոխարկումով Քրիստոսը ներկա է՝ ոչ թե խորհրդանշական կամ պատկերավոր կերպով, այլ ճշմարտապես և իրապես. այնպես որ հացն ու գինին այլափոխվում են և դառնում Քրիստոսի իսկական Մարմինն ու Արյունը, սակայն՝ հացի ու գինու տեսակով, այսինքն՝ նյութական առումով հացը հաց է մնում, իսկ գինին՝ գինի, իրենց արտաքին ձևերով՝ համով ու հոտով նույնն են մնում։

Բայց արդեն վերածվում են Քրիստոսի Մարմնի ու Արյան, որը հավատացյալները ստանում են իբրև մեղքերի քավութիւն և թողութիւն, ինչպես նաև՝ իբրև հավիտենական կյանքի հոգևոր սնունդ։

Հավատացյալները պետք է սրտանց աղոթեն, որ Սուրբ Հոգին իրենց մեջ իջնի, որպեսզի արժանի լինեն Տիրոջ Մարմնին և Արյունը ճաշակելուն, ինչ պատարագիչն է ասում իր աղոթքի մեջ. «Որպէսզի եղիցի Սա՛ ամենեցուն մեզ մերձեցելոցս...», այսինքն՝ թող սա՛ հացն ու գինին, իր էությունը փոխի ճշմարտապես և ստուգապես, թող դրանք փոխակերպվեն, վերածվեն Քրիստոսի Մարմնի և Արյան, որպեսզի առանց դատապարտության մեզ՝ բոլոր նրան մոտեցողներին համար մեղքերի քավութիւն և թողութիւն լինեն։

\* \* \*

Հացի և գինու Քրիստոսի Մարմնի և Արյան վերածվելը մենք փոխարկում բառով ենք բացատրում, իսկ Կաթողիկե Եկեղեցին՝ գոյափոխութիւն բառով։ Մեր եկեղեցու վարդապետութեան հասկացողութեան համաձայն՝ Սուրբ Հոգին իջնում է և մեզ անհասկանալի եղանակով այս փոխարկումն իրագործում «Որդի Աստուծոյ» շարականի երգեցողութեան ընթացքում, ինչպես վերը տեսանք արդեն։ Փոխարկումից հետո հացը և գինին այլևս Քրիստոսի Մարմնի և Արյան «տիպարները» չեն, այլ՝ Նրա իսկական Մարմինը և Արյունը՝ հացի և գինու տեսակով։ Փոխակերպման այս կերպը մեզ համար միշտ «խորհուրդ խորին և անհաս» պիտի մնա։ Կաթողիկե եկեղեցին ասում է, որ հացի և գինու գոյացութիւնը փոխվում է, բայց նրանց սովորական հատկությունները, այսինքն՝ գույնը, համը և այլն, մնում են նույնը։ Անշուշտ, պետք է ասել, որ ըստ էության մեծ տարբերութիւն չկա մեր և Կաթողիկե Եկեղեցու հասկացողութեան միջև, որովհետև նրանք էլ են ընդունում, որ հացը և գինին վերածվում են Քրիստոսի Մարմնի և Արյան և միայն նրանց արտաքին ձևերն են մնում



նույնը: Տարբերությունը միայն բառերի բացատրությունների և բացատրելու ձևերի մեջ է կայանում:

\* \* \*

Դրանից հետո պատարագիչը ձեռքերը Սկիհից՝ ընծայից ավելի չպետք է բարձրացնի:

Հիմա, երբ կատարվեց զոհաբերությունը, ճիշտ ժամանակն է, որ ժողովուրդն Աստծուն խնդրանքներ ներկայացնի և հիշատակություններ կատարի:

ՍՐԲԵՐԻ ԲԱՐԵՆՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սուրբ Պատարագի կատարման այս ամենասուրբ պահին պատարագիչն սկսում է Եկեղեցու բարեխոսության մեծ աղոթքը, որի մեջ աղոթում է Եկեղեցու բոլոր սրբերի համար՝ սկզբում ցածրաձայն, իսկ հետո բարձրաձայն. «Աստուածածին Սրբոյ Կուսին Մարիամու և ամենայն Սրբոց եղիցի յիշատակ ի սուրբ Պատարագս, աղաչեմք» (Սուրբ Կույս Մարիամ Աստվածածնի և բոլոր սրբերի հիշատակը թող լինի այս Սուրբ Պատարագի մեջ, աղաչում ենք):

Սարկավազը թելադրում է ժողովրդին, որ հիշեն Եկեղեցու սրբերին, առաքյալներին, մարգարեներին, հայրապետներին, առաջնորդներին, Հայ ՈՒղղափառ Եկեղեցու առաջին լուսավորիչներին՝ սուրբ Թադեոս և սուրբ Բարթոլղիմեոս սրբազան առաքյալներին, ապա մինչև մեր օրերի մեծ հայրապետներին, կրոնավորներին, հավատացյալ թագավորներին և բարեպաշտ իշխաններին, վերջապես՝ բոլոր սրբերին, որովհետև նրանք ևս անդամ են և մասնակցում են Եկեղեցու կյանքին: Հետևաբար պարտք ու պատշաճ է նրանց հոգևոր ներկայությունն էլ զգալ համայնական կյանքի այս կարևոր պահին:

Սրբերի հիշատակությունն, ուրեմն, խորհրդանշում է այս աշխարհի «զինվորյալ» և անդրաշխարհի «հաղթական» Եկեղեցիների միությունն ու անբաժանելիությունը: Մենք նրանց

բարեխոսությունը հայցում ենք՝ հավատալով, թե նրանք հիշում են մեզ Աստծո առջև և աղոթում են մեզ համար:

Սա նույնպես շատ կարևոր տեղ է գրավում մեր Եկեղեցու վարդապետության մեջ. այդ պատճառով էլ առանձին ուսումնասիրություն ունենք այս նյութի մասին<sup>14</sup>. ովքեր փափագում են կարող են կարդալ:

Հավատացյալների Պատարագի երկրորդ մասը վերջանում է Տերունական աղոթքով՝ Հայր մերով:

Հայր մերից անմիջապես առաջ քարոզ է տրվում: Սկզբնական շրջանում այս քարոզը տրվում էր ճաշու Ավետարանի ընթերցումից հետո, սակայն այժմ ամեն տեղ տարածված է անմիջապես քարոզելու սովորությունը:

## ԳԼՈՒԽ Ե

### Երրորդ մաս

ՎԵՐԱՅՈՒՄ ԵՎ ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆ

Հայր մերից հետո սկսվում է Սուրբ Պատարագի երրորդ մասը, երբ պատարագիչը արժանավորներին վերացուցանում (վերցնելով ցույց տալ) է Տիրոջ փրկագործության խորհրդի տեսանելի առարկան, այսինքն՝ Մարմինն ու Արյունը, նույնիսկ արդեն ճիշտ կլինի ասել՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսին:

Պատարագիչը բարձրացնում է մատներով բռնած Սուրբ Հացը, որպեսզի ամբողջ ժողովուրդը տեսնի, և բարձր ձայնով ասում է. «Ի սրբութիւն սրբոց»՝ սրբերի սրբության համար, այսինքն՝ Սուրբ Հաղորդությանը հավատով և արժանապես մասնակցողներն են միայն սրբանում:

Սրբություն Սրբոց կոչվում էր Երուսաղեմի հրեական տաճարի խորանի հետևում գտնվող կրկնակի վարագուրված մասը, որի մասին մանրամասն խոսեցինք արդեն (էջ 35):

<sup>14</sup> Վաչե ծայրագույն վարդապետ Իզնատիոսյան, Բարեխոսություն Սրբոց, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1978, Երևան, Մոմ, 1993.

Այսպիսով, ի սրբությունն սրբոց ասելիս, Սկիհը բարձրացնելով և ցույց տալով, պատարագիչն ուզում է ասել, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսը Նա է, որ իր Հոր մոտ է. ինչպես մի ժամանակ քահանայապետն էր Սրբությունն Սրբոց խորանում գառնուկ զոհաբերելուց հետո: Իսկ Սա՝ Աստծո Գառը, մարդկությանը մեղքերից փրկելու համար, ինքն իրեն զոհել ու Հոր մոտ է մտել և հավատով Սուրբ Հաղորդությունն վերցնողներին իր մոտ պիտի ձգի (Հովհաննես ԺԲ 32):

Նույն պահին երգվում է «Միայն Սուրբ, միայն Տէր, Հիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր» մեղեդին:

Այդ միջոցին քահանան նախ ծածուկ սրբագործված նշխարը թաթախում է գինու մեջ՝ ի նշան Քրիստոսի Արյան հեղման մարդկության փրկության համար, իսկ քիչ անց թաթախված նշխարը բարձրացնում է, որպեսզի ժողովուրդը տեսնի՝ դառնալով դեպի արևմուտք և ավելացնելով. «Ի սուրբ, ի սուրբ, պատուական Մարմնոյ և յԱրենէ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի...», որ երկնքից իջած՝ պիտի բաշխվի մեզ: Եկեք ու ճաշակեցեք: Սա է «կյանք, հույս, հարություն, քավություն և մեղքերի թողություն», միաժամանակ հրահանգելով, որ հոգով պատրաստվեն օրհնության և սաղմոս երգեն Աստծուն՝ Երկնավոր Հորը՝ անմահ Թագավորին, որ նստում է քերովբեական կառքերի վրա:

Պատարագիչ քահանան այս խոսքերն ասելիս Սկիհով խաչակնքում է ժողովրդին, որը ծնկի եկած աղոթում է: Հետո շրջվում է դեպի Սուրբ Սեղանը, և վարագույրը փակվում է:

Համաձայն վերջերս ընդունված սովորության՝ այս միջոցին դպիրները և ժողովուրդը «Տեր ողորմեա» են երգում՝ ամեն մեկն իր անձի, ընտանիքի, ազգի կամ համայն աշխարհի համար երկնային և երկրային ողորմություն և բարիք խնդրելով:

Այնուհետև երգում են դպիրները.

«Օրհնեալ է Աստուած. Քրիստոս պատարագեալ բաշխի ի միջի մերում, ալելուիա»: Իր Մարմինը տալիս է մեզ իբրև կերակուր և իր սուրբ Արյունը ցողում է մեր մեջ, ալելուիա: Ճաշակեցեք և տեսեք՝ ինչքան քաղցր է Տերը, ալելուիա: Օրհ-

նեցեք Տիրոջը երկնքում, ալելուիա: Օրհնեցեք նրան բարձունքներում, ալելուիա: Օրհնեցեք նրան, նրա բոլոր հրեշտակներ, ալելուիա: Օրհնեցեք նրան, նրա բոլոր զորություններ, ալելուիա:

Այս ընթացքում պատարագիչը, ծածուկ աղոթելով, ընծան (հացը) ամբողջությամբ Սուրբ Սկիհի գինու մեջ թաթախում, բաժանում է չորս մասի և թողնում Սկիհի մեջ՝ ասելով. «Լրումն Հոգւոյն Սրբոյ», այսինքն՝ Սուրբ Հոգու կատարումը:

Այս պահին պատարագիչը սրտագին աղոթում է իր անձի, ընտանիքի, Եկեղեցու, ազգի և աշխարհի խաղաղության համար: Նաև կարդում է Հովհան Ոսկեբերանի մեկ աղոթքը, որով նույն խնդրանքներն է ուղղում Աստծուն՝ լինի իր անձի, լինի հավատացյալ ժողովրդի համար:

ՃԱՇԱԿՈՒՄ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Այս աղոթքից հետո, մինչ դեռևս վարագույրը փակ է, պատարագիչը Սուրբ Մարմնից մի մաս է ճաշակում՝ ասելով. «Հավատով ճաշակում եմ քո սուրբ և կենդանարար և փրկագործ Մարմինը, ով Քրիստոս Աստված իմ՝ Հիսուս, իմ մեղքերին թողություն լինելու համար»:

«Հավատով ըմպում եմ քո սրբացնող ու մաքրող Արյունը, ով իմ Աստված՝ Հիսուս, իմ մեղքերին թողություն լինելու համար»:

Իսկ Սուրբ Հաղորդություն վերցնելուց հետո ասում է. «Քո անապական Մարմինը թող նոր կյանք տա ինձ և քո սուրբ Արյունը՝ մեղքերի թողություն և քավություն»:

Պատարագամատույցի խրատն է ասում.

«Եւ սարկավագն հաղորդեսցի»: Այստեղ հիշված սարկավագը նա է, ով վերաբերում է կատարում, քահանայի մոտ է մտնում և օգնում է նրան սրբազան արարողությունները կատարելիս. այսքան սրբություններին մոտենալու պատճառով պահանջվում է, որ նա ևս քահանայի նման ինքն իրեն պատրաստի խոստովանությամբ և ապաշխարությամբ: Եվ քանի

որ արարողութեան մի մասն ինքն է կատարում, պետք է նա էլ հաղորդվի: Դժբախտաբար, այս օրերը նույնպես դադարել է երկար ժամանակ ի վեր: Սակայն հույներն այն մինչև այժմ խստիվ պահպանել են:

Սրանից հետո սարկավագը, վարագույրը բացելով, բարձրաձայն ասում է ժողովրդին. «Երկիւղիւ և հաւատով յառաջ մատիք և սրբութեամբ հաղորդեցարուք»: Թարգմանութիւն. «Երկյուղով և հավատով առաջ եկեք և սրբութեամբ հաղորդվեցեք»:

Վերջապես գալիս է հաղորդութեան պահը, երբ Քրիստոսը բաշխվում է հավատացյալներին՝ առանց սպառվելու (անծախապես): Հավատացյալներն իրենց զգում են իրենց Տիրոջ հետ. այս միացումը քրիստոնեական կյանքի գերագույն նպատակն ու սրբազնագույն վայրկյանն է. հավատացյալները շատ լուրջ պատրաստութեամբ պետք է մոտենան նրան: Ժողովրդի միջից Հաղորդութեան համար պատրաստ եղողները ուղղվում են դեպի բեմ:

Քահանան, Սկիհը ձեռքին, առաջանում է դեպի բեմի եզերքը, ծնկի գալիս և Արյունով թաթախված Սուրբ Հացից մի կտոր վերցնելով՝ հավատացյալի լեզվին է դնում՝ ասելով. «Սա եղիցի ի քառութիւն և ի թողութիւն մեղաց քոց»: Կամ՝ «Մարմին և Արիւն Քրիստոսի եղիցի քեզ ի կեանս» (Քրիստոսի Մարմինն ու Արյունը թող քեզ կյանք լինի): Հավատացյալը Սրբութիւնը կարող է կուլ տալ առանց ծամելու՝ այն հավատով, որ իրապես սրբութիւն ընդունեց իր մարմնի և հոգու մեջ, մի բան Քրիստոսի էութիւնից, աստվածային զորութիւններից:

Արդեն ասացինք, որ Սուրբ Պատարագի ամբողջ խորհուրդը Հիսուսի գոհաբերութեան հիշատակութեան գաղափարն է: Սուրբ Հաղորդութեան խորհրդով այդ գաղափարը հասնում է իր ամբողջականացմանը:

Ճիշտ այդ պատճառով էր, որ նախկին դարերում Եկեղեցու բոլոր հավատացյալները, բարձրաստիճան եկեղեցականից սկսած մինչև ամենաաննշան հավատացյալը, հաղորդվում էին

ամեն Սուրբ Պատարագի ժամանակ: Որովհետև Սուրբ Պատարագը երկու գլխավոր նպատակ ունի՝ երկրպագութիւն Քրիստոսին, այսինքն՝ Պատարագի արարողութիւնը, և հաղորդութիւն Քրիստոսով. այդ պատճառով ամեն հավատացյալ, եթե մասնավոր արգելք չունի, պետք է հաղորդվի, որպեսզի Սուրբ Պատարագի իմաստը իր բուն նպատակին հասնի:

Սրբութիւնն ճաշակելուց հետո հավատացյալը ինքն իրեն ամբողջովին վերացած, Աստվածութեանը մտերմորեն մոտեցած է զգում. ավելին՝ այդ Աստվածութեան հայտնութիւնն ու ներկայութիւնն է իր մեջ տեսնում հոգու ազգերով, այդ պատճառով էլ դպիրների հետ միասին երկյուղով և ուրախութեան հուզումով բացականչում է. «Աստուած մեր և Տէր մեր երևեցաւ մեզ, օրհնեալ եկեալ անուամբ Տեառն» (Մեր Տեր Աստվածը և մեր Տերը երևաց մեզ, օրհնյալ է Տիրոջ անունով եկողը):

Քահանան դեռ գտնվում է բեմի եզերքում՝ Սկիհը ձեռքին, այնուհետև Սկիհը մի քիչ վեր է բարձրացնում և ժողովրդին օրհնելով՝ ասում.

«Կեցո, Տէր, զժողովուրդս Քո...»: Թարգմանութիւն. «Ով Տեր, ապրեցրու քո այս ժողովրդին և օրհնիր քո ժառանգութիւնը (չէ՞ որ հավատացյալները Քրիստոսի ժառանգներն են (Գաղատացիս Դ 7), հովվիր և բարձրացրու նրանց այսուհետև մինչև հավիտյան»:

Հետո պատարագիչը շրջվում է դեպի Սեղանը և Սուրբ Խորհուրդը բազմեցնում Սեղանի վրա: Վարագույրը քաշվում է:

Այս պահին կամ ավելի ուշ՝ Եկեղեցուց հեռանալիս, ժողովրդին մաս է բաժանվում, որ բաղարջ հաց (Սուրբ Սեղանի փշրանք) է, որպեսզի բոլոր հավատացյալներն այդ կերպ ընդհանուր Սեղանին մասնակցած լինեն և նրանից մաս ու բաժին ունենան: Մասից վերցնում են նաև հիվանդներին կամ այլ պատճառներով Եկեղեցուց բացակայած հավատացյալներին տալու համար: Նշխարն էլ նույն իմաստն ունի:

Իսկ դպիրներն ու ժողովուրդը գոհունակութեան երջանիկ զգացումով երգում են. «Լցաք ի բարութեանց Քոց, Տէր...»:

Այսինքն՝ Քո բարիքներով լցվեցինք, Տեր, Մարմինն ու Արյունը ճաշակելով. փառք բարձունքներում՝ մեզ կերակրողիդ, որ միշտ կերակրում ես մեզ: Ուղարկիր մեզ քո հոգևոր օրհնությունը. փառք բարձունքներում՝ մեզ կերակրողիդ:

### ԳՈՀՈՒԹՅԱՆ ԱՂՈԹՔ

Պատարագիչ քահանան Սկիհի մեջ մնացած Մարմինն ու Արյունն էլ է ճաշակում, Սկիհը մաքրում է, սրբում և սքողում՝ ծածուկ հետևյալ գոհաբանական աղոթքն ասելով.

«Շնորհակալ ենք, Հա՛յր ամենակալ, որ պատրաստեցիր սրբություն տաճար սուրբ Եկեղեցին՝ մեզ համար նավահանգիստ լինելու, որտեղ փառաբանվում է Ամենասուրբ Երրորդությունը, ալելուիա:

Շնորհակալ ենք Քեզանից, Թագավո՛ր Քրիստոս, որ կյանք տվող սուրբ Մարմնովդ ու Արյունովդ կենդանություն պարգևեցիր մեզ. շնորհիր մեղքի քավություն և մեծ ողորմություն, ալելուիա:

Շնորհակալ ենք Քեզանից, Ճշմարիտ Հոգի, որ նորոգեցիր կենդանի սուրբ Եկեղեցիդ, անարատ պահիր նրան Երրորդությունդ հավատով այսուհետև մինչև հավիտյան, ալելուիա»:

«Լցաք» երգից հետո սարկավազը ժողովրդին հրավիրում է գոհունակություն գագցում հայտնելու՝ սուրբ և անապական խորհուրդը հավատով ճաշակած լինելու համար:

Դպիրները դարձյալ ձայն են տալիս՝ երգելով.

«Գոհանամք զՔէն, Տէր...»: Թարգմանություն. «Գոհություն ենք մատուցում Քեզ, ո՛վ Տեր, որ քո անմահական Սեղանից կերակրեցիր մեզ՝ քո Մարմինն ու Արյունը բաշխելով աշխարհին փրկություն և մեր անձերին կյանք լինելու համար»:

Պատարագիչը, գոհության աղոթք ասելուց հետո, դարձյալ լվանում է ձեռքերը, սաղավարտը դնում է գլխին, եթե վարդապետ կամ եպիսկոպոս է, դնում է նաև իր խաչն ու եպիսկոպոսական պանակեն և այլն:

Քահանան խորանի վրա իր վերջին աղոթքն է անում. «Որ օրհնես զայնոսիկ, որք օրհնեն զՔեզ, Տէր...»: Սա Հովհան Ոսկեբերան հայրապետի (347-407) խմբագրած աղոթքներից մեկն է, որ շատ սիրված է մեր ժողովրդի կողմից, և որն իբրև վերջին խնդրանք պատարագիչ քահանան ուղղում է Աստծուն: Թարգմանություն. «Ո՛վ Տեր, Դու, որ օրհնում ես քեզ օրհնողներին, Դու, որ սրբացնում ես քեզ հուսացողներին:

Ապրեցրու քո ժողովրդին և օրհնիր քո ժառանգությունը: Պահպանիր քո Եկեղեցու ամբողջությունը: Սրբիր նրանց, ովքեր սիրով ողջունեցին քո Տան վայելչությունը: Փառավորիր մեզ քո աստվածային զորությունքով և մի՛ լքիր քեզ հուսացողներին:

Խաղաղություն պարգևիր ամբողջ աշխարհին, Եկեղեցիներին, քահանաներին, քրիստոնյա թագավորներին, հայրապետներին և հայոց ազգի Հանրապետությանը, նրա զինվորյալ երիտասարդներին ու ամբողջ ժողովրդին:

Որովհետև բոլոր բարի տուրքերն ու բոլոր կատարյալ պարգևները վերևից են իջել՝ Քեզանից, որ լույսի Հայր ես, և Քեզ վայելում է փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն» (Հակոբոս Ա 17):

Այս աղոթքը վերջացնելով՝ պատարագիչը, Սուրբ Ավետարանը ձեռքին, բեմից իջնում է ներքև, մինչ դպիրները երգում են. «Եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմհետէ մինչև յաւիտեան» (երեք անգամ): Թարգմանություն. «Տիրոջ անունն օրհնյալ լինի այսուհետև մինչև հավիտյան»:

Իսկ քահանան, որ այժմ եկել է դասի մեջ, դեմքը խորանին է դարձնում ու աղոթում. «Կատարումն օրինաց»: Թարգմանություն. «Օրենքների ու մարգարեների լրացնողը Դու ես, ո՛վ Քրիստոս Աստված՝ մեր Փրկիչ, որ Հորդ կամեցած բոլոր տնօրինությունները լիուլի կատարեցիր, մեզ նույնպես լցրու Սուրբ Հոգովդ»:

Բուն Պատարագի խորհուրդն արդեն վերջացել է, սակայն

աստվածային այս արարողությունը Ավետարանի խոսքով վերջացնելը կարծես հոգեկան անհրաժեշտություն է դառնում:

Ահա հենց այդ պատճառով այս պահին սովորաբար կարդացվում են Հովհաննեսի Ավետարանի Ա գլխի 1-14 համարները:

Պետք է ասել, որ Ավետարանի այս ընթերցումը վերջերս ընդունված հավելում է, որը, սակայն, մեր Հայ Եկեղեցու հայրապետների կողմից է նվիրագործված: Ընթերցված հատվածը կապված է խորհրդի հետ, մասնավորապես այն համարը, որտեղ ասվում է. «Եվ Բանը մարմին եղավ ու մեր մեջ բնակվեց» (Հովհաննես Ա 14):

Ավետարանի վերջում սարկավազը «Սուրբ խաչիւս» քարոզն է կարդում, և ապա պատարագիչն ասում է՝ օրհնելով. «Ո՛վ մեր Քրիստոս Աստված, պահպանիր մեզ քո պատվական խաչի հովանու տակ. փրկիր, ազատիր մեզ երևելի և աներևույթ թշնամուց: Արժանի արա մեզ երախտագիտություն մե փառավորելու Քեզ, Հորդ և Սուրբ Հոգուդ հետ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն»:

Դպիրներն ասում են. «Ամեն ժամ պիտի օրհնեմ Տիրոջը, ամեն ժամ իմ բերանը պիտի խոսի նրա օրհնությունը» (Սաղմոս ԼԴ 1):

Պատարագիչը, օրհնելով, խաղաղություն մե արձակում է ներկա հավատացյալներին. «Օրհնեալ եղերուք ի շնորհաց...»:

Այս պահին նրանք, ովքեր փափագում են համբուրել Սուրբ Ավետարանը, մոտենում են և հավատով համբուրում «Մեղա Աստծո» ասելով, որին պատարագիչը պատասխանում է. «Տերը թող քեզ տա քո սրտի համեմատ, և քո բոլոր բարի խորհուրդները թող ինքը կատարի, ամեն»:

Ավարտին պատարագիչը շրջվում է դեպի խորան և երեք անգամ երկրպագություն անում Սուրբ Սեղանի առջև՝ ասելով. «Տեր Հիսուս Աստված, ողորմիր ինձ»:

Այնուհետև ավանդատուն մտնելով՝ Պատարագի զգեստները հանում է վրայից՝ ասելով. «Սուրբ Գրիգոր Նարեկացու գորավոր աղոթքը» (Նարեկ, Բան ԽԳ):

«Որդի Աստուծոյ կենդանւոյ Հորդ ահաւորի... ամէն»:

Վաչե Ծայրագույն Վարդապետ Իգնատիոսյան

Հարույթյուն Իգնատիոսյանը ծնվել է 1939թ. հունվարի 20-ին, Բեյրութում: 1954 թ. ընդունվում է Կիլիկիո կաթողիկոսարանի դպրեվանքը (Անթիլիաս, Լիբանան): Չորս տարի ուսանելուց հետո, 1958 թ. մեկնում է սովորելու Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց պատրիարքարանի Ընծայարանի բաժնում: 1961 թ. հոկտեմբերի 1-ին Եղիշե Պատրիարքի ձեռքով, ձեռնադրվում է կուսակրոն քահանա՝ ստանալով Վաչե Աբեղա անունը: 1966 թ. մեկնում է Փարիզ՝ խորացնելու իր գիտելիքները աստվածաբանության և հայրաբանության մեջ: Ընդունվում է Կաթողիկական ինստիտուտ, ուր ուսանում է մինչև 1969 թ.՝ ստանալով ավարտական դիպլոմ: Հովվական պաշտոնի բերումով ուղարկվում է Մարսել քաղաքի Սբ. Թադեոս և Բարթողղիմեոս հայաշատ եկեղեցին: 1977 թ. Երուսաղեմի Պատրիարքի ձեռքով ստանում է Ծայրագույն Վարդապետի աստիճան:

Հեղինակ է բազմաթիվ ջատագովական և աստվածաբանական գրքերի, որոնց թվում են «Բարեխոսություն Սրբոց», «Մեր Սուրբ Պատարագը», «Հայկական մանրանկարչություն և Թորոս Ռոսլին»: Այս գրքերից շատերը թարգմանվել են անգլերեն, ֆրանսերեն և ռուսերեն լեզուներով:

Վաչե Ծ. Վրդ. Իգնատիոսյան